



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

# ՀԱՐԹՈՂ ԳՅՈՒՂ

(ՊԵՏԱԿԱՆ-ՔՆԵՐԻ ԺՈՂՈՎ. ԱԽ)



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.

ԵՐԵՎԱՆ 1930

Exhibit of evidence

MAILED FROM NEW YORK CITY



Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

# ԶԵՐԹՆՈՂ ԳՅՈՒՂԸ

(ՊԱՏՄՎԱՃՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԺՈՒ)

A 38/68



Հ. Ա 1331.

Դրառեպվար Ա 5260 (բ).

Տիրած 3000.

Պետհասի առաջին տպարան Վաղարշապատ  
Գումիկ Ա 97.

ԶԱՐԹՆՈՂ ԳՅՈՒՂԵ



## Վ Լ Ա Ս Ը

Չոփուռանց Ակոփի տղա—չոփուռ Խեչանը, հենց վոր զին-  
վարական ծառայությունից վերադարձավ, իսկուն ստրաժնիկ  
դառավի:

Ստրաժնիկ դառավ-չդառավ, դամշին առած քյասիբ գլու-  
ղացիների ջանին ընկավ, ու քյոխվա-քենդիսուղաներին թև ու  
թիկունք դառած՝ սրան-նրան սկսեց երել-խրովել ու դամշու տա-  
կին չօրացնել, եռո եր, թե բեգյառ, խարջ եր, թե պարտք, խեղճ  
մարդու վղիցն եր հանում:

Չոփուռ Խեչան չդառավ նրանց գլխին, այլ կրակ ու փոր-  
ձանը:

Խեչան...

Ի՞նչ Խեչան... Նա դառել եր Խրիստափոր Յակուլիչ, վորի  
«թրի տռաշն ել եր կտրում, յետն եր»: Նրա սուտը պրիստավի  
ու մեծ դիվանի առաջ-զորթից ել դորթ եր:

Մի հալա շենք ու շնորհքին մտիկ արեք, շենք ու շնորհքին  
ու արարքներին:

Բոլը—կարճ, մեջքը—կուզիկ, գլուխը—մեծ, աչքերը—մանր,  
շարժուն ու խորածանկ, գեմքը ծաղկատար, չեչոտ, կասես մըկ-  
նակեր հացի լերես լիներ—կրծկրծորած, դար ու փոս, մուկը կե-  
րած արտի պես՝ տեղ-տեղ մազ բուսած: Բա նրա դեղին ու փայ-  
լուն կոճակները, զառով կարած պագոնները, կողքին կախ ըն-  
կած ու գնտնին քաշ եկող թուրը, լին չեքմեքն ու փափախի  
ճակատին կպցրած—լեզան աչքի չտփ կոկարդը...

Ու ես խլեզի չափ լզար մարդը, վոր մի գյուղի ծալրի գուրս  
եր գալի, լեղաճաք ելած գյուղացիք հենց ելին գիտում, թե մի  
ոխտը գլխանի հարամի լուս ընկավ:

— Ձեր տունը քանդվի, հրեն չոփուռի տղեն դալիս ա, տե-  
նաս ի՞նչ վայ ա բերում մեր գլխին,—ասում ելին գյուղացիք:

— ԽԵ՞ յեք ըտհենց ասում, բա՛լքի խեր բանի համար ա գաղի, — սաստում եր քլոխվեն:

— Խերը նըանի՞ց... Չոփուռ Խեչանիցը — խենը... Ասենք, դե քլոխվա ջան, խերը ընհենց բան ա, վոր մեկի համար խեր ա ըլում, մեկի համար — շառ: Դե բալքի քեզ համար խեր մ...

— Քամին խաբար կտանի, կիմանա, միսներդ կկտըի ըերաններիդ դեմ կանի. ետ մոր ծիծ կտրողի մասին խոսալ միք: Հո տենում եք որենքը — նրա դոլին ա, ինչքան գանգատ եք անըմ, նրան դիա ավելի թևեր ա տալի: Թե կարում եք՝ աշքը ձեզ վրա քաղցրացրեք, թե չե հու... ձեններդ կտրեցնք, — ասում ելին ավելի խոհեմները:

Մեծ բուռտի տարին<sup>1</sup>, յերք գլուղ ու քաղաք խառնվել երիրար, չոփուռ Խեչանը շատերի տները քանդեց, վորի համար նաչալնիկը նրա դոշին մի մեղալ կախ տվեց ու ոռճիկով քլոխվա նշանակեց:

— Ե հե՞ ա խալիս... խելքներդ թհի արեք, թոփ, գուշ հենց ելիք գիտում, թե թախավորը թախտիցն ընկամալվ... Հենց ելիք գիտում, թե ել վլաստ չկմ... Հըսես ե... Վլաստը յես եմ, յես... Վլաստն ես դամշին ա ու ես յումբուղը...

Ցեվ քլոխվա Խեչանը, վորի անունը գլուղացիք Վլաստ ելին որել, ել ավելի կատաղած, ել ավելի գաղաղած — սկսեց ձնշել գլուղացիներին:

Նրա հին, գետնափոր տան տեղը հիմի մի յերկհարկանի քարաշեն տուն եր կանգնած, գլուխը «կարմիր ժեղտով» ծածկած, իսկ պրիստավին ու նաչալնիկը նրա մշտական հյուրերն ելին:

Հո մենակ ինքը չեր վլաստ. նրա տղեն ել եր վլաստ, նրա շունն ել, կատուն ել, Ռ՞վ կհամարձակվեր նրա յեղան ու կովի քեֆին դիալի, կամ նրա հավին քէշ անի, եշին — թող ասի... Խի, վլաստը — մեռել եր...

Գլուղացիք սրաամորմոք խուլ հառաչում ելին.—

— Ախ... Յարաք են ինչ որ կլինի, վոր ես վլաստի չուլը փորի տակն ընկած տենանք... Յարաք ետ որը կգման...

Ու ետ որը — յեկավ:

— Հեղափոխութիւնն... հեղափոխութիւնն... Իշխանութիւննը հիմի բանվորների ու գլուղացիների ձեռքին ես... Կորչեն քլոխվեն, պրիստավին ու աղալարները...

Եսպես ցնծութլամբ ու աղմուկով մի քանի բանվորներ լեզան Բագվից, վորոնց միացան քլոխվա Խեչանի ձեռով բանտարկված ու աղատված տղանելը:

Դլուզն իրար անցավ:

— Վմբրտեղ ա վլաստը, վլաստը վմբրտեղ ա, բերեք դատաստանն անենք...

Վլաստին բռնեցին:

Ուզեցին տեղն ու տեղը սպանեն, բայց մեկ ել վորոշեցին բանտարկեն:

Վլաստին—գոմը գցեցին:

Տունը—տուան, Մի մասում ունկոմն ու լաչելկեն եր, մլուս մասում—ժողովների տեղն ու գլուղի ընթերցարանը:

— Վլամաստ... քեֆդ վրնց ա, վլամաստ...—հարցնում ելին գոմի մոտով անցնողները:

— Վլամաստ... Տեղդ ցուրտ ա, թե տաք...

— Վլամաստ... Քեֆդ թե խարաք ա, գրամաֆոնդ դարկենք մի քիչ ածա, իշխ զոռոց զահլեղ տարած կըլի...

Մի շաբաթից հետո Վլաստին ուղարկեցին կենարոն, վորանեղից ալիև չվերադարձավ:

Բայց մինչև որս ել—գլուղացիք Վլաստի գոմի մոտից անցնելիս, ամեն անգամ կունում են ու աղբածակից հարցնում.—

— Վլամաստ... Տեղդ տաք ա...

— Վլամաստ... Վմբրտեղ ես, Վլամաստ...

1923 թ.

## ԿԱՊԻՏԱԼԸ

### I.

Յերեկ առավոտուան սենյակիս դուռը լայն բանալով՝ ներս  
ընկավ բարձրահասակ, թիկնավետ, մեծ փափախով, խուզինն ու-  
սին, մահակը ձեռին մի աժդահա տղամարդ։ Առաջին հայացքից  
չճանաչեցի, բայց մին ել բըդոտած դեմքի վրա փալող խոշոր ու  
սև աչքերը մատնեցին ով լինելը։

— Ո՞հ, Գասպար ջան, ետ դու լի՞ս... այ, բարով, հազար  
բարի յես եկել։

Հուզված գրկեցինք իրար։

### II

Մանկությանս ընկերն եր Գասպարը. աշխույժ, ընդունակ,  
բարեսիրո ու ընկերասեր։ Վարժապետը վկալում եր, թե նա շատ  
խելոք մարդ կդառնա—յեթե ուսումը շարունակի, Բայց դե ասած  
ե, թե՝ «աղքատին մվ կտա արքալություն»... Ենդես ել մնաց  
դյուղում, չորան դարձավ, հետո յել ամուսնացավ, տուն ու տեղ  
դառավ, կպավ հալալ հողին ու աշխատանքին, յեղավ խոփի ու  
մածի անբաժան ախպեր։

Վաղուց, շատ վաղուց եր, չելի տեսել Գասպարին. յես քա-  
ղաքում, նա դյուղում. իրարից հեռու, իրարից կտրված...

### III

— Բա հենց գիդաս, թե քեզ մտահան եմ արեմ!...—Աչքերը  
ջրակալած ու ղբնած, կոկորդը սեղմելով ասաց Գասպարը։

— Ետ դաւք եք, դուք, քաղաքը մն ապրողնիդ, քաղքցիք եք  
անջիգլար. մեղ—գեղացիներիս մտահան եք անըմ. ըսկի լայեղ ել  
ա չեք անըմ, թե կնդը դաք... Ետ խի չես ել երեխա վախտիդ պես

ամառներն ելա գեղը գալի, հիւ իրար ել ա տեսանք... Յանի  
վախըմ ևս տանը մի թիքա հաց չի ճարվի, թե հիւ սարըմը մի  
աման կաթը, յա մածուն...

— Դե ի՞նչ ասեմ, Գասպար ջան, չե թե լայեղ չենք անում,  
այլ ժամանակն ու հանգամանքները չեն ներում. լավ վոր դու  
ել ա յեկել ես, միտտ ես բերել Ասա մի տեսնեմ, խեր ըլի գալը,  
ի՞նչ բան ունես, տուն ու տեղդ վժնց են, հո հիշանդ չունես,  
կամ ի՞նքդ հո հիշանդ չես...

— Զե, քե մատաղ, սաղոսալամաթ ենք. ընհենց մի բան  
ել չունեմ, Կալ ու կուտս հավաքել պրծել եմ, ապրանքս ել տե-  
ղավորել. ասեցի գամ համ քեզ տեսնամ, համ մի քիչ խուրդավաթ  
բաներ առնեմ տան հմար, համ ել... համ ել... մի բան պտեմ  
հարցնիլ, ամա վրես ծիծաղես վոչ:

— Ել ի՞նչու պիտի ծիծաղեմ վոր... ասա տեսնեմ ետ ի՞նչ  
բան ա:

— Են ա վոր... քե մատաղ, դու ըլիս են իրար հետ կերած  
աղ ու հացը, ի՞նձ մի հասկացրու տեսնամ, թե ի՞նչ բան ա, յա թե  
ետ ի՞նչ ջանավար ա կապիտալը.—հարցրեց Գասպարն ու ենպես  
շեշտեց կապիտալ բառը, վոր չսխալի:

— Ասենք...—ծոր տալով շարունակեց նա.—լիս սալդա-  
թութին արած մարդ եմ, գիրում եմ, թե կապիտանն ի՞նչ ա. մեր  
կապիտանն ել շատ փիս մարդ եր, համա կապիտալ ասածդ  
գիդըմ չեմ ով ա, յա ի՞նչ ա... Իու քաղքումն ապրած, ուսում-  
նական մարդ ես, կգիդաս, համ ել դու մեր լիզվով կասես—կհաս-  
կանամ...

#### IV

Զարմացած նայում ելի Գասպարին. Նրա շենք ու շնորհքին,  
ձեռի մահակին ու մտածում, թե ի՞նչ կապ ունի իմ չորբան ու  
ուանչպար Գասպարը—կապիտալի հետ. կամ ի՞նչու նա ետքան  
անհանգստանում ե նրա մասին մտածելով, կամ թե վմբառելից ե  
լսել նա կապիտալ «ջանավարի» մասին...

— Գասպար ջան, դու մի ի՞նձ մսա, թե ետ վմբառել ես  
լսել կապիտալի մասին, կամ ի՞նչպես ես լսել...—հարց տվի լիս:

— Թե մատաղ. մի ժամանակ մեր գեղերը շատ օրջիկ մար-  
դիկ ին ման գալի ու քարոզում ին, թե մեր, հայերիս անբախ-  
տութենի պատճառը Ոսմանլի թուրքերն են. մեզ քարոզում ին,  
վոր գենք առնենք ու գնանք նրանց վրա կոիվ: Դե

հու են ել ես գիդում, թե եղ բանի վերջը ինչ դուս եկավ-  
կուիվ, արինհեղութին ու հայաստանցի գաղթական... Հիմի լել  
նոր-նոր ջահելնի լեն գալի գեղերը, ու լեկողն ել հլե ետ կապի-  
տալի մասին ախուզմ: Ասըմ են, թե ես աշխարհի ամեն մի նե-  
ղութեն, ցավ ու չոռ դիվ ետ կապիտալն ա անըմ, ու թե վոր  
նա ըլի վեչ հա, աշխարհս կդինջանա, մարդիկ լավ կապրեն,  
հարուստ ու աղքատ միահավասար կըլեն, ել կոկվ ու կոտորած  
չի ըլի, ամեն մինն իրան հալալ աշխատանքին կըլի, կոռ ու  
բեզյառը կվերանա... Մի որ ետ քարոզողներից մնին հարցրի,  
թե վժրդի ա ետ կապիտալը, բա կարալ չՅ՞նք մի երես առ  
երես տենմանք...

— Նմ ինչ պատասխանեց:

— Հսկի: Ասեց թե կապիտալը գեղումն ըլիլ չի. նա քաղ-  
քումն ա. ով վոր ուզում ա տենա, պետք ա քաղաք գնա: Դե  
հիմի նս ա հազիր եկել եմ. քե մատաղ, մի շանց տու տենամ ետ  
վհնց ջանավար ա. լանի կարող չեմ ոեխ-մոեխը մի ջարդեմ,  
փշրեմ, բալքի աշխարհս ետ ցավիցն ազատվի՞...

## V

Խեղճ իմ Գասպար... Մահակն առել, լեկել ե, թե քաղաքում  
կապիտալ «ջանավարին» գտնի ու գլուխը ջարդի, վորմարդկու-  
թյունն աղատի ետ աղետից...

Աչքերն ենպես ելին փայլում, ձեռն ու վոտն ենպես ելին  
դողում, վոր կարծես հարձակման դիմելիս լիներ...

Բացատրեցի, հասկացրի Գասպարին, թե ինչ բան և կա-  
պիտալը, ու լերը վերջացրի խոսքս, նա մի խոր հոգոց քաշեց  
ու հոնքերը կիտած, գլուխը շարժելով ասաց.—

— Պա հո... մգլար ըտհե բան ա կապիտալը...

Հո... մենակ մի Գասպարով գրա գլուխը չի ջարդվիլ...

1922 թ.

## ՍՊԵՑ ԱՎԱԳԸ

### I

Զարչի ւեր ավագը. սրամիտ ու կատակարան. միշտ ուրախ ու շարժուն. թե վոր դուքանը մտնելիր, թե կուզ հենց ենպես, առանց բան առնելու մտքի, ենքան կզովեր իր ապրանքը, վոր անպատճառ մի փառած բան կսաղացներ վրադ:

— Տնր, ախպեր, տմր. քեզ բան եմ ասում. վերջը կփոշմանես, ես դաւդի բան-զագրանիցա յել չի ճարվիլ. տես ե, տես ինչ ապրանք ա. թամամ պերվի սորտի բրակ ա... թե փող չունես, ջանդ սաղ ըլի, հետո կտաս, ու չես քոչում... Ապրանքը վոր եստեղ վեր ընկած կենա, ոո ճուտ չի հանի... Բա, յես սաղ ըլիմ, ապրանքս դարսած, դու տկլոր կենանս, յա կարիքի մեջ... Ի՞ն, բա ել վմր որվա հարևանն ենք... Հավից-ձվից կտա՛ս, թե յեղից, պանրից, յա ցորնից, գարուց, ինձ համար մին ա. տա՛ր, տա՛ր քեզ ասում հմ. միրուքս վկա, առքի գնով եմ տալի. դու հենց գիտես ուրիշի կտմամմ. ես ապրանքը քեզ ա լայաղական, քեզ, քու շիմշատ բոյ ու բուսաթին սազ կգա. բա ես շաքարը, ես գլուխ շաքարը, հլա մտիկ, տես, ոլիղակը վրեն հուրիրատին ա տալի, ինգլիդ ա, ի՞նգլիդ. ատամ պտի վոր սրան կոտրի, մի կտորով ոխտը հոգի չայ կիմմեք, ու կտորը հալա տեղը սաղ սալամաթ. կուզես չորացրու, ել յետ տեղը դի. մարմար քար ա, մարմար քմր... Բա ես աղը. Հնդստանի աղ ա, մի պտղունց վոր չարխի պղնձի մեջ գցես, մի փթի համ կտա: Յես հու պռաստոյ չարչի չեմ, պերվի գիլդի կուզեցի ապրանք եմ պահում, ամեն չեշիդ, ամեն ռանդ...

Ու Ավագն ենքան եր գովում թե իր ապրանքը, թե՝ մուշտարուն, վոր ել պըծնելու ճար, ազատվելու հնար չկար: Խոսելու հետ մեկտեղ, մուշտարուն չամչից, խուրմից տալիս եր, վոր ըերանը քաղցրացնի, ու թե առուտուրը մեծ եր, մի գլխի աղլուսի մեջ կապում եր ու աղլուխն ել փեշքեց անում:

Սաղ գլուղը ձեռքն եր առել, բոլորին ապառիկ ապրանք  
բաց թողել, ու կապել եր դուքանին: Ով ել վոր ուզեց, թե փորձ  
անի, ինքն ել դուքան բաց անի, Ավագի ձեռից կոտը ընկավ,  
ելած-չելած հավաքեց, ծախեց, պարտքին տվեց ու ելի իր քար  
ու փետի յետեկից ընկավ: Մինչդեռ ավագը մի տան տեղ առավ,  
ու են վոր առուն գլուղը յերկու մասի յե բաժանում, միակ կա-  
մրջի մոտ, մեծ ճամբի տակին նոր տուն ու դուքան շինեց,  
գլուխը կարմիր ժեշտով ծածկեց, ու նոր դուքանում նստած  
իրեն հնարած յերգն եր յերգում, Քյոռողլու յեղանակով:—

«Ինձ ասում են չարչի, չարչի,  
ասեք աենամ, չարչին մարդ չի...  
Չարչի Ավագը վոր չըլի,  
ել մարդու տան լիս կկառչի...»

Նոթս—Բագու քաղքից, խալիս,  
ճոթս—Մարզողովն ա տալիս,  
շահին շինել եմ բաղմանչի,  
վոր չմնամ առանց չամչի»...

Ջմեռը նրա դուքանը կատարյալ հարսանքատուն եր: Լցվում  
ելին գլուղացիք ու խոսում գլուղի խեր ու շառից: յերբեմն ել  
տաքացած վիճում: Ավագը նման դեպքերում միշտ չեղոք դիրք  
եր բռնում, ամենքի տասածին ել հավանություն տալիս: իսկ թե  
պատահում եր, վոր վեճը սուր կերպարանք եր ստանում, նա մի  
սրամիտ առակ կամ անհեղոտ եր պատմում, ծիծաղեցնում, վեճն  
ու կրիվը քանդում, վոր իր խանություն անհամություն չծագի,  
մուշտարիները չնեղանան, չխրտնեն դուքանից:

Շատ անգամ նեղացած կողմերին կանչում եր իր տուն,  
հյուրասիրում, հաշտեցնում: Նա շատ անգամ բարեխոս եր լի-  
նում քըսիվի կամ դատավորի առաջ: յերաշխավոր կանգնում,  
և նման ձեռքով ու միջոցներով՝ ել ավելի ամրացնում իր դիրքն  
ու պատիվը: Ջմեռվա յերկար գիշերներին նրա ճրագը միշտ  
վառ եր: այնտեղ ելին գլուղի մեծամեծները, վորոնք աշխարհի  
բախտն ելին վորոշում, և այդ «բախտը վորոշողներից» մեկն ել  
Ավագն եր, վոր իր ճարպիկ լեզվի ու փողի շնորհիկ «գեղի գըլ-  
խին իշխան եր դառել», ինչպես պարծենում եր նրա պառավ  
մալլը:

Ջմեռը, յերբ վողջ գլուղը համարյա պարապ եր, Ավագի

առևտրի լեռուղեռի ժամանակն եր, դուքանը զլղլում եր: Նա մէ քանի անգամ քաղաքից ապրանք եր բերում: գործն ու քեֆը չաղ եր լինում միշտ, հանաքի տոպրակը լիքը: Իսկ ամառը...

Ամառը, լերը վողջ գյուղը հանդում եր լինում դաշտալին աշխատանքի, և գյուղում վոչ մի փափախավոր չեր ճարվում, մին ել են ելիր տեսնում Ավագը դուքանի դռան քարին նստած՝ նեղ դավթարը ծնկանը, թերթերը շուռումուռ ե տալիս, ու մէ փոքրիկ սև մատիտ պտղունցում հուալ տված՝ ինչ-վոր բաներ ե գրում ամեն մի լերեսի վրա:

— Ետ ի՞նչ բանի լես, Ավագ,— ձեն եր տալիս լերեմն տեր-տերը գյուղամիջից:

— Վոչինչ, տերտեր ջան. քեսատութին ա, մուշտարի չկա, դավթարիս հետ առուտուր եմ անում:

Յեզ իրոք: Ավագը իր «նիսլի նեղ դավթարը» ծնկանը դրած, այս կամ այն գյուղացու ապառիկի վրա մի բան եր ավելացնում. վորին—կես գրվանքա շաքար, վորին—մի շահու չալ, վորին—աղ, լուցկի, խունկ ու մոմ, նավթ և այլն:

Իսկ լերը ամառվա «գավթարի հետ արած առուտուրի» գեմ աշնանը, կալի ժամանակ վճարելիս բողոքներ ելին լինում, Ավագը հազար ու մի լերգումով հաստատում եր, վոր վճարողը մոռացել եւ:

— Ուզում ես տերտերին հարցըրու, նա տեսել ա, թե են շոգ տժժոցին լես վոնց եմ քու հաշիվերը գրել, կարգի գցել: Նիսլա բանի դալգեն ըսենց ա, նիսլի լերեսը—սև ա, թե ուզում ես, ախտե՛ր, տա՛լ մի, մի գրվանքա նոթին ել ի՞նչ ա, լա կես գրվանքա շաքարը, վոր քեզ բեղամաղ անեմ. կուզես լեկ մեկի տեղ՝ լերկուսը տար, բա ամոթ չի...

Յեզ Ավագը զինաթափ եր անում խոսողին, շատ անգամ լերեկոները ճամբով անցնելիս հրավիրում թելի, կամ մի ռումկա արադ խմացնում, խաթըն առնում:

## II

Ապրում եր եսպես Ավագը, են հին առածի տղի պես—«ինք դանակ, աշխարհը դմակ», ու քեֆ եր քաշում—գյուղի հերն անիծելով:

Ամուսնացավ, տերտերի աղջիկն ուզեց մեծ բաժինքով ու մեջքն ել ավելի պնդացըրեց: Իրեն մորն ու լեղբայրներին ել նոր տանիցը գուրս արավ, զրկեց ամեն բանից, կարողությունը զավ-

թեց ու պինդ վրեն նստեց: Պառավ մալըն ել, վոր ես անիրավության դեմ գանգատ գնաց ու պահանջեց, վոր ծերության հասակում իր կյանքն ապահովի, Ավագը ծիծաղը բերնին, խալիսի մեջ, դատավորի առաջ հալտարարեց.—

— Ետ իմ մերն ա, իմ հալալ մերը, հալբաթ վոր յես դրան պետք՝ ա պահեմ. դրա ինձ տվածը ինչ ա. երկու տարվա կաթը, չե՞մ, սուրդա ջան, մի եծ կառնեմ, իրեն կտամ, թող մինչև իրեն մահվան որը կթի, ուտի:

Դատարանը գտավ, վոր Ավագը շատ խղճմտանքով ու արդար ժարդ ե, ու մի քոսոտ եծով գանգատը վերջացրեց: Իսկ յեղբայրները... գե ի՞նչ կարող ելին անել, յերբ դիվանն ու դատաստանը Ավագի կողմն եր: Թաշվեցին իրենց քանդված տունն ու սրանքա մոտ նորար մտան:

Ավագի գործը շատ լավ եր գնում, շատ. մենակ են անիծած Դեպոյի Մուլսին, վոր քաղքիցը նոր եր յեկել, գյուղացոց միտքը խառնում եր, պղտորում, մանավանդ վոր շատ եր խոսում առուտուրի մասին, և ինչ վոր թազա դուքանի անուն եր հնարել, ինչ վոր կոռպերատիվ եր ասում, վոր սաղ գեղով միանան, բաց անեն ետ կոռպերատիվը, ու Ավագի տունը քանդեն:

Մուլսին մի վորբ աղա յեր: 15 տարի առաջ, նրա հոր մեռնելուց հետո, հորեղբալը նրա մորը մարդու տվեց, յեղբոր կայքը զավթեց, ու խեղճ Մուլսուն ենքան տանջեց, քոռեքոս արավ, վոր նա զզի ու չոլերն ընկնի, վոր յեղբոր միակ ժառանգի հոտը կարի: Մուլսին ել—մի վորբ ու անպաշտապան յերեխա, հազիվ 8—9 տարեկան, մի որ գլուխն առավ ու փախավ քաղաք: Շատերը նրան կորած ելին համարում, շատերը—մեռած, վոմանք ել պատմում ելին, թե հայ-թրքական կոիվսերի ժամանակ սպանել են: Բայց ահա մի որ ել—15 տարուց հետո, մի ջահել տղա մտավ գլուզը, կարգին հագնված, ու զլխարկի ճակատին մի չաքումից ու լապատկից շինած կակարդ կպցրած: Գլուղացիք չճանաչեցին, քիչ ել վախեցան, թե՝ չինովսիկ կլինի, մի թսաս կտա. բայց հարցուփորձից պարզվեց, վոր նա իրենց կորած Մուլսին ե, վոր սկզբում գեպոյի բանվոր ե յեղել, իսկ հիմի մաշինիստի ոգնական ե, ու հենց եղտեղ ել անունը կպցրին Դեպոյի Մուլսի, վոր ուրիշ Մուլսիների հետ չխառնեն:

Ահա հենց ևս Դեպոյի Մուլսին եր, վոր ջահելներին համոզեց, զլխին հավաքեց, ու վորովհետեւ աշնան առատ ժամանակն եր, մի 20 հոգի, մարդը 5 մանեթի հացահատիկ մեջտեղ դրին,

վոր կոռպերատիվը բաց անեն։ Մուխին ել պանդատ տվեց, վոր դատարանով իր ագահ հորեղբորից լետ խլի իր բաժինը ու ծախելով՝ մտցնի կոռպերատիվի մեջ։ Բայց...

Զարչի Ավագը գլուխը սաղ, աշխարհի լերեսին ման գալիս լինեց, ու գլուզում մի ուրիշ գուքան բացվեր... Նա իր մոտ կանչեց Դեպոյի Մուխինի հորեղբորը, իրեն զինակիցը շինեց, ու գործն ենակես հարմարեցրին, վոր Մուխինի գլուխն ուտեն։ Ու մինչդեռ կոռպերատիվի անդամները սարգ ու կարգ ելին անում, վոր գուքանը բաց անեն, Դեպոյի Մուխին ել պատրաստվել եր, վոր քաղաք գնա ապրանքի, մի գիշեր նրա տունը շըր-ջապատեցին ստրաժնիկները, բռնեցին ու թևերը կապած առաջ արին պրիստավի մոտ։

— Բա ձեզ վոր ասում եմի, թե եղ Դեպոյի Մուխին ժուլիկ ա, հավատում չիք, հիմի տեհամք։ Թաղքումը գողութին ա տրել ու փախել, լապատկի կակարդն ել սուտ ճակատին կպցըրել, վոր ձեզ եշացնի. տեհամք հիմի... Որենքի ջանին մատաղ, թուլթ ա դարկել պրիստավի վրա, վոր բռնի: Եկել ա, թե կոռպերատիվը բաց անի. կոռպերատիվը գիտաք ինչ մ, դա փռանցուզեվար խոսք ա, վոր մեր լիզվով իշի թալակին կասեն...—պարծենալով հայտարարում եր Ավագը։

— Աղա, են յեթիմ գլազեն ի՞նչ ա, վոր առուտառը բան հասկանա. ենա քաղքումը սոված-ծարավ թրե գալիս ա ըլել ասել ա, գնամ մեր եղ գեղացոց խարեմ, ու յեկավ ձեզ վոչխարի պես խուզեց, ելի...—ձայնակցում եր աերտերը։

— Են թե լավ մարդ եր համ, խի՞ չեր իր աշխատանքը մեջ տեղ զնում, քանց յեկել եր, թե զոռով իմ տուն ու տեղը խլի, հը... նրա համար եմ աշխատել... Ժուլիկը հո պողեր չի ունենում, են ա, ըտհենց ա ըլում, ելի...—Փրփրած հահնոյում եր հորցեղբարը։

— Հրես կոռպերատիվ չի՞, բա ի՞նչ ա մեր Ավագը... Մարդը վոչ ձեղանից փող ա ուզում, վոչ ել չարչարանք։ Ի՞նչ ուզում ես առ, թե փող չունես, նիսյա տար, յերբ կուզես գուքանը մտի ու քեֆդ ուզած ապրանքը ջոկի, տա՛ր, իսկի ծպտուն ել չի հանում. հալա մին-մին թե բողազդ չորացած ա, մի թաս արազ ել պատիվ կանի. ետ վոր դիփդ ել գուքանչի դառնաք, բա առնողն մվ պտի ըլիլ...—հեղինակավոր կերպով իր խոսքով «փեչատում», հաստատում եր քուչվին։

Ելի ինչեր ասես, վոր չխոսեցին Դեպոյի Մուխինի մասին,

Է՞նչ գող ու ավազակ ասես, վոր նրան չշինեցին: Յամս ալն եր, վոր կոռպերատիվի համար հավաքած փողը Մուխինի մոտ եր, ու նրան վոր տարան, փողն ել հետը գնաց: Խսկ չբացված կոռպերատիվի կողմանակիցները մինչև անգամ կասկածեցին, թե չըլլի ես ամենը Մուխինի սուստ սարքած բաներն եր, վոր փողերը հավաքի, ուստի:

Ավագը վրեժ լուծելու համար կոռպերատիվի կողմանակիցներին ել ապառիկ ապրանք չեր բաց թողնում, և ծաղրելու համար նրանց անունը կոռպերատիվ եր դրել: Խսկ Դեպոյի Մուխին գնաց ու գնաց: Խաբարն են յեկավ, թե ձեռ ու վոտը կապած՝ նրան Սիբիր են քշել:

### III

Համաշխարհալին մեծ պատերազմն ընկավ, հետոն ել—գյուղի աշխատավոր ձեռքը պակասեց: Սովի ձեռից—մարդիկ վերջին ունեցածն ելին ծախում, վոր գլուխները մի կերպ պահեն: Զարչի Ավագի հունձն առատ եր, Նա մանրութիւ հետ—հացի մեծ առնտուր սկսեց, ու գլուղի աղքատներին թալանեց: Տուն ու տեղը կարպետով, խալիչով ու պղնձներով լցվել եր, Նա հենց են ե, ուզում եր գլուղը թողնի ու քաղաք գնա, վոր գործն ել ավելի մեծացնի, յերբ խաբար յեկավ, թե հեղափոխություն ե յեղել, ու «Թագավորին թախտից վեր են գցել»: Ակսվեցին մի շարք խառնակ տարիներ, ճամբաները կապվեցին, Ավագի գուշանում ել ապրանք չկար, բայց նա չեր հուսահատվում: տանը պաշար շատ ուներ, ու վոտի վրա առնտուր անելով՝ աղավարի ապրում եր: Բայց լավ եր, թե եսպես մնար:

Ցերկիրը կարծես խառնվել եր իրար: Կոփի կովի յետելից, մինը գալիս եր, մինը գնում, ու մի որ ել լուր տարածվեց, թե «Ռուսեթից սոված ղոշուն ա գալի, բալշեկի զորք, վոր սազ յերկիրը թալանի»:

Զարչի Ավագը, վոր ուշի ուշով հետևում եր ամեն նոր խաբարի, իմացավ, վոր բայլշեկիները հարուստ մարդկանց «յաղին» են, նրանց մահը, վոր գլուղը մտնեն թե չե՞ առաջ կարմիր ժեղսով ծածկած տունն են թալանելու: Նա իր գլխի ճարը տեսավ: պառավ մորն ու յեղբորը բերեց իր տուն, ինքն անցավ իր հորից մնացած խարխուլ, հողաշեն խրճիթը, ու տան հատակը փորելով՝ հողին պահ տվեց թալանած իրերը: Նրա ականջին լուր եր հա-

սել, թե Դեպուի Մուխին ետ բայլը կիկների հետ եւ «Դէ գողը գողի ու ավազակի հետ կլի, բա հո կարգին վաճառականի հետ չի ըլլիլ»—միտք արակ Ավագը, բայց գլուխ պահելու համար, սկզբանց կամաց-կամաց բարեկամություն հաստատել «կոռպերատիվ» մարդկանցից մնացածների հետ, թե բան ե, վոր Մուխին գտ—հա, բարեխոս լինեն:

A 38/168  
II

Կորիվ եր, ինչ կորիվ... ֆրոնտն իմացել ելին գլուղացիք, չելին տեսել, Ամեն սարի ծերից թոփ եր տրաքում, մինչև վոր գլուղը զզվեց, ու մի գիշեր գիրքերում կովող տղերքը զենքը ցած գրին, անցկացան բայլը կիկների կողմը, և «ուում» տալով՝ նրանց հետ միասին մտան գլուղը, Բայլը կիկի «պողագոր» զորքը ժողով գումարեց, Խոսեցին նոր կառավարության մասին, ունկոմ նշանակեցին, հետաներն ալլուր ունեյին, բաժանեցին սոված խալիին, բայց ցավը են եր, վոր չարչի Ավագին արդեն ճանաչում ելին, Նրան բռնեցին, տունը տակն ու վրա արին, ապրանքը հանեցին, ու տերերին կանչելով՝ լետ տվին. ինչ ել վոր վեքսիւվ փող ուներ տված սրան-նրան, ազատեցին, պարտաթղթերն այբոցին, ու իրեն տարան կենտրոն:

—Չսպանեք, ուղում եք ղալումը փթացրեք, մենակ չսպանեք, Առանց են ել մեռած եմ, գոնե շունչս թողեք վրաս ման գամ,—աղաչում եր Ավագը:

Ավագին լերկու տարի բանտում պահելուց հետո արձակեցին. Նա գլուղ վերադարձավ ու ի՞նչ տեսափ, իրեն տունը զուքած, զարդարած, դուքանի ու տան միջի պատը քանդած, լենացրած ու մեջն ապրանքով լիքը, դռան ճակատին մեծ-մեծ տառերով գրած «Դյուդի կոռպերատիվ»:

Զարչի Ավագն ել են առաջվա Ավագը չեր, Նա լերկու տարում սիպտակել եր, պառավել, մեջքից կզացել, ձեռնափետով եր ման գալի: Սաղ որը իրեն աներոջ—տերտերի կողքին նստած՝ պատմում եր անցած որերի մասին ու թառանչ քաշում: Տերտերն ել լավ որում չեր. պսակն ու մեռել թաղելը կամաց-կամաց վերանում եր: Եսպես դարդ դարդի տալով որ ելին մթնացնում, լերը մի որ ել իմացան, թե Դեպուի Մուխին լեկել ե կոռպերատիվի գործերով ու ժողով կա:

Ավագը տմբտմբարով գնաց ժողովի: Ո՞վ գիտե, գուցե Դեպուի Մուխին մի գործ տա, չմ վոր նա հիմի սաղ աշխարհի տերն ա, մեծ պաշտոն ունի:

Դեպոյի Մուխին, վոր հիմի կենտրոնական կոռպերատիվի վարչության նախագահն եր, մեծ վոգեորությամբ խոսում եր խորհրդային առևտրի և նրա նվաճումների մասին։ Նա շատ պարզ եր խոսում ու հասկանալի, միայն թե Ավագը մի բառ չեր հասկանում, վոր շարունակ կրկնում եր Մուխին։ Դա—սպեց բառն եր, վոր Ավագը առևտրի վերաբերյալ շատ բան գիտեր ու շատ բառ, բայց ես մեկը իսկի լսած չեր, սակաւն մտքից չերկում եր, վոր իրեն ոգուտ բան ի։

— Քե մատաղ, Մուխի ջան, եղ վոր եղքան Սըպեց ես ասըմ, ետ Սըպեցն ի՞նչ զատ ա,—հարց տվեց Ավագը հետաքրքրությամբ։

— Սըպեց չի, սպեց տ,—ուղղեց Դեպոյի Մուխին,—նշանակում ե մասնագետ, իրեն գործը, փեշակը լավ իմացող։

— Այ, ողորմի հորդ հոգուն... Եես ել հենց եղ ելի ուզում իմանամ։ Հիմի քու ասելուց են ա դուս գալի, վոր դու կոռպերատիվի առուտուրի սըպեց ես ման գալի... Բա, ետ հո լես եմ, ինձանից ել լավ սըպեց... Ետ ջահել ջնուլնին ի՞նչ դիդան առուտուրի սեկրետը... ի՞նձ հարցըու, ի՞նձ... Ախր սխալ բան շատ եք անըմ... Մինը թեկուզ հենց են, վոր նիսխա ապրանք չեք բաց թողնում։ Նիսկեն վոր կա, վոտը թել կապած հավ ա, վոր չի փախչիլ. բա առուտուրը առանց նիսի նեղ դավթարի լոլա կգնամ...—Ավագը դեռ լերկար կշարունակեր իր ճառը, լեթե նախադահը նրան չընդհատեր։

•  
Զարչի ավագն ամեն որ փայտը ձեռին պտույտ ե գալիս իր նտիկին խանութ—ալժմ կոռպերատիվի չորս կողմը և ուզում ե իրըն սպեց մտնել ու «կոռպերատիվը վոտի կանգնեցնել մի ամառվա ընթացքում», իսկ գլուղացիք նրան չարչի Ավագի տեղ հիմի կանչում են Սպեց Ավագ։

1925 թ.:

ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

1. 1. 1. 1. 1. 1. 1. 1. 1. 1.

## ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Զուռնի ձենը սար ու ձոր եր ընկել: Զուռնաչին թշերն ուղցրած, կաս-կարմիր կտրած՝ յերկար-բարակ ծոր եր տալիս տահարին:

Սարի գլխին, մոխրագույն, թեթև շղարշի պես փոված ամողերը կտրմիր հագան ու առավոտվա զեփուռի հետ խաղալով՝ շորորալեն պար բոնեցին:

— Հիպ, հիպ, հիպ, ուռուս...—թմբուկի թնդյունի հետ միասին վորոտաց նորակոչիկների ձայնը:

Նորակոչիկները հավաքվել ելին գուռդի ծայրին գտնվող բլրի գլխին, ամբողջ գիշեր հրաժեշտի քեֆ-ուրախություն կազմակերպել, վոր առավոտյան ճանապարհեն շրջանի կենտրոնը, իսկ այնտեղից—կտրմիր բանակ, ծառալության:

Արևը, ջահել աղջկա պես, վոսկեզոծ վարսերը հուրիրատին տալով, գլուխը հանեց սարի յետեց ու ջերմագին ժպտաց արարաշխարհին, «բարի լուս» մաղթելով: Ամեն մի շունչ-արարած վոտքի յելավ:

Կարմիր բանակ գնացողների մարերն ու քուզրերը, վոմանց ել նշանածներն ու նորահարսները, ձեռ ու վոտ ընկած՝ ճամբի պաշտը ելին պատրաստում, վոր իրենց ազիգների հետ դնեն, իսկ գլուղոմեջ գուրս լեկած տղամարդիկ աշխուլիժ խոսք ու զբուց ելին բաց արել զինվորական ծառալության մասին, իրարից խոսք խլելով ու պատմելով ցարական սալգարի կյանքից:

— Ե՛ն, ի՞նչ կա հիմիկվա ծառալությանը... Հիմի աղալություն ա, աղալություն,—պատմում եր մեկը—Շատ հեռու տեղը Յերեանն ա, Գլումրին, կամ Ղարաքլիսեն ու Դիլիջանը... Երեսս վոր լվանամ, մինչև սրբելը տեղ կհասնեմ: Մեր վախտն եր... լցնում ելին վագոնն ու դը՛ռ հա դը՛ռ, դը՛ռ հա դը՛ռ, քշում վրասսելի...

— Ել ասում ես,—վրա բերեց մեկ ուրիշը:—Սարի ձերին ապրած չորան ելի յես, ոսի խարառն ել չելի գիտում ինչ ա, տարան Տամբովսկի գուբեռնին: Դեղի համար վոր ման ելիր յեկել հայ չելիր Տարիւ: Լցըին կազարմեքը, խոզի պես իրար գլխեածեցին, ու եգսի որը ռազդպան ու լիվոյ-պրավոյը ջանս կպթրին. դե՛ հիմի տղա յես, սեաճանճի մեջ ընկած ձիու պես վոտներդ տափը թակի. վոչ յես ելի նրանց ասածը հասկանում, վոչ ել նրանք իմ լեզուն, թե յես, մի հաշիվ եր:

— Ինձ ել տարան լոձի,—մեջ ընկավ լերըորդը:

— Շատ տանջեցին, թե վոտներս դուզ ման ածեմ, ելավ վոչ. դենչիկ շինեցին. սաղ որը սապոզ ելի սրբում, կամ պոլ Զորս տարի գլուխս թակել տվի ու տուն գալիս հաշիվ արի, տեսա, վոր ոսեվար մորն ուշունց տալ եմ սովորել, մին ել երկու դուռակի, մի սաբակ. իմ ոգուտն ել ես եր:

— Կաց, մի կաց,—ընդհատեց չորրորդը:—Ո՞վ գիդա, մեր ես քաչալանց թևանի անունն ի՞նչ ա...

— Թևան ա, — ծիծաղով պատասխանեցին ամենքը:

— Բանն ել հենց եղ ա ե, վոր գիդում չեք: Ինձ ու ես թեւ վանին տարան Սամարդանդ: Բանից զուրս եկավ, վոր ես թեւ վանի անունը դավթարումը թևադորոս ա գրած: Մի ոուս զվոդնի ունելինք, չեր կարում թևադորոս ասի: հենց վոր դրա փամիլը կարտալու վախտը գալիս եր, լեզուն կապ եր ընկնում, կըզ-կզում եր, կզկզում, ու մի որ Տիվարոս կարդում, մեկել որը— Տվիտրոս, Տիվտարոս, Տիվրիտոս... Վերջը տեսավ շատ ա տանջ-վում, անունը փոխեց, դրեց ֆեղոր: Ու ես մեր քաչալանց թևա- վանը դառավ իսկական ոուս— Կաշալով ֆեղոր:

— Բա են խեղճ ու կրակ Դանդոյանց Ակոփին, վոր սպանեց մեր ոունին,—կրկին խոսեց առաջինը:— Յես ու նա մի ոուսում ելինք: Մի կատաղած ոունի ունելինք, կապիտան. մի ջանավար ոուս եր. առաջ վերմերի եր ըլել. ոունի վախտն ել արազիցը ձեռ չեր քաշում: Մի որ զվոդնի մեզ կամանդ եր անում ծոր տալով «ռա՛զ... դելոյ դվա՛...»—մենք ձեռներս վեր քաշած «ռազ» ա- սելիս կռանում ելինք դեպի առաջ ու քանի եղ անտեր «ռազը» լեր- կարեր, ենքան ել մենք կռանալ պտելինք, ու մին ել վոր «դվա՛» ասեր, պիտք ա դեպի յետ ելինք կռացել: Ես Ակոփի մեջքը պինդ եր, կռանում չեր. հենց ես «դվա՛» ասելիս ոունին եկամու: «Եմիր- նա» արին ու ել յետ սկսեցին: Ոունին տեսավ ես Ակոփի մեջքը: կռանում չի, կատաղած ուշունց տվեց ու են խեղճին, լեռ կռա-

նալու վախտը, տուր թե կտաս չեքմի սուր քթովը — Ակոփի փորի են բոշ տեղին: Ակոփն «ճի» արակ ու տեղն ու տեղը վեր ընկավ սրբումբ: Տարան լազարեթ: Բանից դուրս եկավ, վոր փորը պատռել ա: Դես-դեն արին, դեղից բանից տվին, փորը ճանեցին, կարեցին, համա ել ինչ ոգուտ... բանը բանից անց եր կացել: Մեռավ, Ռուսնու ինչ վեջն եր, թե Ակոփն երկու լեթիմ թողեց:

— Արա, բա կարացիք վոչ են շան տղին շանսատակ անք, — բորբոքված հարցրեց մի ծերունի, վորը զինվորական ծառալության մեջ չեր լեղել:

— Խի, «Արջի քոխերի» ձորումն եր, վոր բանհոգի ելի արմւ — արդարացավ պատողը, — թե կողքիս բալշեկի կար... են վախտն մվ եր տվել բալշեկը, վոր բունա սարքեր:

— Համա ինչ սրբեցին, իգն ու թողը կարեցին ե... Դե հիմի ցերեկը ճրագով ման արի, թե մի կապիտան կամ գեներալ դանես, ափսոս, ափսոս, վոր ես բալշեկությունը շուտ չեկավ, մեր կաշին քրքրեցին, — գլուխը թափահարեց լերբորդ խոսողը: — Իմ գենչիկ վախտը սաղ մի շաբաթ հաց չեմ կերել: Ասելն ամոթ չըլի, ամեն առավոտ մեր ռուսնու կնկա թախտի տակիցը նրա չոլ դուս եկածը դեն ելի ածում, սրտմա, սրտակտոր ըլում, ել բոզազովս հաց կուլ կզնմեր...

— Թու հա, թու հա, — թքոտացին ամենքը: — Կարգին զրից գլխիցդ կտրի: արա, մի կարգին զրից չես կարում անես, ես խալխին մդաժուծ արիր...

— Կարգին բան եմ տեսել, վոր ասէմ... Կարգին բանը թողիմ տղեն պատմի, վոր հրեն կարմիր բանակիցն եկել ա, տանս ճրագի պես լիս ա տալիս: Անգրագետ զարկեցի, գնաց ու հալտ մի տարին թամամ չեր, իր ձեռովը նամակ գըեց, վոնց վոր շարած հուլունք: Հիմի ի ել աշխարհիս ամեն ծերիցը խարար ունի, կազիթ ա ստանում, կարդում, մին-մին ել ինքն ա գրում մեր գեղի հալիցը: Են որն ել գետի մոտ կանգնել ա, գլուխը տրմբամբացնում, ախ քաշում, թե ենքան ջուրը խի՞ լա մուհտամասալա կորչում: Ասում ա — Ես ջրի զորությունը դու չես գիտում: Վոր ելեքտրիչի ստանցի շինենք, սաղ գեղը կլուսավորվի, նոթի հոտիցն ու մրիցը կազատվենք: Ենքան բանը վժրտեղ ա սովորել... հալբաթ, վոր կարմիր բանակումը...

— Հալա մի սրա տղիցն ել խարար առ ե... Զոլի տավարի պես զաղ եր, քիթը սրբելն ել չեր գիտում: Դնաց կարմիր բանակ,

Հ ըդ դառավ՝ Եկավ-չեկավ, ՓՈԿ-ի նախագահ ջոկեցին. Են սեր-  
շ զատն մվ բերել տվեց, —սրա տղեն, սերմազտիչն մվ բերեց, —  
սրա տղեն, զավոյի նավն մվ ադաթ գցեց, —սրա տղեն. Հիմի լել  
կպել ա, թե անպատճառ պետք ա տրաքտոր բերենք... Ինձ ու  
ինձ միտք եմ անում, թե սրանք սալդաթություն են անում, թե  
հենց սրանց դուլուն ենա, վոր գրել-կարդալ սովորեն, վար ու  
ցանի նոր դալդեքն իմանան... Սրանց ձեռին թվանք ա ըլում,  
թե դալամ ու գիրք, սերզատ, տրաքտոր կամ զավոյի հավ ու  
կով... Մենք տավարի պես գնացել ենք, տավարի պես լեկել, ել  
յետ կպել մեր պապական չութի ու գութանի մաճիցը, սրանք  
մաշինով են գործ բռնում...

— Ենդուր ել... — խոսողին ընդհատեց մի ուրիշը. — եղուր ել,  
մեզ վոր սալդաթ ելին տանում, սաղ տունը սուզ ու շիվան եր  
ընկնում, համա հիմի, ում վոր կարմիր բանակ չեն տանում, նա  
յե սուզ ու շիվանը տուն գցում: Մենք հազար ու մի կաշառք,  
հազար ու մի ֆանդ ու ֆել ելինք հնարում, վոր ազատվենք,  
համա հիմիկվա ջահելնին, թե լզոդա յել ունեն, իրանք գնում,  
աղաչանք-պաղատանք են անում, վոր կարմիր բանակ տանեն,  
չունեի... դիմին ել լավ են հասկանում ու տեսնում, վոր գնացո-  
ղը—գնում լիսավորվում ա, մարդ դառնում... Հրեն, նովորացիքիր  
քեփ են անում, հրես կզան, ճամբա կընկնեն, համա ձգնավորանց  
վասիլի տղեն մեռելատիրոջ պես տանը նստած՝ սեով սուզ ա  
մտել, վոր իրան կարմիր բանակ չեն տանում. ինձ ել ասել ա,  
վոր տնիցը փախչելու լա, տղերանց հետ գնա...

\* \* \*

Մինչդեռ գյուղացիները պատմում ելին իրենց հիշողություն-  
ները և կարմիր բանակից վերադարձաների արարքների մասին,  
նորակոչիկների խումբը պարելով ու լերգելով գյուղը մտավ՝ զուռ-  
նան առաջները գցած, վորին շրջապատել ելին գյուղի լերիտա-  
սարդները, թոշկոտալով վազվզում և «ուռա»-ներին ճայնակցում  
ելին իրենց մանկական զիլ ձալնով:

Վողջ գյուղը հարսանիքի տրամադրության մեջ եր:

Նորակոչիկներն իրենց շքախմբով տնեւ տուն այցելում ելին  
«մնաս բարովի», ամեն տան դռան սարքած սեղանից ճաշակելով  
ու պարելով, իսկ ընկերը ճամբի պաշարն եր վերցնում աշնան  
լիսուատ բերքից: Դուներից անցնելիս, բարեկամ ու ազգական

նորակոչիկների գրպանները լցնում ելին մրգերով կամ նաշխուն գուլպա ելին նվիրում:

Նորակոչիկների խումբը գրեթե կազմ-պատրաստ գլուղամիշի լայն հրապարակում պար ու լերգի հերթ եր բաց արելու Քաշում ելին սրա-նրա թևից և շրջանի մեջ առաջ՝ ստիպում պարել: Մեծերն ել չելին աղատվում ես «պատժից»: Յերբեմն ել պարն ընդհատում ելին ու փոխում խմբական լերգի:

— Մարոյի լերգն ածա, Մարոյի լերգը...—ձախ տվեց նորակոչիկներից մեկը:

Զուռնաչին պարի լեղանակը փոխեց լերգի, ու լեղանակն աղավաղելով՝ սկսեց փչել: Խմբի աջողակ ձայն ունեցողներից մեկն սկսեց լերգել, վորին ձայնակցեցին և մլուսները:

«Յար կոմսոմոլ ե, բեխը նոր մրած,

բեխը նոր մրած,

Կարմիր բանակ տարան, եղայիս եր գրած,

եղայիս եր գրած,

Դարնան կգա յարս, վար ու ցան կանի,

վար ու ցան կանի,

Լենկոմյերից յարս ինձ ել կտանի,

ինձ ել կտանի.

Խորհուրդների պատվան, իմ իզիք յար ջան,

իմ իզիք յար ջան,

Դիրքի ամուր պանի, ջանս ինզ դուրբան,

ջանս ինզ դուրբան»:

— Վայ, Մարո, Մարո, քեզ տեսնողի տունը քանդվի, Մարո...—մեծ ազմուկով ընդհատեց խումբը լերգեցողությունը, կըրկին շարունակելով.

«Կոմյերից Մարոյին չմոռնաս բարով,

չմոռնաս բարով,

Սիրս նետդ պատար կտամ մեկ տարով,

կտամ մեկ տարով»:

— Ե՛տ, գաղթական, գաղթական Դղո, լերգդ ասա, լերգդ...—ձախնեց մի նորակոչիկ:

— Հա, հա, Դղոն թող ասի, Դղոն... Դղո, Դղո, դզզզեմ, դնեմ տակիս գզզզեմ,—գոռաց մեկ ուրիշը և Դղոյի թևից բռնելով առաջ քաշեց:

— Ուստա, զուռնիդ ձենը կտրի, զուռնիդ ձենը. Դղոն առանց զուռնիդ յա հաղ կանչում:

Զուռնան ընդհատեց իր նվազը: Ընդհանուր հարահը մեջ Դղոն գլուխը կորցրել եր: Նա լել եր նորակոչիկների մեջ: Նա լել եր կարմիր բանակ գնալու:

Դղոն համաշխարհալին պատերազմի զոհերից եր, վոր ամեն բան կորցնելով՝ գլուխը մի կերպ ազատել եր սրից ու ընկել եր գլուղը, վորտեղ բատրակություն եր անում: Շատ տեղեր եր թափառել փոքրիկ Դղոն, շատ բան գիտեր աշխարհից ու մարդկանցից: Խորհրդայնացումից առաջ նա արդ նույն գլուղումն եր, բայց մի առժամանակ անհայտացավ. գնացել եր Նոր Բայազետի կողմերը, ապա կրկին վերադարձել: Դղոն սովորել եր այդ գլուղի նիստ ու կացին, մարդկանցն ու սովորություններին: Համեստ եր, ուշկալ: Դրա համար ամենքը սիրում ելին նրան ու պաշտպանում:

Դղոն փախս տվավ, վոր ազատվի լերգ ասելուց, բայց չթողին: Նա մի քիչ կարմրեց, շփոթվեց, ու մեկ ել ընդհանուր աղմուկի միջից լսվեց նրա «ճղված ձալնը».

«Ավելին բափեմ փուշին,  
փոքի բալեմ տօփին,  
բալենիկի զնդակը,  
մենենիկի դոփին»:

Նորդոր լեզանակը վոգեորեց ամենքին, վորոնք շուրջ-պարբռնեցին, մեջ առնելով Դղոյին, վոր լերգի՝ պարելու համար:

«Վույ-վույ մասիննիկը,  
վույ-վույ մասիննիկը,  
եկավ մասիննիկը  
բերավ բալենվիկը»...

«Աման Մարո, Մարո ջան,  
մի տաս շահի փող տուր,  
նիվանդանաս, յարո ջան,  
վերել բերեմ դժիստուր»...

Յերգ ու խաղի, ծափ ու պարի եղ կրակված միջոցին, գլուղը ծածկող բլրի լեռներից հանկարծ լսվեց մի ուրիշ դուռնա-դհումի ձայն:

Հարեան գլուղի նորակոչիկներն ելին, վորոնք գլուղ ելին մտնում, վոր միանան տեղացիներին ու միասին մեկնեն շրջանալին կենտրոնը:

— Ուստա փչի, ուստա փչի, գնանք լեկողների առաջը:

Զուռնան զլեց իր ձախը, թմբուկը դղրդաց: Բլրի լետեից լերեաց նոր խումբը, վորին դիմավորելու լելան նորակոչեկները:

— Ուսում...—թնդաց լեկվորների միահամուռ ուրախ աղաղակը:

— Ուսում...—նույնպիսի վոգեորութլամբ պատասխանեցին դիմավորողները:

Միացան:

Յնծագին աղաղակները դղրդացնում ելին վողջ գլուղը, Մեծու փոքր դուրս ելին լեկել տներից, բարձրացել կտուրները—թամաշալի:

Զուռնան փչեց հրաժեշտի լեղանակը և խումբը շարժվեց զեպի կենարոն, գեպի կարմիր բանակը....

Հորիզոնի լեզրին հաղիկ նշմարվում ելին վերջին գնացող ները, լերը մեկ ել մի ձայն ճչաց նրանց լետեից.

— Կացեք, կացեք, տես ել եմ գալիք, ինձ ել տարեք...

Դիմացի կալերի շեկ ճանապարհի փոշու մեջ կորած, վազում եր ճպնավորանց Վասիլի տղա Սարգիսը, վորը փախչում երտանից—զեպի կարմիր բանակ:

1928 թ..

## ԸՆԿԵՐ ԽՈԶԱՐԱԾԸ

### I

— Ես մեր խորհրդակին իշխանության արած նոր-նոր բաները շատ զարմանալի լեն, համա լես մինը թամամ ամենքին տվեց, անց կացավ:

Եսպես սկսեց իր պատմությունը կարապետ բիձեն, վորը չի բռուխը լցնելով՝ մի պեծի կտոր գրեց վրան ու ծուխն առատութեն դուրս թողնելով թանձը բեխերի միջից, կոկորդը մաքրելով, շարունակեց:

— Հերու լեր, գարունքվա դիմաց: Մի իրիկնադեմ մին ել են տեսանք մի լղար ձիու վրա նստած, հրես մի քու հասակի ջանել աղա գեղը մտավ: Դե, ըտհենց մարդիկ շատ են լեկել գնացել կոռպերատիվի գործով, հողաշինարարության կամ հողակեր համար: Ասեցինք, սա ել դրանց պես մինը կըլի: Մենք գեղամեծ հավաքվեցինք մի նոր բան իմանալու, նա ել լեկավ ու մեր մեջը վեր լեկավ:

Սովորական բարով տալուց-առնելուց հետո, ուղեցինք նորեկի միտքն իմանանք:

— Յես,—ասաց նորեկը,—լեկել եմ ես գլուղում խոզ պահեմ:

— Ի՞նչ...—զարմացած հարցրին ես ու են կողմից:

— Այս, խոզ, ցեղական խոզ:

— Ա՞յս խոզն ել կտրվի, իրան ցեղն ել. մեր գեղում խոզարած քիչ կա, վոր վեր են կալել քեզ պես պատվական մարդուն դարկե՞լ, — վրա բերի լես ու մի կողմ քաշվեցի, թե մի լավ միտք անեմ ես բանի վրա:

Գեղացիք ել իրար աչքով-ունքով անելով՝ ծիծաղները դուռվ հուալ տված՝ դես-դեն քաշվեցին:

Դե, լեկողն ինչքան ել լավ հագնված ըլեր, ասենք թե շատ

ել խելոք, մի բան վոր խողարած եր, նրան ել ով բանի տեղ կդներ...

Դե, դու գիտես, յես աշխարհ տեսած մարդ եմ, զլուխս հազար տեղ դիպած, ինչ զուլլուղի ու փեշակի մարդ ասես, տեսել եմ, բայց, վոր մարդ խոզ պահելու ուսում առնի, ետ խսկի իմացած չելի: Ինքու ինձ միտք արի, միտք ու վճռեցի, վոր հալրաթ ետ խեղճ մարդը ուսում ա առել ու ուսումիցը խելքը բանչի կարել, քաղաքումն ել գործ չեն տվել, գլխներիցը ուադ անելու համար զարկել են մեր զեղը, վոր իրան շատ խոզով հալունի գեղ ա: Ելի մոտեցա, թե մի ես նոր տեսակի խողարտծի խելքը ծանը ու թեթև անեմ:

— Ընկեր,— ծիծազս զոռով պահելով հարցը ի ես.— դու ուսումբան ունես, թե հենց խողարած ես, վոր կաս:

— Այս, հալրիկ, յես խոզ պահելու մասնագետ եմ. հատկապես ուսումնասիրել եմ խողարուծությունը, չորս տարի Յեվրոպայում դրանով եմ զբաղվել:

— Յեվրոպիան...

— Այս, Յեվրոպա:

— Տնաշեն, ել խի՞ ետքան հեռու տեղ ես գնացել, Ենակալիր մեր գեղն, Ելի, քեզ հենց խողարած կշինելինք, վոր իսկի պոատ Ռվագինն ել չեր կարող հետդ խոսա:

Նա հասկացավ, վոր յես ծաղրում եմ իրան, բայց չնեղացավ. կամաց քմծիծաղ տվեց ու դառնալով գործկոմի նախակահին, ասաց.

— Ընկեր, խնդրում եմ վաղը յերկու մարդ գտնեք, վոր ինձ հետ միասին կայարան գան, խոզերն արդեն յեկած կլինեն, պետք ե գուռդ հասցնենք:

Մութը վրա յեր հասնում: Նորեկն ու գործկոմի նախակահը գնացին տուն, իսկ գեղացիք իրար ուսի տալով՝ յեզուները բացված, սկսեցին մի ծափ ու ծիծաղ ես նոր խողարածի մասին:

Ել ի՞նչ ասես, չասեցին, ել ի՞նչ մասխարա բան ասես, չնարացին: Վերջն ել ես մեր ձայնազուրկ տերտերը, վոր եղտեսակ ժամանակները լեզուն գազ ու կես ա հանում, դարձավ թե՝

— Բհը, եղ ել ձեր հավանած խորհրդալին իշխանությունը, ձեզ ուզում ա խոզով լուսավորի...

Դրուստն ասած, ուզեցի ես տերտերին մի լավ կարկատեմ, համա յես ել լավ չելի հասկանում, թե ինչումն ա բանը, վոր շապիրեմ, ու վախեցա յես ել ծափ ու ծիծաղի արժանանամ:

Առավոտը ես մեր խողարած ընկերը ել յետ երեկվա լղար ձին նստած, մեր գեղացի երկու ջահել ել նրա հետ վոտով՝ ճամբա ընկան դեպի վագզալ: Սաղ գեղը մերով-մանուկով գուրս եր լեկել, թե ետ «կառավարական խողարածին» տեսնի: Ամենքն ել գիտելին նրա մասին: Բայց ես ընկեր խողարածն իսկի այն-նուումն ել չեր գցում, թեև յազ գիտեր, վոր ամենքն ել իրան հա-մար են կալ ու կտուր բռնել:

Նրանք վոր աչքներից ընկան, մենք կալմեջ արինք գործ-կոմի նախագահին, վորի տանը գիշերն անց եր կացրել խողա-րածը:

— Ա՞րա, Ակոր, եղ խողարածը վժրտեղացի յա, — հարց ավեց գեղի ամենաշատ խոզ պահող Մարդանանց Միդին:

— Գիտեմ վոչ՝ համա շտա ուսումնական մարդ ա, — պատաս-խանեց Ակորը:

— Յանի գրել կարդալ գիտի<sup>o</sup>, թե ոսերենը փալասով ա-բռնում, — հարցրեց մեկ ուրիշը:

— Ի՞նչ ոսերեն, փուանցուզեվարը ջրի պես ա խմում. քեզ ու-սումնական եմ տառամ ե՛, ուսումնական. մեր գեղը հլա եղքան գիտնական մարդ չի մտել:

— Ասա խողերին փուանցուզեվար ա սովորացնելու, ելի, — ծի-ծաղելով մեջ մտավ ձայնազուրկ Զաքարը:

— Խոզերին գիտեմ վոչ, համա վոր ձայնազուրկներին ֆար-սի ա հաջացնելու, եղ մի բանը հաստատ գիշամ, — մի յազ դաղեց Ակորն ու դարձավ Ստեփան-բեզի թոռանը, Սահակին.

— Տանդ են վերևի ոթախը կդարդակես, ընկեր Արմենակի համար («խողարածի» անունն ե), վոր միջին ինքն ապրի, տակի պադվալն ել կմաքրես, վոր խողերը մեջը տեղավորի:

— Իմ պազվալը տակը լորի (լորենի) տախտակով շինած մի լիսավոր կտրգին ոթախ ա, ամառը յես միջին ապրում եմ վերի ոթախը քրեհով դաշնիկի տալի. իմ պազվալը հու գոմ չի, յա խողալան, վոր նրան տամ: Ո՞վ ա իմացել, խողը պոլած ոթախում պահելը, — հակառակվեց Սահակը:

— Եես իմացել, կիմանաս ու կտենաս, նրա խողերը գո-մում չեն կարալ ապրեն:

— Խի<sup>o</sup>, քաղքի բարիշնա յեն, սիպտակ շորները կկեղտո-տի... — Նորից մեջ մտավ ձայնազուրկ Զաքարը:

— Բարիշնա չեն, համա քեզանից թամուզ նիստ ու կաց ունեն, — մին ել կարկատեց Ակորն ու ինձ, բյիջի քարտուզարին ու անասնաբուժակին կանչեց գործկոմի գրասենյակը:

ևստեղ Ակոբը մեղ բացատրեց, հասկացրեց, թե կառավա-  
քությունն ուզում ե մեր խոզերի ցեղն ազնվացնի, վորից մենք  
շատ ուզուա կունենանք: Հայտնեց նմանապես, վոր ետ խոզարած  
ասածդ համալսարան ավարտած գիտնական մարդ ա, վորին կա-  
ռավարությունն ահագին ոռնիկ ա նշանակել, վոր մեր գեղումն  
ապրի, ու թե մենք շատ պետք ա ուրախ լինենք ետ բանի հա-  
մար ու ամեն կերպ աջակցենք նրան:

Մենք վոր գործկոմի գրասենյակից դուրս յեկանք, թե գը-  
նանք Սահակի պազվալը մաքրենք խոզերի համար, գեղամիջում  
մեծ ու պուճուր իրար խառնված, խոզարած Արմենակի անունն  
Ախալցխալի ծամոնի պես ծամում-ծամծում ելին իրար բերնից  
խլելով:

## II

— Եգսի որը խոզերը բերին: Խոզեր... մի ջուխտ թումբ  
ասա: Խոզ եմ ասում ե... մերը չմեռնի, ամեն մինը քսան փութ  
թե չզար, մի բան ել պակաս չեր ըլի: Ասա քոքութենից կա-  
րում ին ման գան... Ենքան ել թամուզ, սիպտակ, վոր կասես  
սալվանի միջից նոր են հանել:

Թամաշեն դու հիմի եստեղ տես: Եղ քու տեսած շատ խոզ  
պահող գեղը լցվել ա գեղամեծ, ճամբեքը կտրել, թողում չի՝ թե  
եղ խեղճ բեզարած հայվաննին տեղ հասնեն: Հենց են վրա թափ-  
վել, վոր կասես իրանց որումը խոզի յերես տեսած չըլեն:

Ես մեր ընկեր խոզարածն ել ես խոզերին վոնց ա ջան ա-  
սում, կասես ոխտը տարով իր վորդկերանց յերեսը չտեսած  
մեր ըլի:

Ազաշանք-պաղատանքով ես մեր ընկեր Արմենակը համո-  
զեց, վոր խալխը ցրվի ու թողնի, վոր խոզերը տուն հասնեն,  
հանգստանան: Խոստացավ, վոր հերթով ամենքին ել շանց կտա՝  
կհասկացնի, թե վոնց պետք ա անեն, վոր իրանք ել ետ տեսակ  
խոզ ունենան: Ասեց, վոր ինքը հենց դրա համար ել յեկել ա,  
վոր ամեն բան սովորացնի...

Խոզերը տեղ հասան թե չի՝ ես քու տեսած լավ ու թամուզ  
շորեր հագած ընկեր Արմենակը շորերը հանեց, մի փարթուկ  
(գոզնոց) հագավ ու ես խոզերին վոնց ա լողացնում...

Մի խոսքով՝ ես մեր գեղը վոնց վոր քանդրբազին (լարա-  
խաղաց) թամաշա անող, սադ որը մինչև պինդ մութը, բան ու

գործը՝ թողած թամաշա լեր անում, թե ես մեր նոր դալդի խո-  
զարածը վոնց ա երեխատեր մոր պես են հայվարա խոզերին  
դոլոր անում (խնամք տանում):

Գեղացոց ծափ ու ծիծաղը, մասխարա գցելը կտրել եր: Հի-  
մի ել ուրիշ դալդի ելին խոսում, կասես մի որ առաջ, ելի եղ  
նուուն տեղը հազար ու մի բամբասանքի տոպրակը բաց արած-  
ները չըլելին, վոր լա խոզարածին ելին փնովում, լա կառավա-  
րութիւնը:

Խոկ Մարդանանց Միդին մոտենալով՝ կամաց փսփսաց ա-  
կանջիս.

— Կարապետ, եղ խոզարածի հետ ծանոթ ես, մի կամաց  
գլխի գցի, տես թե կծախի, թող ինձ տա առնեմ, ուզում ա տե-  
ղը հիսուն ջոկովի խոզ տամ: Խոկի ձեռից բաց թողնելու բաներ  
չեն, աչքս վրները մնաց...

Սաղ որերով ես քու տեսած գեղացիք հա վազում ելին  
խոզերին թամաշա անելու: Հիմի ել հազար ու մի պատմությունն  
հնարեցին ետ խոզերի մասին, թե զրանք իսկական խոզ չեն ու  
խոզի ել խասլաթ չունեն, վոչ ցեխն են մտնում, վոչ վրաները  
վո՞իլ կա, վոչ ել սրա-նրա բաղ ու բաղչեն են քանդում:

Ես մեր ընկեր Արմենակն ել հա խոսում եր ու խոսում  
խոզերի մասին, նրանց պահելու մասին ու ամեն բանով հաս-  
տատում, վոր խոզերն ամենամաքրասեր կենդանիներն են, ու  
եսպես հազար ու մի բաներ: Մի խոսքով՝ գեղը թամամ վոր լու-  
սավորում եր:

Մի քանի ամիս անց՝ մերունը ծնեց: Դու մի պետք ա հն-  
տեղ ելիր ըլել ու տեսել, թե ես մեր Արմենակը վհնց ա տատ-  
մոր պես ամեն մի գոճուն լողացնում, փաթաթում, տակները  
մաքրում... Ոլին եր, ոլին... Համավոչ մի գեղացի չեր համար-  
ձակվում վըեն ծիծաղի: Գալիս ելին, թամաշա անում ու գլուխ-  
ները պտուտ տալով՝ հեռանում ու իրար պատմում եղ զարմանալի  
խոզարածի մասին:

Նոր ծնած գոճիների մուշտարին շատացավ. ամեն մի տըն-  
վոր ուզում եր ինքն ել ունենալ, բայց Արմենակը վոչ վոքի չեր  
տալիս: Յես ել խնդրեցի, թե մի հատն ինձ տա, ինչ գին ել ա-  
սել եր՝ կատի, համա ինձ ել մերժեց, ասելով, թե մինչև կա-  
ռավարությունից հրաման չըլի, վոչ մի գոճի իրավունք չունի  
վոչ վոքի տալու:

Տարին բոլորեց: Ընկեր Արմենակի խոզերը շատացել են ու  
հիմի գեղականը խնդիր ա տվել կառավարութիւնը, վոր իրա-

վունք տա ետ խողերիցը սերմի համար առնելու, չենք իմանում,  
թե ինչ պատասխան կդա:

Մի բան ամենից զարմանալին ա, վոր հիմի մի քանի հոգի,  
հուկս ունենալով, թե եղ նոր ցեղի խողերիցը կստանան,  
հրեն խողերի համար ոթախ են շինում, լուսավոր, տակը պոլած:

Թեղ եմ հարցնում, բա զարմանալու բան չի... իրանց տը-  
ները վոր տենաս, ելի, սրանից հարյուր տարի վոնց վոր ելել ա,  
հողածածկ ու մութը, նամ (խոնավ), թողոտ, ելի են ա մնացել,  
իսկ խողերի համար պալտուի պես տներ են շինում, թե ինչ ա,  
ընկեր Արմենակը, վոր խողերի պահելու տեղը չհավանի, իրանց  
եղ խողերիցը չի տալ...

1927թ..

## «ԱԿՏԻՎՆ» ՈՒ ՀԵՑԴԱՐԸ

I.

«Ակտիվ» ելին ասում կոմիերիտական Արֆոլին, վոր մի տարի լեռ՝ ինչ Բագվից լեկել եր իրենց գլուղը և կենտրոնի կարգադրությամբ մուացել այնտեղ կազմակերպչական աշխատանքներով:

Ո՞վ չեր ճանանչում նրան. գլուղի կոմիերիտ բջիջի վոգուն, պիոներ կազմակերպության ղեկավարին, կինըաժնի լեռանդուն քարտուղարին ու գլուղթղթակցին: Խնչակս աստծ ե՞ «մի գլուղ եր, մի Արփօ»: Դեռ հազիվ 17—18 տարին լրացած, լոթնամյա աշխատանքային դպրոցը նոր ավարտած վառվուն մի աղջիկ եր, վորն ընկել եր խորհրդային շինարարության պարի մեջ ու շրջորում եր:

Մին ել են կտեսնելիք՝ կիրակի ու տոն որերին սաղ գլուղը գլխին հավաքած՝ լրագիր և կարդում ու բացատրում իր հիմնած խրճիթ-ընթերցարանում, վորն որըստորե դառնում եր գլուղի կուլտուրական ոջախը, կամ փոխողկոմի նախագահի հետ միասին հավաքում և պարենը, կամ Սոպրի համար հիմնած բանջարանոցում իր հասակակից աղջիկներին ու ավելի ջահել կանանց հավաքած՝ ցանքս և անում կամ քաղում:

Շաբաթնորյակ և կազմակերպել, գետափին թափած կրաքարերը մի տեղ հավաքել ու ստիպում ե, վոր բատրակների միությունը կրի, այրի, վոր գլուղի բաղնիքը շինվի: Սելավի բերած ավագը հավաքել, կուլտեր և արել ու ստիպում ե, վոր գլուղացիք մի տեղ հավաքեն՝ դպրոցի դահլիճին կից թատրոնական բեմ շինելու համար: Գլուղի սանիտարական հանձնաժողովի նախագահն ե. շարունակ շրջում և դռնե-դռւռ և ստիպում, վոր աղբ ու դիբիլ հավաքեն, սրբեն, գլուղամեջն ու տան բակերը,

գոմի առաջները մաքուր պահեն։ Շարունակ խոսում ե ալերոպղը՝ լանների, ելեկտրական լուսավորության մասին։ կամ ձի հեծած թոշում ե շրջկոմ՝ հրահանդներ ստանալու կամ վորես տոնակատարության ու կարևոր ժողովի մասնակցելու...»

— Ափսոս, ափսոս, վոր աղջիկ ես ծնվել, այ բալա, — ասում ե նրա տատ Գլոզալ պառավը, գլուխն որորելով ու միշ քաշելով։

— Տատի ջան, ես աշխարհում հիմի տղեն ու աղջիկը մեկ են, դարդ մի անիլ. են ձեր ժամանակն եր, վոր աղջիկը տղամարդու բան չեր անիլ, — ժպտալով պատասխանում ե Արֆոն, վորի թարմ ու կլոր զեմքին, խնձորանման թշերի վրա փոքրիկ փոսիկներ են գուանում։ — Ինչնի չեմ տղա, տատի ջան. հրես, մազերս ել կտրել եմ տղի պես. մի տես, թե վո՞նց թեթեսցել ե գլուխս։ Զամանչեմ, շալվար կհագնեմ։ Ես փեշերս ձի նստելիս խանդարում են։ Տատի ջան, արի քեզ պիոներ շինեմ, — կատակում ե նա ու փաթաթվում տատի զզով։

Գլոզալ պառավը լաց ե լինում, արցունքները փեշերով սըրում, քթի տակ դնդնացնելով։

— Հերդ սաղ ըլեր ու քեզ տենար, բալա ջան. վերջանան թուրքերը, են իգիթին տարան գլուլախորով արին։

— Ե՛... տատի, — ընդհատում ե Արֆոն. — Ելի սկսեցիր հին նաղը... Քեզ քանի անգամ եմ ասել, թե թուրքերը չեն սպանել, այլ Մուսավաթը. դու ելի թուրք ես ասում...»

— Սպանողի ձեռքը չորանա, բալա ջան, վոր ջիգարս շամփուր խրեց, երեց խորովեց...»

— Սպանողի ձեռքը չե, տատի ջան, գլուխն ել ե չորացել. վերջացել են, ել չկան։

— Ե՛հ, ի՞նչ գիտեմ, բալա ջան, ջանս երկում ա, լեթիմ ես մնացել։

— Ինչն իմ լեթիմ, տատի ջան, իմ մի են տեսակ հալը ունեմ վո՞ր... Հոկտեմբերը գիտես ինչ հալը ե...»

Գլոզալ պառավը վոչինչ չի հասկանում։ Նա ետ տեսակ վորդի չի ունեցել։ Մի տղա ուներ, վոր զորքա Սարգսի պարտքի տակից գուրս գալու համար, գլուխն առավ փախավ Բագու, մինչև պարտքը տվեց, պրծավ. ենտեղ ել պսակվեց, տուն ու տեղ դառավ, բայց կոիմներովը թուրքերն սպանեցին, հարսն ել թողեց մարդու գնաց (զե ջահել որը հո չեր խավարացնելու, արդարացնում ե իր մեջ հարսի վարմունքը Գլոզալ պառավը), ես մի հատիկ աղջիկն ե մնացել տան ժառանգ, ես ել...»

— Ե՞... Արքո ջան, ակտիվ ջան, մեռնեմ արեիդ. ախր իմ դարձը չես գիդում. պապիդ ոջախը ծխող չկա, ենդուր եմ ասում, թե տղա չես:

— Վահ, տատի ջան, հրես ենքան փետ բերեմ, կրակ անեմ, վոր մեր ոջախի ծխի ծերը յերկինք հասնի. դրա համար ես դարդ անժւմ...—կէջում ե Արքոն ու յեղնիկի նման դուրս թըռչում:

— Ո՞ւր, աղջի, ա ծամդ կտրած վիրու եծ.

— Ժողով կա, տատի ջան, գլուխորհուրդ ենք ընտրելու, կուլակները գլուխ են բարձրացըել, պետք ե մի լավ գլխներին տանք.—ապա մոտ վազելով, բուռնցքը մոտեցնում ե տատի քթինու զիլ ձախով բացականչում,—քթին ծեփիլ պտենք.

Գլուխ պառավը վոչինչ չի հասկանում. Ում «քթին պտենծեփիլ», ինչժւ...

\* \* \*

Ալդ յերեկո կոմիերիտ բջիջի ժողովին ներկա յեր մի նոր անդամ. դա—Հելդարն եր, զոռքա Սարգսի թուրք բատրակը, մոտ 18—19 տարեկան, բեխերի տեղը նոր մրած, արևելցու վառվռուն, կրակոտ սև աշքերով, բրոնզե դեմքով, սև սաթի պես խորը փայլ ունեցող ալիքածն կոշտ մազերով ու նոր աճող դալար ծառի պես ճկուն իրանով. Մի բարի ժապիտ շարունակ խաղում եր նրա հաստ շրթունքներին, ինչպիս թիթեռնիկը նոր բացված խնձորածաղկի հետ:

Յերբ խոսք բացվեց Հելդարի մասին, Արքոն մի հարց տըվեց միայն, թե Հելդարը գրագիտ ե. Վոչ. Հելդարը գրել-կարդալ չգիտե՝ վոչ թուրքերն, վոչ ել ուրիշ լեզվով:

— Ամհթ ե.—խիստ տոնով ասաց Արքոն.—կոմիերիտին վայել չե, վոր անգրագետ լինի. պետք ե վերացնես անգրագիտութիւնուդ:

Հելդարն ամոթից կարմրեց. Նա գլուխը կախ, թուքը կուլ տալով անաց, թե ինքը խոսք ե տալիս ամենակարճ ժամանակամիջոցում գրել-կարդալ սովորել, յեթե սովորեցնող լինի, թեկուղ հայերն:

— Լավ,—ասաց Արքոն.—ընկեր քարտուղար, արձանագրութեան մեջ մտցրեք, վոր հանձնարարվում ե ընկեր Արքոյին, խոսել ուսուցչի հետ, վոր ընկեր Հելդարի անգրագիտութիւնը վերացնելու մասին մտածի:

Ալդպես ել արձանագրեցին:

Թննեցին շատ ուրիշ հարցեր ես: Հելդարը շատ բան դժվարությամբ եր հասկանում. նրան բացատրում ելին թուրքերեն լեզովի: Ամբողջ ժողովի ընթացքում Հելդարն աչքերը չեր հեռացնում Արֆուից. նրա ամեն մի խոսքը կարծես կարկտի հարված լիներ իջնելիս, Խոսում եր շարունակ, քննադատում կուլակներին, պահանջում եր, վոր շատերին ձախազուրկ անեն առաջիկա գյուղխորհրդի ընտրություններին: Ցեղ զարմանալին այն եր Հելդարի համար, վոր Արֆուի բոլոր առաջարկներն ընդունվում ելին ժողովի կողմից: Ասենք, իրենց գյուղի կոմիերիտ բջիջումն ել կային մի լերկու աղջկկ, բայց նրանք ուր, սա ուր...

Ցերք ժողովը վերջացավ և սկսեցին ցրվել տները, Արֆոն Հելդարին պատվիրեց, վոր մյուս որը լերեկուտան գա ժողովատեղին, վորպեսզի ծանոթանա ուսուցչի հետ և պարապմունքներն սկսեն:

Ցեղ լերք Հելդարը քայլերն ուղեց դեպի զոռքա Սարգսի տուն, զգաց, թե ինչ վոր մի բան ծանրացել ե իր սրտի վրա. կարծես մի մեծ ջաղացաքար լիներ դոշին գցած, վորը ճնշում ե ու արգելում շնչել. իսկ աչքի առաջ շարունակ Արֆոն ե կանգնած, վորը կարծես կրակի ալավ (բոց) հագած լինի: Նա սկսեց մանրամասն քննել Արֆուի արտաքինը: Բոլը քեչ կարձ կլինի իր բոցից, վճռեց իր մեջ. բայց մազերը, շեկ մազերը, կարծես հրեղեն ձիու բաշ լինի, վոր թափ ե տալիս, կասես հիմք մազերի ծալրից կրակ ե շաղ տալիս արեի շեկ մասեղների պես, իսկ աչքերը կասես փիրուղներ լինեն՝ կրակի հետ խաղալիս:

«Ամնթ քեզ, ամնթ, Հելդար.—մտածում եր ինքն իրեն մինչև լուսու—Ամնթ քեզ, վոր նախատինք կերար. դու մի անգրագետ բատրակ ես, զոռքա Սարգսի գլադեն, նա մի լուսավոր աղջիկ, մի ակախիվ, կրակի կտոր...»:

Զե, ինչ ել վոր լինի, Հելդարն անպատճառ պետք ե զրագիտություն սովորի, վոր ետ ամոթանքից աղատվի: Տես, ինչպես կաշխատի կոմիերիտական բջիջում, ինչպես ինքն ել ակտիվ կդառնա, Արֆուի պես ակտիվ, վոր կուլակների աչքը հանի...

## II

Մյուս որը զոռքա Սարգսին առավոտը վաղ գոռգոռում եր Հելդարի վրա, վոր գիշերը ուշ ե վերադարձել:

— Գլադա, գիշերը վմբառեղ ելիք:

—Կոմսոմոլի ժողովում.—հանդարտ պատասխանեց Հելդարը։  
—Կոնցոմիտ...—աչքերը չուլով ու դեմքը ծովուելով բացա-  
կանչեց զորքա Սարգիսը. կարծես գլխին թոխմախով տվին։—  
Ի՞նչ ես ասում, գլադա, դու հայի կոնցոմոլի ժողովում ի՞նչ բան  
ունես։

—Կոմսոմոլը կոմսոմոլ ա՛ հայ թուրքը վորն ա, խազելին,—  
մեղմ ու հանգիստ ժաղիսը դեմքին՝ պատասխանեց Հելդարը։

—Գլադա, դու կոնցոմոլ մս... բա իմ՝ առաջուց չելիր ասում։

—Խազելին, նաև իմ անունը գլադա չի, Հելդար ա, յերկ-  
ըորդն ել՝ ի՞նչ կա վոր կոմսոմոլ եմ. ամոթ բան ամ...  
—Ամոթ ա, թե ամոթի պես... խալտառակութին ա: Յես  
քեզ կարգին ջանել գիտելի, բանից դուրս ա գալի, վոր դու լել  
ես փշացած։ Աղա խելքը գլխին մարդը կոնցոմոլ կդառնամ. յա-  
կոնցոմոլը բատրակութին կանի՞...

—Վոնց վոր տեսնում ես, խազելին. հրես համ կոմսոմոլ  
եմ, համ ել բատրակ. իսկ թե ինչու մինչև հիմա քեզ չեմ ասել  
ետ մասին, սպասում ելի, վոր անձնական գործս գա, ու եսոր-  
եկավ։

—Անձնական կոռծ... —ծոր տվեց զորքա Սարգիսը. —անձ-  
նական կոռծն ինչ զատ ա...  
—Հրես, խազելին, ես ա անձնական գործը, վորը դեռ չեմ  
հանձնել քարտուղարին. —ծոցից հանելով հաստ թղթի մեջ կա-  
րած մի քանի թղթեր, Հելդարը տվեց զորքա Սարգսին, վորը  
շուռ ու մուռ տալով՝ կարդաց հաստ թղթի շապիկի վրա գրված  
ուսերեն խոչոր տառերը, լուրատեսակ հեղելով ու շեշտելով —

#### «Լ Ի Չ Ն Ո Ց Ե՞ Դ Ե Լ Ո՞»

—Բո՞... —զարմացած բացականչեց զորքա Սարգիսը և աչքե-  
րին չհավատալով՝ սկսեց տնդղել «անձնական կոռծ», ինչպես  
ինքն եր ասում, ապա գարձավ Հելդարին. —գլադա, ես գալի-  
կարդոնի թուղթ յես մին ել նաշախիկի դավթարխանումն եմ  
տեսել, ես վոնց ա քու ձեռն ընկելի

—Վոնց վոր են դավթարխանեն ա մեր ձեռն ընկել, ենակես  
ել եղ թուղթը, —ժպտաց Հելդարն ու նկատելով զուրի շփոթու-  
թլունը, սկսեց անդուսպ և բարձր ծիծաղել։

—Գլեթ, գլեթ, (գնա, գնա), —վրդովված շպրտեց զորքա  
Սարգիսը թղթերն ու վեր կենալով տեղից, սկսեց մըթմըթալով

յետ ու առաջ ման դալ պատշգամբում, վոր դարդերը քամուն տա:

Հեղարը թղթերը ծոցը գրեց ու գնաց իր բանին, իսկ զոռ-  
քա Սարգիսը «Եկչնոյն դելո» փնթփնթալով՝ հնար եր մտածում,  
թե ինչպես պարմանը քանդի Հեղարի հետ, դուրս անի ու ազատ-  
վի իր «Թուրք կոնցոմոլից»:

—Ա՛ մարդ, որը ճաշ դառավ, տուն մտի հացդ կեր, աշ-  
խարհի բան ունեմ անելու.—ձախ տվեց ներսից զոռքա Սարգիս  
կին Խումարը,

—Չոռ ու ցավ ուտեմ, զիսկում ու զահըուզոնեխ. ել հաց  
կուլ կզնա բողազմվս... Յես ել հենց գիդամ աբուռն լերեսին  
մարդ ա, դու մի ասի «Եկչնոյն դելոն» ծոցումը կոնցոմոլ ա:

—Ո՞վ, ա տղա, ինչ ես ասում, բան չեմ հասկանում...

—Մթամ լիս շատ եմ հասկանում, վոր քեզ ել ասեմ... Ետ  
մեր թուրք գլադեն, ետ Հեղամը ա, ինչ զիսկումի թիքա լա, կոն-  
ցոմոլ ա:

—Հա, ինչ անենք, թե կոնցոմոլ ա. Ջահել, աչքաբաց, զո-  
չաղ տղա լա, իրան բան ու գնրծին մուղալիթ, ել ի՞նչ ես  
ուզում:

—Խելքդ կարճ կնիկ ես, ելի. ցավն ել հենց են ա, վոր աչ-  
քաբաց ա լե... Աչքաբացն իմ ընչին ա պետք. թող ախմախ ըլի,  
խաղար, տգնտ, դունչը կապած հայլվան... Եզուց-ելոր, վոր կոն-  
ցոմոլը մի տեղից, յաշելին մեկել, բատրակների միությունն ել  
վրա լերեք զոլից վրա տան ու բգիս չոքեն, վոր նըա զոնլուզը  
(ոռոճիկը) ավելացնեմ, ազատ թողնեմ, վոր գնա ժողովներում  
լիուահաչի տա, լավ կլի... Յես տոնլուղ տամ, նա ժողով անի... Ետ  
ըլելու բան մ, լիս ետ բանի տերն եմ...—զալրացած հարձակ-  
վեց կնոջ վրա զոռքա Սարգիսը:

—Իրան բանն անի, պղծնի, ու թող ժողով ել գնա, մի  
ուրիշ բան ել վրեն. ջանն իրանը դուրս գա, ինքն ա քնից ընկ-  
նելու, քեզ ինչ վկաս: Կոնցոմոլն ինչ մի փիս բան ա վո՞ր...  
Երեկ ընդունեն՝ իմ Ռսանին ել զրկեմ. խեղճ լերեխես ինչ շկոլը  
պրծել ա, աչքը չի ցամաքում. սաղ որը սեռվ սուրդ ա անում: Նրա  
հետ ավարտածնին հրեն կոնցոմոլ են դառել, յաշելիա մտել, գրում  
են, կարդում, թատրոն են խաղում...

—Զենդ կտրի, թե չե հրես...—զոռքա զոռքա Սարգիսը.—  
պակասս ետ եր, վոր աղջիկս լրբանոց ել զրկեմ...

Այլողի որը զոռքա Սարգիսը հանգիստ չուներ: Նա, վոր իր գլուղացի բատրակներից վոչ մեկին շվարձեց, վորպեսզի նրանց միությունից ազատ լինի, հիմի ցավը կրկնապատկվել եր, վորվէնետև Հելդարին նա վարձել եր տարեկան 30 մասնեթով, իսկ ես բանը վոր իմանալին, նրա հոգին հանելու ելին, մանավանդ վոր Հելդարը կոմիերիտական եր և աչքաբաց:

Մութն ընկնելու վրա լեր, լերը զոռքա Սարգիսը մին ել են տեսավ, թե ինչպես Հելդարն ու Ակսի ի վ ը միասին զրուց ելին անում զպրոցի մոտ: «Հիմի վոր բանս պրծավ», —միտք արավ զոռքա Սարգիսը, «թե վոր եղ աղջիկն իմացել ա բանի զորությունը, եգուց գլխիս հարսանիք ա սարքելու»:

Իսկ գիշերն անկողնում պառկած՝ շուռ ու մուռ եր գալիս զոռքա Սարգիսը, վոնց վոր կրակի շեղջի մեջ ընկած լիներ: Կինը համարձակությունը հավաքած՝ դարձավ մարդուն.

—Ա՛ տղա, Սարգիս, դհւս արա, Ելի. Ի՞նչ ես մորմոնջ (մըրջուն) ընկած արջի պես պարան-պարան անում:

—Լավ դուս կանես, վժնց չե. մեկին-լերկու վզակոթիցս կհանեն հախը, եսոր իրիկուն Ակտիվի հետ եր զրից անում ետ գրադեն, ինքն ել հրեն «լիչնոե դելոն» ծոցումը:

—Ետ ել թնչ բան ա, —հարցրեց կինը:

—Տն լես գիդման... վոնց վոր լերկում ա, դա ավելի թունդ կոնցումոլ ա, մերոնց պես չի. մի թուղթ ունի՝ վրեն գրած «լիչնոյե դելո»: ինքը նրան «աձնական կոռծ» ա ասում. համա իսկի խելքս հասնում չի, թե դա ինչ զատ ա. ետ դայտի թուղթ, ըտենց ել կարած, մին ել ուկեզդնի նաշալնիկի դավթարխանումն եմ տեհել իմ քչոխվա ելած տարին: Միտք եմ անում, միտք, ու են եմ փահմ անում (կարծում), վոր դա, յա որենքի մարդ ա, յա թե չե... մի խոսքով՝ կոռծերն ուգալովնի յա...

—Ախր ա կնիկ, ել եմ թուրք նոքչար ունեցել, համա սրա բանն ուրիշաւ: Հենց եկած առաջին որը վոր մեր հացը կերավ ու մեր խմած փարչից ել ջուր խմեց, ետ բանիցն իսկի յես առա վոչ... (դուր չեկավ, ինձ չկալավ):

—Բա հիմի վժնց պտիս անիլ...

—Քնի, քնի, զահես տանիլ մի, բալքի խելքս թոփ անեմ. հենց ել փիս ժամանակ ա. եգուց-ելոր ես մեր գեղի խորհուրդն ընտրիլ պտեն. վոր ես գլադի հետ զալմաղալ քցեմ, պլանս կքանդ-

վի. մնացել եմ ջրի ու կրակի մեջ տեղը, — ասաց զոռքեն ու  
շուռ եկալ մեկել կողքի վրա:

Իսկ առավոտը, իերք զոռքա Սարգիսը քնահարամ, աչքերը  
կարմրած՝ իջավ գեպի գոմը, հեռվից նկատեց, թե ինչպես Հել-  
դարը գոմի դռանը նստած, ծնկանը մի գիրք դրած՝ թերթերը  
շուռ ու մուռ և տալիս ու ինչվոր գծեր քաշում կողքին դրած  
տնտրակի մեջ: Զոռքա Սարգիսը գաղտագողի մոտեցավ: Գիրք  
եր, հայերեն գիրք, վորին խորասուզված նալում եր Հելդարը,  
կարծես ուզում եր տառերն ուղեղի մեջ տպի:

— Դիմդա, ետ ի՞նչ բանի յես, — զոռքա զոռքա Սարգիսը:

Հելդարը գողութիւն մեջ բռնված իերեխալի պես վեր թուավ  
և գիրքն ու տետրակը ձեռքում պինդ հուպ տված, շփոթութիւն-  
նից կապ ընկնող լեզվով թե՝

— Կար... կարդում եմ...

— Ի՞նչ ես կարդում, «լիչնոյե՛ դելո՛», — հեգնեց զոռքան:

— Զե՞ն, խազելին, գի՞րք ա, հայերեն գիրք:

— Հայերեն գի՞րք... գլանդա, հայ ետ դառնոնդւմ. դե՛ ա՛սա  
տերտերին կանչեմ քեզ հալալի, ելի, գինըդ (կրոն) փոխի, քըս-  
տոնյա դառ... Գլանդա, մվ ավեց քեզ ետ գիրքը:

— Արքոն, — պատասխանեց Հելդարն ու իր մեջ փոշմանեց,  
թե ինչու նրա անունը տվեց ետ կուլակի մոտ, վոր ով գիտե,  
ինչեր չի մտածի, ու ավելացրեց. — կոմիերիտ բջիջը, վարժա-  
պետը...

— Այ դու հարամզադա, սուտ խոսալն ել ես սովորել, համ...  
դե չուլ ու փալասդ հավաքի, վեր կաց կորի ձեր տուն, ետ զայ-  
դի բատրակն ինձ պետք չի. յես զեն ածելու փող չունեմ, վոր  
քեզ տամ, դու գնաս ժողով անսես, զրել կարդալ սովորես ու  
եզուց-ելոր գաս զլիսիս փորձանք գառնաս: Բատրակն ի՞նչ, գիրն  
ու դալամմ ի՞նչ... գլանդա, դուն ել վոր գիր ու դալամ բանեցնես,  
բա մենք ինչ բանի կենանք: Թու գիրը գոմն ա, դալամն ել՝  
թին, իմացմբ. ինձ փիլիսոփա բատրակը ձեռք չի տալ:

— Լավ, — հանդարտութիւնը պատասխանեց Հելդարը. —  
գոմը քերել եմ, ձիուն ջուր տվել, թիմարել, ազրանքը դուրս ա-  
րել, խոտ տվել. հիմի յել ինչ վոր բան կա անելու, ասա անեմ.  
գործս հո հետ չի մնացել, վոր ժողովի, յա գրքի լախիցն ես կպել.  
իմ աղաս ժամանակ վոր ժողովի գնամ կամ գիրք կարդամ, քեզ  
հո մի մնաս չի համնում դրանից:

— Հա՛լդա. լեզուդ քեզ քաշի, գլանդա. մվ ա տեսել, վոր

նոքարն աղին ջուղաբ տա. քեզ ասում եմ՝ վեր կաց կորի իմ  
տանիցը, թե չե...

— Լավ.—նույն հանդարտութլամբ պատասխանեց Հելդարը.  
— պայման ունենք. մեր պայմանի համաձայն հախս տուր, կգնամ  
թե չես ուզում:

— Պայման-մայման չեմ ճնանչում:

— Ետ վժնց կըլի, խաղելին.—ժպտաց Հելդարը.—որենք  
կա, սովետական զակոն կա, վժնց թե չես ճանաչում...

— Դե, լավ, լավ,—խոսքը կարեց զոռքա Սարգիսը.—քեզ  
ով ա բան ասում, գիրք չե, ուզում ես ավետարան ել կարգա,  
համա լնկ, ջահել ես, մի բան ասեմ:—Ու զոռքա Սարգիսը մոտե-  
նալով՝ սկսեց մտերմաբար խոսել Հելդարի հետ, ձեռը նրա ու-  
սին դնելով:—Հանաք արի, նեղանաս վոչ, վորդիս: Եսոր-եսոր  
դու խեղճ, քասիք մարդու տղա չես, քեզ վալել չի ինձ պես աղա-  
մարդու հետ եղած խոսալը. արի՝ կոնցոմոլից դուս արի, դոն-  
լուզդ ել ավելացնեմ, քեզ ել աշքիս լուսի պես պահեմ:

Հելդարը քմծիծաղ տվեց:

— Լավ, —շարունակեց զոռքան.—վոնց վոր տեսնում եմ,  
համաձայն չես. դե, թնչ արած, հալա ջահել ես, խելքդ չի կտրում,  
վոր ես աշխարհը փոփոխական ա. քու խերն ու շառը չես ջոկում,  
վերջը կփոշմանես. դե վոր դրան համաձայն չես, խոսք տուր՝  
ինչ վոր ձեր կոնցոմոլի ժողովում զրից անեք, ինձ մի առ մի  
պատմես, թե...

Զոռքան դեռ խոսքը չեր վերջացրել, լերը Հելդարը շուռ-  
լեկավ ու գնաց:

— Գյաղա, ևր ես գնում,—գոչեց զոռքա Սարգիսը, վորը  
դայրույթից դողում եր:

— Գնում եմ փետ անեմ, եսոր հաց են թխելու, —պատաս-  
խանից Հելդարն ու կացինը պատի տակիցը վերցրեց:

### III

Ետ որվանից զոռքա Սարգիսը Հելդարի հետ քաղցր եր վար-  
վում. նա վոչ միայն չեր խանգարում նրա պարապմունքները,  
ալլ ընդհակառակը, շատ անգամ իր աղջկանը, Ոսանին պատվի-  
րում եր, վոր Հելդարի դասը սերտելուն ոգնի, «վրա զցի»: Հել-  
դարի համար սա մի հանելուկ եր, վոր չեր կարողանում բացա-  
տրի, և հաճախ, լերը խոսք եր բացվում կոմյերիտական բջիջում  
զոռքա Սարգսի մասին, նա դրական կարծիք եր հայտնում:

Գլուղխորհրդի ընտրությունների պալքարն սկսելու հրահանգն ստացվել եր, և կոմբջիջն ու կոմիերիտքջիջը վոտքի վրա ելին:

Հելդարն արդեն բավական ծանոթ եր տարվելիք աշխատանքների հետ, և նրան հանձնարարված եր բատրակների միության մեջ կազմակերպչական գործն ուժեղացնել: Արֆոն, ինչ վորփոքը իշտառ պատասխանատու անելիք եր լինում, պնդում եր, վոր հանձնվէ Հելդարին, վորը կաշվից դուրս գալով կատարում եր՝ ամենաշատ լեռանդը թափելով:

Սակայն մի որ, յերբ կոմիերիտ ու կոմբջիջի խառը նիստում քննում ելին կուլակների ցուցակը՝ ձայնազուրկների թիվը վորոշելու համար, Հելդարը դրական կարծիք հայտնեց զորքա Սարգսի մասին, վորի գեմ Արֆոն—ալնպես բողոքեց, խեղճ Հելդարը չիմացավ վնր ծակը մտնի:

— Դիտենք այդ անատամ գելին, լավ ենք հասկանում: Նրան,—ասաց Արֆոն.—ազվեսություն ե անում, վոր մոլորեցնի մեղ. պետք ե ձայնազուրկ անել: առանց մի խոսքի:

Ժողովն ուշ վերջացավ ու յերբ ընկերները ցրվում ելին տները, Ակտիվը մոտեցավ Հելդարին ու մտերմարար նրա ուսը թոթվելով՝ հարց տվեց.

— Հը, ընկեր Հելդար, հո չնեղացմը նկատողությանս համար. դու զեռ չգիտես, թե ինչ գազան ե քո աղեն. նրա հետշատ զգուշ պետք ե լինել: Ապրես, ուսուցիչն ասաց, վոր դու արդեն վարժ գրում-կարդում ես. դա լավ նշան ե. տանը հո չեն խանդարում պարապմունքներդ:

Ու Արֆոն բռնեց Հելդարի թեր, վոր խավար ճանապարհին վայր չընկնի:

— Վհ՛, — պատասխանեց Հելդարը. — ընդհակառակը, շատ անդամ Ոսանն ոգնում ե, են ել իր հոր պատվերով:

— Այդ լավ ե. Ոսանը լավ աղջիկ ե. բայց և ալնպես զորքա Սարգիսը ձայնազուրկ կլինի:

Հելդարն ու Արֆոն ալնպես ելին տարվել այս խոսակցությամբ, վոր արդեն հասել ելին Արֆոյենց տան դուռը, մինչդեռ Հելդարը հակառակ կողմն եր գնալու:

Հելդարն այնքան մոտ եր Արֆոյին, նրա թես այնքան կապած եր, վոր մի ջերմ հոսանք կարծես անցնում եր Հելդարին, մի տեսակ թմրեցնելով առանց այն ել նրա շփոթված ուղեղը.

իսկ ջերմ հոսանքի հետ միասին, մի ինչ վոր սարսուռ ել եր պատել նրան:

— Դե, ընկեր Հելդար, ցտեսություն. չմոռանաս, վոր վաղը չե, մուս որը պետք ե բատրակների միության մեջ խոսես կուեկտիվ պարմանագրի նշանակության մասին. լավ պատրաստվիր, վոր չխալտառակվես. վաղը իս քեզ վորոշ նյութերի հետ կծանոթացնեմ. ինքս ել կաշխատեմ ներկա լինել ժողովին, վոր յեթե պակաս բան թողնես, լրացումներ անեմ,—ասաց Արքոն ու Հելդարին ձեռք տալով՝ ծովեց դեպի տան սրահը:

Հելդարը մի ըոպե կանգ առավ, նայեց նրա յետեից, ու յերբ դուռը ճոռալով փակվեց, յետ դառավ դեպի տուն: Հելդարի մտքով հազար ու մի բան անցավ Արքոյի մասին: Նրա սիրտն ուժգնորեն բարախում եր, և թշերն ու ականջներն այրվում ելին, կարծես թեծ արևի տակ լիներ: Բայց հանկարծ նրա միտքը թռավ դեպի բատրակների ժողովը, ուր նա խոսելու յեր, այն ել Արքոյի ներկայությամբ, ու գլուխը կախ՝ մտքում ծրագիր եր կազմում, յերբ մին ել մթության մեջ ստվերի նման յերկու հոգի ցցվեցին նրա առաջ: Դրանցից մեկը զորքա Սարգիսն եր, մուսը՝ տեր Միհակը, վորին տեր-Լապատկա ելին ասում, վորով հետև միրուբը նման եր լապատկալի (յերկաթե թի):

— Գլադա, դու քանի գլուխ ունես, վոր ուղում ես ետ աղջկա հետ ոյին խաղաս,—գոչեց զորքա Սարգիսը:—Զեր կոնցոմոլ ու յաշելկա իրար կիսառնեմ, գեղը տակն ու վրա կանեմ... Հը՛, թնչ կասես, տերտեր, ել ուրանալու տեղ կմ... Կես գիշերին իրար հետ, ես խավարի մեջ, սրահի տակին... թնչ կա վոր... մի խեղճ ու կրակ պառավ ա, խելքն իր սպանված տղի հետ թաղած... Հայ գիղի հեյ, շնկ Արսեն, գերեզմանդ փորթ ըլի ու միջիցը դուս պրծնես, տենաս վոնց ա աղջիկդ դուշմանիդ հետ կես կնգութին անում...

— Դե, գլադա, քանի հալա մութն ա, վեր կաց հենց կորի, վոր իզդ ու թողդ չերևա, թե չե սուրբ մեռոնը վկա, առավուը լուսանալուն պես՝ կապել կտամ մատաղափետից ու սաղ-սաղ կմաշկեմ...

— Տե՛ր, մի դարձուցաներ զերեսս քո հինեն...—փնթփնթաց տեր-Լապատկեն, վորից Հելդարը բան չհասկացավ, ապա ավելացրեց.—հալածլա զչարն... Սարգիս քովսկա, Լուսավորչի կրոնը պղծվում ե, սա արգեն գերեզման տանելու բան չի:

— Տեր-Միխայիլ-բեգ,<sup>1</sup> սրա դատաստանն իմ ձեռողջն եմ անելու, իմ ես աջ ձեռովը: — Ապա դառնալով Հելդարին՝ գոռաց: — « լիչնուե՛ դելո՞», հը՞, կոնցոմոլ, հը՞... դլադա, չքվի՛, թե չե հըես սադ գեղը գլխիդ հհավաքեմ. հալա առաջս կանգնած ես... — Ու հարձակվեց, թե Հելդարին բռնի:

Հելդարը մի թեթև վոստունով խուսափեց ու հուզված, խոռված հոգով, մտամոլոր, քալիերն ուղղեց դեպի կոմքջիջի քարտուղարի տան կողմը, լեռնեից լսելով, թե ինչպես զոռքա Մարգիսը գոռզոռալով ասում եր տեր-Լապատկին. /

— Եկուց մի են տեսակ հարսանիք անեմ լես դրա գլխին, վոր սադ զեղը թամաշա դուս գա: Ախր Միխայիլ-բեգ, ով ա լսել թուրքից կոմունիստ, յա կոնցոմոլ... թուրքից կոմունիստ կըլի՞:

— Սարդին քուսկա, ավելի շուտ իմ ես փարաջայից սատանա կծնիի, քան թուրքից կոմունիստ: Կոմունիստը ինքը տերն մեր Հիսուս Քրիստոսն եր... Այսքան դարեր ամբողջ քրիստոնլա ժողովուրդը դրանց չկարողացավ դարձի բերել, հիմի մի-լերկու տարփա մեջ կոմունիստ դարձան...

— Բա ես Ակարիվին ինչ կասես, հը...

Հելդարը հեռացել եր և այլս լսեց նրանց խոսակցությունը. միայն վերջին խոսքը կարծես նրա սիրտը սուր նշտարով ծակեց, վորովհետև իր պատճառով՝ Արքոն եր վարկարեկվելու, անվանարկվելու...

\* \* \*

Հելդարը հուզված ու շփոթված կանգ եր առել գլուղի ծալրի ճամբարամիջին և մտածում եր գլուխն առնել կորչել զեպի իրենց գլուղը, գեպի մի անհայտ ու անորոշ տարածություն, բայց մեկ ել մտածեց առաջ պատմել այս բոլորի մասին կոմքջիջի քարտուղարին ու լսել նրա խորհուրդը, և հետո թողնել գլուղը: Ու քալիերն ուղղեց դեպի կարոլի տունը:

Կոմքջիջի քարտուղար Կարոն, վոյ մի խոհուն մարդ եր՝ 35 տարին անց, ուշագրությամբ լսեց Հելդարին, վորն արցունքն աչքերին պատմեց ամբողջ լեղելությունը սկզբի որից մինչև վերա յին գիշերվա դեպքը, ավելացնելով, թե ինքը Արքոյին պարտական ե նրանով, վոր այժմ գրագետ ե դարձել և վոր նրա արած

1 Տեր-Լապատկեն բեգական ծագում ուներ և շատ եր սիրում, վոր իրեն շոյում եյին յերկու տիտղոսով՝ «տեր» և «բեգ»:

լավության փոխարեն չեր կամենա արդարիսի խալտառակ պատ-  
մության պատճառ դառնա ու վերջում հայտնեց, թե ինքը կա-  
մենում ե գուղից իսկուն և լեթ հեռանա:

— Դու վհչ մի տեղ չես գնա, —սառն ու կտրուկ ասաց Կա-  
բոն: — Եեթե հեռանաս ալստեղից, դա ավելի վատ ե վհչ միայն  
քեզ ու Արֆոյի համար, այլև ամբողջ կոմիերիտական բջիջի, վորը  
զոռքաների աչքի փուշն ե դառել: Վեր կաց ու հանգիստ գնա  
տուն: Հեռանալդ կնշանակի, վոր զոռքա Սարգսի բամբասան-  
քը ճիշտ ե. ամենքը նրա կողմը կլինեն ու կոմիերիտականնե-  
րին վարկաբեկելու տեսակետից նրանք հասած կլինեն իրենց  
նպատակին: Գնա տուն, զոռքան չի համարձակվի քեզ ձեռք տալ:

Եերբ տանից դուրս ելին լեկել և Հելդարն ուզում եր բա-  
ժանվել, Կարոն մտերմաբար թոթվելով նրա ուսը, հարցրեց, թե  
Հելդարը չի սիրում արդյոք Արֆոյին, և լեթե սիրում ե, ապա  
ալդ մասին խոսք լեղել և Արֆոյի հետ:

Հելդարը հուզմունքից դողում եր: Նա չգիտեր՝ ինչ պա-  
տասխան տա Կարոյին. «սիրում ե արդյոք Արֆոյին», ահա մի  
հարց, վոր դեռ իրեն համար ել պարզ չեր. սակային ինչ վոր մի  
քան ավելի չեր զգում դեպի Արֆոն, քան դեպի ուրիշ աղջիկնե-  
րը: Ինչ ասի, ինչպես ձևակերպի իր միտքը, վոր Կարոն սխալ  
չհասկանա իրեն: Ակսպիսի մտատանջության մեջ եր Հելդարը, չերք  
Կարոն ընդհատեց լուսթյունը:

— Շատ յերկար լոեցիր, Հելդար. կնշանակի մի բան կա,  
վոր չես ուզում ասել կամ չես կարող ասել...

— Զգիտեմ, վոչինչ չգիտեմ. ինչպես ասեմ... Նա շատ լավ  
աղջիկ ե. խելք, ակտիվ... Կմկմաց Հելդարը:

— Թե, լավ, լավ, —ընդհատեց նրան Կարոն. — գնա, վազը  
կխոսենք:

Հելդարը կոտրված սրտով մոտեցավ զոռքա Սարգսի տանը,  
յերբ հեռվից լսեց, թե ինչպես տեր-Լապատկեն ուրախ ծիծաղե-  
լով հեռացավ զոռքի տնից, ասելով.

— Քյոխվա Սարգսի, բանը պրծած ա. յես Գյողալ պառավին  
հենց քոքեմ վոր... Նրան վոր ասեմ իշխ պես զուա, կզոա...

— Հելդարը մի քիչ կանգ առավ. մեկ ուզեց մթության մեջ  
հարձակվի եղ քավթառ տերաերի վրա, ցեխումը արորի, մեկ ել  
մտածեց, թե բանը կարող ե տվելի վատ վերջանալ, ու յերբ զոռ-  
քեն յետ դարձավ, մտավ տուն, և տեր-Լապատկեն ել բավական  
հեռացել եր, նա փոխանակ տուն գնալու, խոռված հոգով քայլերն

ուղղեց դեպի գոմը, առանց իմանալու, վոր Կաբոն, քջիջի տղաներից մի քանիսի հետ միասին, զինված հսկում են զորքալի տան չորս կողմը:

Աքլորականչ եր, վոր զորքեն գոմը մտավ ու տեսավ Հելդարին դռան տակին նստած, գլուխն ափերի մեջ առած:

— Այ, ափերիմ, իգիթ ես.—ասաց զորքեն.—լավ վոր եկել ես: Աղի ու նոքլարի մեջ հատեսակ խոսք ու զրից շատ կպատահի: Տնաքանդի տղա, բանդ հնաց բռնի, վոր խալխը տենա վոչ, թե չե... իմ անումն ել քոնի հետ ես ուզում խալտառակես... և զի գիտում, վոր ջահել տղեն ու սիրուն աղջիկն իրար կսիրեն: Դու իմ խոսալուն մի մտիկ տալ. սիրս գուզ ա. են ել տերտերը հետս եր, ճար չկար, վրեդ բղավեցի, դու քեփդ քոք պահի, ինչ վոր սրտումդ կա, ինձ պատմի. եսոր-եսոր լես եմ ես գեղումը քու տերը:

Հելդարը մնացել եր շշմած, շվարած ես վերաբերմունքից. նա չգիտեր ինչ ասի, ինչ զիրք բռնի, լերը զորքա Սարգիսը թե՝

— Շատ մարդու ձախազուրկ արթն...

— Զգիտեմ. կենտրոնն ե վորոշելու.—պատասխանեց Հելդարը հաղիվ-հազ:

— Իսկ իմ մասին ինչ վճռեցին:

— Զգիտեմ:

— Սուտ մի խոսա, զու ըլես քու Ակտիվի արևը.—մաղձութ ժպիտը դեմքին ասաց զորքա Սարգիսը:

Հելդարը շշմածի պես չիմացավ ինչ պատասխան տա ետ լիրը ակնարկին:

— Հապա, բալա ջան,—շարունակեց զորքա Սարգիսը:—Եղ զիփ մի կողմ. մարդ աշխարհի բանը վոնց բռնի, ենպես ել կզնա. մենակ հիմի ես մեր գեղի խորհրդի ընտրության ժամանակ պետք ա հենց խոսաս, վոր ինձ ընտրեն. են վախաը տես, թե վհնց եմ քեզ պահում-պահում:

— Եես վոչինչ չեմ կարող անել, —կարմրած պատասխանեց Հելդարը:

— Կանես, կանաս, առաջվա նոքլարնին ինչ վոր իրանց աղեն հրամաւեր, են ել կանելին: Դու վոր մենակ քու Ակտիվին համոզես, մեկելի բանը հեշտ ա. նրա խոսքն անց ա կենում:

— Ետ լես չեմ կարող, —գրգռված պատասխանեց Հելդարը:— դա կոմբջիջի գործն ե:

— Վթնց թե... իմ հացն ուտես՝ ուրիշի խոսքով ժամ գմա...

— Ես իմ աշխատանքն եմ ուտում, — համարձակություն ձեռք բերած պատասխանեց Հելդարը: — Քո տան վերաբերյալ գործի մասին ինչ պատվիրես, պարտավոր եմ անելու, իսկ ինչ վերաբերում ե ընտրություններին, ինչպես բջիջը կարգադրի, ենպես ել կանեմ:

— Ետպես հմ... — զարացավ զոռքա Սարգիսը: — գլանա, փիս շան պես իմ լակն ուտում ես, ուրիշի դունը հաջում... Դե, թող ինձ Սարգիս քոխվա չասեն, յետեկցս սև շուն կանչեն, թե դու գլուխդ սաղ ես գեղիցը դուս գաս:

Զոռքա Սարգիսը սպառնալից հայացք գցեց Հելդարի վրա, փեշերը թափ տալով հեռացավ, իսկ Հելդարը քարացած, տեղը շշմած մնացել եր ու չեր կարողանում պարզել այն մտքերը, վորոնք խառնվել ելին նրա ուղեղում ու ստեղել մի կատարչալ քառս: Նրան մի ըոպե թվաց, թե Արքոն կանգնեց իր առաջ բարի ժպիտը դեմքին...

Լուսածեգ եր:

#### IV

Առավոտյան ամբողջ գլուղը դրմբում եր:

Եին ու աղջիկ աղբը ում ու տներում քիթ քթի դրած՝ են ելին քչփշում, թե Հելդարն ու Ակտիվը գիշերը, սրահի տակին...

— Վայ... մազդ վեր գա, աղջի... ես ել ինչ նոր բան ա, տղեն գլխիցդ կտրած, թուրքի լակոտի հետ ընկմբը...

— Աղջի, գե են ա հարամ կաթնակեր ա, ելի. մերն են չե՞ր, ինչ տունն ու երեխեն, պառավ կեսուրը թողեց, մարդու գնաց...

— Ասում են կոնցոմոլի դալդեն ետ ա. թուրք ու հայ չկա, դիմ մին են...

— Ասում են Գլոզալ պառավի ձեռիցը թոկը զոռով են խլել հարեաննին. ուղեցել ա խեղպվի:

— Բա վճնց եք իմացել կոմինիստի զակոնը. ել ազգ չկա, կրոն չկա, հոգի ու հավատ չկա, աստոծն ել ա դրանց ձեռիցը փախել, կորել. ել լսում չի...

— Աղջի, ասում են յաշելիեն Հելդարին մկրտիլ պտի, հայ շինի, տերտերը մեռոն չի տալիս...

— Զազս են զնացել, պրծել, Զազս... խելքներդ վմրդի յա...

Բամբասանքի տոպրակ վասուբեգի կնիկ Շուշին, վորի առունը «տիլիխոն Շուշի» ելին գրել, թեք ու փեշը հավաքած՝ տնեսուն, թաղե-թաղ շրջում եր ու մեկին հարլուր ավելացնելով

պատմում, թե ինքն իր աչքով տեսել և Հելդարին ու Ակտիվին Մոպրի բազումը պաշտպելիս ու հաղար ու մի նման մտացածին հերլուրանքներ սագացնում նրանց վրա:

Իսկ գուղամիջում, խալիս հավաքված՝ ղորոռում եր և դատ ու դատաստան պահանջում, վոր «թուրքի գլադին» գլխատեն: Ձոռքա Սարգիսը մի կողմ քաշված՝ ձեռքի թիզքեհը (համըրիչը) կամաց շրիկացնում եր և, մի տեսակ «չեզոք դիրք բռնած», մեկմեկ միայն ձայն հանում, վորն ավելի Հելդարին պաշտպանողական եր, քան հարձակողական, իսկ դրա փոխարեն տերևապատկեն «ժմամ» ու պատարագ» բերանն առած, «կրոնի համար սուրբ նահատակների անունները կարկտի պես վրա տալով, պահանջում եր անպայման լերկու հանցավորներին, կրոնն ու խաչ-ավետարանը պղծողներին պատժեն, լերեսները սև մազութքսեն ու դոնեղուան ենքան ման ածեն, վոր սաղ գյուղը լերեսներին թքի, վոր նրանց սև լերեսը թքով սպիտակի:

— Ես ամեն բան անողը լաչելկեն ա, լաչելկեն,—գոռում եր մեկը...

— Կոնցոմոլն ա, կոնցոմոլը, վոր ժամ ու խաչ չի ճնանչում. — վրդովված ճշում եր մեկ ուրիշը...

— Պայման ա, պայման. թուրքի գլադին են Ակտիվ քածը հայերեն գիրք ա տվել, վոր հայերեն գրել կարդալ սովորի, հայանա ու հետը պսակվի, շեկ Արսենի ողախին տեր դառնա...

— Ա՛ղա, ի՞նչ եք դալմաղալ գցել, — միջամտեց զոռքա Սարգիսը. — զոչաղ տղա լա, սիրուն աղջիկ, իրար սիրել են, ում ինչ գործն ա...

— Թու համ, թու համ, քրոխվա Սարգիս, դու յել ես ըտհենց ասը՝ մ... բաս ենա հավատդ ուրացի, զնա լաչելկա դառ, ելի... — նախատեց մի ծերունի, հին քրոխվալութլուն արած մարդ, վորը բոլոր կոմունիստներին լաչելկա յեր ասում:

— Յանի ի՞նչ մի փիս բան կըլի, վոր լաչելկա դառնամ, Մուսալել քրոխվա, վախենում ես կարմամ վոչ կործկոմ (գործկոմ) դառնամ, գեղ կառավարեմ, թե՞ ուժու չի պատիլ, թե խոլքս Ղանդոյի տղի չափ ել չի կտրիլ նոր զակոնիցը:

Այսպես խոսակցության նյութը մերթ փոխվում եր, դառնում կոմըջիջի, կոմէրիտաների, բատրակների միության, կոռպերատիվի, գործկոմի և այլ հիմնարկությունների ու կազմակերպությունների շուրջը, մերթ դառնում ելի Հելդարի ու Ակտիվի «պատմության» շուրջը, վորը խոսակցության միակ գլխա-

վոր առանցքն եր, և վորի առիթով ինչ վոր անցած-գնացած թերություններ ու սխալներ ելին լեղել այս կամ այն կոմբջիջի տնդամի կամ հասարակական նոր կազմակերպության վորեն անդամի կողմից՝ մեջտեղ ելին լեղել ու հրահրում մարդկանց միտքը, կրակն ավելի բորբքելով:

Ցեկ մինչեռ գյուղն իրար խառնված քննադատում, թեր ու դեմ կարծիքներ եր հայտնում, կոմբջիջը .և կոմիերիտ ըջիջը խառը արտակարգ ժողով եր հրավիրել՝ քննելու համար ընկեր Արքովի և ընկեր Հեղարի գործը:

\* \* \*

Կոմբջիջի քարտուղար ընկեր կարոն ժողովը բանալով՝ պատմեց լեղելությունը, ինչ վոր նախընթաց իրիկունը Հեղարը նըրան ասել եր.—ավելացրեց, թե պետք ե զգուշ մոտենալ հարցին, վորովհետև զուբաները, կուլակներն ու հակաները որը ցերեկով ել ճրագ վառած՝ փնտռում են, վոր մի կեղտ գտնեն կոմիերիտականների, մանավանդ կոմիերիտական աղջկների վրա:

Ժողովականները լուր ելին. Վոչ վոք չեր ուզում, թե չեր համարձակվում խոսել, վորովհետև խոսքը վերաբերում եր Ակտիվին, վորից այնքան քաշվում, ճնշվում ելին. սակայն շուտոշուտ նայում ելին Հեղարի կողմը մի տեսակ կասկածանքով: Իսկ Հեղարը սփրթնել, մոմի պես գեղնել եր. կարծես նրա արլունը ցամաքել եր:

Լուսթյունը խախտեց ինքը, Արքոն, ձայն խնդրելով նախագահից: Նա խիստ հուզմունքից ջղաէնացել եր, ու խոսելիս հաճախ կապ եր ընկնում լեզուն:

—Ի՞նչ եք ամենքդ ել լրել, ձայն չեք հանում. միթե չեք հասկանում, վոր դա կուլակների սարքած հերթական պրովակացիան և մեր դեմ, վոր խավար և անկազմակերպ մասսալին մոլորեցնեն, իրենք ձայներ շահեն: Վորտեղ և ձեր կոմունիտական տոկունությունը ...

Սուտ ե, լրբերի հնարած սուտ: Յես հավանում եմ Հեղարին, այս, մինչեւ անգամ սիրում եմ նրան. նա ընդունակ ու յեռանդուն տղա յե. յերեք ամսում զրել-կարգալ ե սովորել, իսկ սա քիչ բան չե. ինչ աշխատանք վոր տվել ենք, կատարել ե առանց վորնե թյուրիմացության. նա կարեոր ուժ և և նլ ավելի

կարևոր կդառնա. հարկավոր ե միայն առաջ քաշել նրան, վո-  
գերել, և իս այդ ուղղութիւնը աշխատում եմ. բայց սա նշանա-  
կում ե, թե մեր մեջ վորեւ ուրիշ կապ կա, բացի զուտ ընկերա-  
կանից, իսկ յեթե լինի, ի՞նչ ե, կարծում եք, թե իս զուրա  
Մարգարին, աեր-Լապատկին կամ թեկուզ հենց իմ տատին կհարց-  
նեմ ... Զգուշ, ընկերներ, ընտրական պայմանը կարող ենք տա-  
նու տալ:

Ժողովականները թեր և դեմ արտահայտվում ելին՝ անորոշ  
բաններ ասելով. շատերի կարծիքը հակվում եր այն կողմը, վոր  
ընտրական պատքարին Արքոն ու Հելդարը չմասնակցեն, գլու-  
զացիններին չգրգռելու համար, վորի դեմ Արքոն փրփուրը բերա-  
նին բաղոքում եր, ասելով՝ թե նման պահանջը կնշանակի գոր-  
ծի կեսը առնուլ տալ ու յենթարկվել կուլակների բամբասանք-  
ներին ու զրպարտություններին:

Իսկ գերձակ Աղալոն, վոր դեռ կուսակցության թեկնածու  
յեր և աչք ուներ Արքուի վրա, և վորն Արքուից գաղտնի խնա-  
մախոս եր ուղարկել Դիոզալ պառավի մոտ, իսկ վերջինս միա-  
մտաբար ասել եր այս մասին Արքուին, ձայն խնդրելով՝ նստած  
տեղն որորվելով թե՝

—Դե, ենա ... ենա վոր հնգեր Արքոն իրա բերանողն  
ասում ա, թե ինքը Հելդարին համ հավանում ա, համ ել սի-  
րում, մենք ել ի՞նչ կարանք ասենք, լա ի՞նչ կարանք անենք  
վոր ...

—Դու լավ մտիկ, վոր թելն ասեղի ծակովն ուղիղ անցկաց-  
նես, չսխարվես աչքդ կոխես,—հարձակվեց Արքոն.—լավ գիտեմ,  
թե եդ խոսքերը վժրտեղից են գալիս: Դու են մարդն ես, վոր  
Խորհրդակին իշխանության որով, ինքդ ել կոմկուսի թեկնածու,  
խնամախոս ես ուղարկում տատիս մոտ՝ ձեռքս խնդրելու: Վողոր-  
մելի, գնա կուլակների ծափին ծափ տու, կոմքջիջը քու տեղը  
չի ...

Ժողովը հետզհետե ավելի տաքացավ, բայց խոսողները վոչ  
մի յեղակացության չելին գալիս: Առաջարկ յեղավ, վոր Հելդա-  
րի անունը հանեն ընտրական ցուցակից, բայց Արքուի բողոքով  
կրկին թողին:

Կես գիշերն անց եր: Արքոն առաջարկեց հարցը տեղափո-  
խել շրջանալին կոմիտե, այն ել ընտրություններից հետո, հայտ-  
նելով, վոր ինքը վոչ մի դեպքում գլուղը չի թողնի, մինչև կու-  
լակներին մի լավ դաս չտա, վորոնք ամեն կեղտու միջոցի գի-  
մելով՝ կամենում են գլուղխորոշը զավթել:

Գլուղխորհոգի ընտրություններն ելին:

Վողջ գլուղջը լեռման ջրի պես քլթքլիում եր: Մի կողմից կոմբջինականներն ելին կանգնած, մլուս կողմից կուլակները՝ Ընտրություններն ալդ տարի ավելի աղմկալից ելին, քան անցրաւներում. իերենում եր, վոր գլուղի կուլակներն, առաջ վոր. խըխունջի պես քաշվել ելին իրենց պատրանը, հիմի գուրս ելին հանել իրենց պողերը, շոշափուկները:

Վորքան կոմբջիջի անդամները, կոմիերիտները, կինքաժիննու բատրակների միությունը բացարձակ ելին գործում, խոսում, ժողովներ ու միտինգներ անում, նույնքան կուլակները լուռ ու մունջ խլուրդալին աշխատանք ելին վարում, ծածուկ, տներում քչիչալով, սրան-նրան կաշառք տալով ու խոստանալով:

Բամբասանքի ծայրը վոնց վոր ասած ե—«Հնդստան եր հասել», Բամբասում ելին կոմիերիտմիության անդամներին, վարկաբեկում. իսկ Ակտիվի ու Հելդարի պատմությունը հո, ամենքի բերնին ծամոն դառած՝ ծամում-ծամծմվում եր:

Ճիշտ ե, Հելդարն այնքան ակտիվ չեր աշխատում կոմբջիջի քարտուղար Կարոյի խորհրդով, վոր գլուղացիները չգրգռվեն, սակայն դրա հակառակ, Արֆոն արհամարհելով բամբասանքներն ու ասե-կոսեները, կրակ դառած ամեն տեղ ագիտացիա չեր մըղում, շատ անգամ իր մտերիմ աղջկերանց հետ կատակ անելով, թե՝ «Ընտրությունները վերջանան թե չե՝ Հելդարի հետ պսակվելու լեմ. սպասեք կուլակների հարսանիքը պրծնենք, վոր իմի իետեից կենանք»:

Ու կչկչալով, վոնց վոր գարնան կալտառ առվակ, ամեն տեղ եր, ամենքի մոտ Խոսում եր, բացատրում, վոգերում մանավանդ կանանց, վոր գուրս գան բոլորն ել ձայն տալու, իրենց հարյուրավոր տարիներով կորցրած ձայնն ու իրավունքը ձեռքբերած՝ ոգտվեն Խորհրդալին իշխանության ու հեղափոխության բերած ալդ բարիքից:

Թանի անգամ ե լսել Արֆոն, թե ինչպես զորքա Սարգիսը կամ տեր-Լապատկեն, կամ փտած Մուսալել քրոխվեն գլուխները շարժելով իրար ասել են.

—Եսա լի, հրես ես աղջիկն ա մեր տունը քանդողը. ես Ղոկմի մորթուց կարած փափախը դրել ա տակին ու վրեն նըստել ...

—Համ, համ, Սարգիս քրոխվա, չկարողացանք թե մի լեկվոր աղջիկ թուցնենք Ելի, —ձախնակցում եր տեր-Լապատկեն...

—Աննամուս ենք, աննամուս. են որը հո վիզը լավ ելի հորել (վոլորել) են թուքի գլադի հետ, ամմա, ինչ անես, Սարգիսը մեջքս կոտրեց, —հառաջում եր Մուսայել քրոխվեն.

—Համբերի, մի մարդ, մի ես լեշը մեջտեղից վեր ունենք, պրծնանք, լեզով<sup>1</sup>. —խոհական ձեռվ ասում եր զորքա Սարգիսը:

Ընտրական ժողովն եր արդեն, բայց դեռ վոչ վոք չգիտեր ձախնազուրկների ցուցակի մասին, վոչ վոք չգիտեր կուլակներից՝ ինքը ձախնազուկ ե, թե վոչ, Կոմբջիջը ներքին գաղտնի վորոշում եր կալացրել ձախնազուրկների ցուցակը չհայտարարել մինչև վերջին բոպեն, ստուգելու համար կուլակների ուղին ու տրամադրությունը, թե ում են ուզում անց կացնել գլուղխորհրդի ընտրություններին:

Ընդհանուր ժողովում լերկու ցուցակ մեջ տեղ լեկավ, մեկը՝ կոմբջիջի, մլուսը՝ կուլակների:

Զորքա Սարգիսի կազմած ցուցակի մեջ կալին նաև կոմունիստներ, բատրակներ ու կոմիերիտներ, վորոնց թվում նաև Արքուն:

—Ա՛ խալին, —խոսք առավ զորքա Սարգիսը, —երկու ցուցակում ել համարյա մի ևնուլիքն մարդիկն են. մեր ցուցակում մենակ մի-լերկու հին մարդ կան, գեղի աչքը, լավ մարդիկ. լես ևս ևսպես եմ հարմար տենում, վոր ես ցուցակնին համաձային մի խոսքի բերենք, մի ցուցակ շինենք. մի-լերկու մարդ մենք կպակասացնենք, մի-լերկուսն ել թող նրանք պակասացնեն. Մենակ... —խորհրդավոր կերպով կանգ առավ զորքա Սարգիսը, —մի բան լես հարմար չեմ դատում, ետ են ա, վոր կոմբջիջի կազմած ցուցակում մի թուրք կա, ետ իմ բատրակն ա, ինձ վոր հարցնեք, դա ինձ համար շատ լավ ա, ձեռնոտու. համա գեղականը կխոսա, թե հալի գլուղխորհրդումը թուրքն ինչ կոռծ ունի...

—Դյուզ ա ասըմ Սարգիս քրոխվեն, դյուզ ա ասըմ... —ձայնեցին այս ու այն կողմից:

— Շատ լավ, —ասաց նախագահողը. —ցուցակները կարող ենք համաձայնեցնել, և մենք ել ուզում ենք առանց դալմաղալի անցնենք ընտրություններին, —միայն մի բան կա, վոր հենց են հին մարդիկը, վոր ետ ցուցակումը կան, բոլորն ել ձախնազուրկ են. Ահա, կարդանք ձախնազուրկների ցուցակը, լսեցնք:

<sup>1</sup> Ակնարկում ե գյուղխորհրդի ընտրությունը:

Արքոն, վոր ժողովի քարտուղարն եր, բարձր ու սուր ձայնով սկսեց մեկ-մեկ անուններ թվել, վորոնց մեջ նաև զոռքա Սարգսինը:

Զոռքա Սարգիսն ել չհամբերեց ու տեղից վեր կենալով սկսեց գոռգոռալ:

— Տեսնում ե՞ք, ա խալիս, ես սադ գեղը խաղ ու պար են շինել: Յես, իմ հալալ աշխատանքով ապրող մադս, ես գեղի հիմք գցելու որից իմ ցեղով, մշտական եստեղ ապրողս ձայնազուրկ եմ, ու են թուրքի գլադեն պետք ա գա ըստեղ մեր գլխին կառավարիչ դառնա, բա սա որենք ա ... Սա սավեստական դակոն ա ... Ես ժողովը պետք ա քանդենք, գնանք գանգատ, տենանք ես վմնց ա, վոր յես ու են գեղի իշխան մարդիկը ձայնազուրկ են, ու թուրք բատրակն իրավունքի տեր: Սա դիմ Ակտիւվի կոռծն ա. սիրահարված ա ...

Զոռքա Սարգսի պրովակացիան ու գեմագոգիան մասսամբ իր տպավորությունը գործեց, սակայն ժողովականները չըրվեցին: Բատրակ Սեթովի պահանջով ձայնազուրկները ժողովից հեռացվեցին, վորոնք աղմկելով սկսեցին հոլովել Հելդարի ու Արքովի անունը, պղտորելով միամիտ մարդկանց միտքը:

Ընտրությունը կայացավ: Հելդարն ընտրված եր գյուղիսորոշիկ անդամ: Սա գյուղի պատմության մեջ առաջին դեպքն եր, վոր թուրքը հայ գյուղում ղեկավարի պաշտոն կամ իրավուր եր ստանում:

\* \* \*

Գյուղիսորհրդի ընտրության նախորդ որն Արքոն, վորպես ընտրված պատգամավոր շրջանակին խորհրդի, մեկնեց շրջան, իսկ այնտեղից ել գավգործկոմ:

Գյուղում ղեռևս շարունակվում ելին ընտրություններին վերաբերյալ խոսակցությունները, բայց արդեն զգալի յեր, վոր կուլակների «ծվանը կոտրված ա», ինչպես ընորոշում ելին նրանց բատրակները: Աւախնքն՝ ձայներն իսպառ կտրվել են:

Զոռքա Սարդիսը թունավոր ոճի պես առիթ չեր բաց թողնում Հելդարին խալթելու: Նա այլևս գլածա չեր ասում, այլ Հելդարին հեղնանքով մեծացնում եր «աղա» կամ «խաղելին» տիտղոսով: Շատ անգամ ել պատահում եր, վոր ոռւսերեն «բարին» եր ասում:

Հեղարքի համար ել արդեն անտանելի լեռ դարձել զոռքի վերաբերմունքը, վորը շարունակ մրթմրթում եր.

— Բա իմ գլուխը սաղ, թուրքը, ես սոված գլաղեն գա գլխիս իշխան դառնա ...

Հեղարք նկատելով, վոր քանի գնում, հարաբերություններն ավելի սրբում են, դիմեց կոմքջիջի քարտուղար Կարոյին և խնդրեց, վոր իրեն համար կամ մի ուրիշի մոտ տեղ գտնի, կամ տջակցե իրեն մի փոքրիկ տնտեսություն ստեղծելու գլուղում: Կարոն վերջին մտքին ավելի հավանություն տվեց, միայն ասաց, թե վորոյ ժամանակ ե պետք, վոր կարողանա մի կտոր հող հատկացնելն աջողացնի:

Ի՞նչ բան կմնա գաղտնի, վոր ես մնար:

Զոռքան իմացավ ու, մի առավոտ քեֆի պատրվակի տակ, հրավիրեց տեր-Լապատկին, Մուսայել քյոխվին ու ելի եսպես մի քանի հոգու, վոր խորհրդակցեն:

— Ես գեղի պատիվս ու անպատվությունը մերն ա.—ասաց զոռքա Սարգիսը.— Ես թուրք գլաղին մեր գլխին իշխան կարգեցին, հերիք չի, հիմի լել ուզում են հող տան, մեղ բողազակից անեն: Սա տանելու բան չի, Գեղը քանդվում ա, հարամ մարդ ա մտնում մեջը: Ասենք, թե են Ակտիվի հետ ինչ զալաթ վոր արավ, յաշելիեն ծածկեց. եգուց-ելոր, վոր մի ուրիշ խիզանի ձեռք մեկնի, ետ որ հայ ազգը կորամի:

— Որհնաւալ լինես, Սարգիս քյոխվա.— Վրա բերեց տեր-Լապատկեն: — Հալրաթ վոր գեղի պատիվը, նամուսն ու ադաթը մերն ա, ոս գլաղա-գլուղեքինը չի: Ես գեղը իմ ու քու պապն են զցել: Անջախ թուրքի հոգը կտրել եր ես գեղիցը. առաջ թե կար ել, նոքրար կար, հիմի ոջախսու տուն-տեղ են ուզում հիմնեն ... Ես բանին պետք ա վերջ տանք...

— Եգուց-ելոր մի սուրու թուրք լակունի, կեսը թուրք, կեսը հայ, մի բոլուկ (խումբ) բճեր<sup>1</sup> են ես գեղի գլխին աղայութին անելու ... դե, ենա Մուսայել քյոխվին տարեք սաղ-սաղ գերեզման գրեք ելի: ... գողդողալով փնթինթաց Մուսայել քյոխվեն:

— Մեղքը դրանը չի, դրանը. մեղքն են ծամը վեր եկած Ակտիվինն ա, վոր ես սաղ գեղի գլխին կակալ (ընկուղ) ա կոտրում, նրան պետք ա վերջացնենք, նրան,— պնդում եր կաշառք ուտելու համար հինգ անգամ բանտ նստած սուղլա Մամոն:

<sup>1</sup> Բիճ— պիճ— ապորինի զավակ:

—Առաջ սրան, սրան. սա լադ ա (ոտար), յետեից ման եկող չունի, յետով նրան ու մեկելներին,—խորհրդավոր ձայնով ասաց զորքա Սարգիսը.—թե չե եսոր խաղը տանուլ տվինք, եգուց, ես բանը վերջ պետք ա ունենամ, թե հենց մենք ձայնադուրկ պետք ա մնանք, եղ գլադեքը մեր գլխին թագավոր։ Ես եկող տարվա մասին եմ մտածում, եսորն ինչ ելավ-ելավ։ Ես գլադեն շատ աչքաբաց ա. մի տեսեք, թե վհնց ա հայերեն գիրը ջրի պես խմում, ինքն ել ինձանից լավա խոսում հայերեն։ Բատրակնին ել նրա խոսքիցը դուս չեն կալի. ես վոր ըսենց մնա՝ մի որ ես բատրակնին մեր կարողության տերն են դառնալու, գլուխներս ուտեն։

—Ես եսքանը գիդամ, վոր թուրքն ես գեղումը պետք ա բնակալի վոչ. մնացածը վոնց կուզեք, ենպես ել արեք. յեկեղեցին գլխիս փուլ կզա. —վճռական ձեռվ պնդեց տեր-կապատկեն։

Խորհրդակցություն—«Քեփը» վերջացած եր, յերբ ցրվելիս գյուղամիջում նկատեցին «չեկա Համբոյին», վորից այնքան սարս սափում ելին գյուղացիք, մանավանդ կուլակները, վորոնք ամեն որ հայությում ու անիծում ելին նրան, վոր խորհրդայնացման առաջին որերը, մի շարք «գեղի իշխան մարդկանց» կորստի պատճառ եր դարձել։

—Բարով, Համբո ջան,—ձեռքը մեկնելով դիմեց զոռքա Սարգիսը.—Վժրտեղ ես, չես երևում, այ տնաշենի տղա, գեղն անտեր ա մնացել, մարդ չկա, մին-մին ելա երևաս, ինչ կըլի, մի-մի թաս արադ ելա խմենք. բա մարդ հին աղ ու հացը կմոռանամ ...

«Չեկա Համբոն» սառը կերպով բարեն ընդունեց, ասելով.

—Չեր կամպանիլեն իրան համար լավ ա, ելի. ել յես ուր գամ։

—Դե, փառք աստծու, ապրում ենք ու աղոթք անում Խորհրդային իշխանության համար, վոր մեր ու մեր հարկաների մեջ խաղաղություն գցեց, հիմի յել գյուղխորհրդում թուրք ենք ընտրել, վոր մեզ կառավարի, ել վժնց լավ չլենք,—կիսահեգնական տոնով ասաց տեր-կապատկեն։

—Եղ մեկը սիալ բան եք արել, ասաց «չեկա Համբոն», տրամադրությունները շոշափելու համար։

—Ե՞, հողն ու ջուրը մեղ տանի, պրծնենք. ձայնազուրկ ենք, կարանք ծալտուն հանենք. մի Ակտիվ ա ընկել ես գեղը, իր աղ-

ջիկ տեղովն եսքան տղամարդկանցը եշ ա շինել, վրաները նստել,  
ջաղացն ա քշում...—հոգոց հանեց Մուսալին քրոխվեն:

— Այ, խելոք մարդը վոր կա՝ դա մեր Համբոն ա, — ծիծա-  
դիլով միջամտեց զոռքա Սարգիսը, — համա չես եղ բանին համա-  
ձալն չեմ. լավ կոսունիստ չես, թուրքն ու. հալը ով ա զոկել...

Խոսակցութիւնը լերկար չտեսեց, վորովհետև Համբոն իս-  
կուլն նրանցից բաժանվեց, իսկ զոռքա Սարգիսն սկսեց ֆա-  
ցածներին նախատել.

— Համա զուք ել մնարդ եք գտել, սիրտներդ առաջը բաց  
եք անում համ... ետ շպիլոնի հետ մարդ զրից կանի՞ ... գիղում  
չեք, վոր մի բան պատահի, մեր զլուխն առաջ դա լա թոցնե-  
լու ... դե, պայմանը պայման ա. քշերս Սերգոյին ու Բագրատին  
կասեք՝ դան մոտս, — խորհրդավոր փսփսաց զոռքա Սարգիսը:

Ցըկեցին:

\* \* \*

Յերեք որ եր անցել ընդամենը Արքոյի գնալուց հետո, լերը  
զոռքա Սարգիսը զլուղամիջում նստած, տեր-Լապատկին մի զար-  
մանալի բան եր պատմում.

— Տեր-բեգ, բա չես ասիլ, թազա խալտառակութին ա ծագել:

— Ի՞նչ, Սարգիս քրոխվա:

— Մեր զլագեն զըշերս կորել ա:

— Վճնց թե կորել ա:

— Կորել ա, ելի, տեղաշորումը չեր առավոտը. ինչ ել ու-  
ներ-չուներ՝ հաքել հետը տարել ա:

— Բա խելքդ ինչ ա կտրում, մւր կըլի գնացած:

— Մարդ չիմանա, տեր-բեգ, ականջիդ ասեմ. — հնա գնացած  
կըլի իր Ակտիվի լիտեկից ելի ...

Տեր-Լապատկեն ել չհամբերեց ու սկսեց զոռգոռալ.

— Աղա, ես գեղի ջահելնին նամուս ունեն, փափախ ունեն  
գլխների՞ն ...

Որը կիրակի յեր ու զլուղամիջը լիքը. Ամեն կողմից հավաք-  
վեցին, թե իմանան բանն ինչումն եւ:

— Աղա, աննամուսներ, զուք ջահելներ եք, — հարձակվեց  
տեր-Լապատկեն ջահելների վրա. — աղա, ձեր նամուսը վմրդի լա,  
վոր մի թուրքի զլադա ես գեղը դա ու ձեր աչքի առաջից են  
աղջկան առնի, առնի ...

— Ո՞վ ... ի՞նչ ... — զարմացած տեղացին ամեն կողմից հարցեց:

— Զոր, ի՞նչ... թուրքի գլադեն տարավ, տարավ, տղա յեղանամուս ունեք, հասեք... Հայ-հայ... ջահելութին...

— Դուզ են ասել, — վրա բերեց զոռբա Սարգիսը, — թե՝ «խաղողի լավը չաղալը կուտի» ...

Գյուղն ելի իրար անցավ:

— Աղա, գշերս ա փախել, թե հասնի են լըբին, թվանք առեք վազ տվեք, բռնեցեք, շան սատակ արեք երկուսին ել. — գլուխը տմբտմբացնելով, խոպոտ ձայնով սասց քրիսվա Մուսաւելը. — Ամ կոտորվեն ձեր լաշելկեքն ու կոնցոմոլները հա ...

— Զե, չե, գնացեք, բերեք մեկին գործկոմ ընտրեցնք, մեկելին՝ ժողղատավոր, վոր սաղ աշխարհը անառականոց դառնա, — նավթ ածեց զոռբա Սարգիսը:

Զահելները խառնվեցին իրար, դես-դեն ընկան, թե մի հատ բան իմանան, ձեռք մեկնեցին հրացանի, բայց մվ եր տվել հրացան. հրացանը միմիալին կոմբջիջի անդամների ձեռին եր, ուրիշ վոչ վոք չուներ:

Իսկ բջիջի քարտուղար կարոն շատ սառն ու հանդարտ ասում եր.

— Ամեն մարդ թող հանգիստ մնա. յես իսկույն կդնամ շրջկոմ, ենտեղից ել, թե պետք յինի՝ գավկոմ, իմանալու բանն ինչումն ե: իրդք Ներդարը գնացել և Արքոյի մոտ...

— Ռւգունանց կարո, ետ ա ըտհենց փափուկ բարձ դնելով ես ես խալիխին քնացնում, վոր բանը բանից անց ա կենում ե... են իի առաջին որը, վոր նրանց միջի լրբությունը բացվեց, յերկուսի դատն ել ես գեղամիջումը ես խալիխ առաջ չկտրեցիք, հը. թե լաշելկի տղեքն ու կոնցոմոլներն ինչ վոր անեն, հալալ ա. — Վրդովված գոչեց զոռբա Սարգիսը: — Մենք ձայնաղուրկ, նրանք իշխան ու աղա... մեր պապերի որենքն ել յետ մեզ տը-վեք. մենք ձեզ պես կառավարիչ, լաշելկա ու խորհուրդ-մորուրդ չենք ուղում...

— Զենք ուղում, չենք ուղում, — գոչեց վրդովված ամբոխը, վորը նկատելով, թե ինչպես մոտենում ե Գյուղալ պառավը, ել ավելի սկսեցին աղմկել. — սրան ինչ եք ասում, սրան. . . ես խեղճկրակ պառավին, վոր թուը տալիս եք տղին սպանողին, աղջիկը հորն սպանողի ծոցն եք կոխում...

Աղմուկին սուզն եր պակաս՝ են ել ավելացավ: Գյողալ պառավը մաղերը քանդելով, ծնկները թակելով՝ սուզ եր անում.

—Տերտեր ջան, խլանամ լես, ինչ խլացա, ասածիդ ժամանակին անգաճ չըրի, ես ի՞նչ ոլին-ողբաթ եկավ գլխիս... Տարեք, տարեք իմ գետատար Արսենի անտես անգուման գերեզմանը դտեք, ինձ սաղ-սաղ մեջը դրեք, վոր ես որը քոռացած աչքովս տեսս...

—Ուզունանց Կարո, դե հմի ես պառավի ջուղաբը տու.— մեջ մտավ տեր-Լապատկեն:

Գյուղը հողմից շարժվող ծառի ճյուղերի ու տերևների պես իրար եր կպչում ու խախալ-խախայն ընկած՝ մեկ ես կողմն եր ընկնում, մեկ են կողմը:

Կուլակների ու հակաների (հականեղափոխական) տոնն եր, վորոնք լերկու-լերեք որ եր, ինչ պատժվել ելին ընտրություններին, իսկ հիմա խավար մասսային զինում ելին նորընտիր խորհրդի և ընտրությունների դեմ, վոր բեկանեն:

Ել մվ ասես՝ չխոսեց, ել ի՞նչ ասես՝ չխոսվեց. Թուրքի առածի պես թե՝ «լոխ գիլանըն լողաշ չոխ ոլուր» («չե» ասողի ընկերը շատ կլինի), ամենքն ել քարկոծում ելին «թուրքի գյաղի խուրհուրդը», ակնարկելով հելտարին:

Նորից մեջտեղ լեկան բամբասանքները, իսկ «տելեփոն Շուշին» մինչև անգամ հայտնեց, թե Արքուի գնալը սուտ ա, թե ինքը երեկ իրիկնագեմը նրան տեսել ա «Կարճ քարի» գլխին...

—Մարդ զարկենք շրջան, մարդ... գեղը ձեռից գնում ա, —հաղթական ձախով գոչեց զորքա Մարգիսը:

—Դարկենք, զարկենք...

Ալեկոծված ամբոխն իրար անցավ:

Ես ամբոխի կատաղած ժամանակ, մին ել են տեսան «Հեկա Համբոն» իրանց տանից զուրս եկավ ու շորերը դրստելով, հսկա քայլերն ուղղեց դեպի գլուղամեծ:

—«Զեկա Համբոն» գալիս ա: Անմեղ խալս կոտորելու լեն դոչաղ գրանք, տանու հավ խեղղող են, դե թող գտնի լմ թուրքի գյաղին, — գոռում եր Մուսայել քրիսվեն:

«Զեկա Համբոն» մոտեցավ: Աղմուկն ու հուզմունքն ավելի շատացավ:

—Բերեք, բերեք, ինձ տվեք են թուրքի գյաղին, մի աչքերն իմ ես ղնգներով (լեղունդ) հանեմ, բոլորի սիրու հովանա, — գլխին տելով սուգ եր անում Գյոզալ պառավը, վոր «չեկա Համբոյին» տեսնելով, մոտեցավ ու լալահառաչ ձախով թե՝ Համբոյան, քու մոքրին (մորաքուլը. այսինքն՝ իրեն) տար սաղ-սաղ

թաղի, ել վնր որվա համար ես, վոր գալիս ա մի թուրք գլադա, մոքրիդ թռուանը, քու քվորը փախցնում...

«Զեկա Համբոն» չորս կողմը լավ զիտելուց հետո, կանչեց բջիջի քարտուղար Կարոյին ու պատվիրեց, վոր բջիջի բոլոր անդամներն իսկուն զինված գան իր մոտ:

Գլուղը ցնծաց, իսկ կուլակներն ավելի վոգևորվեցին.

— Ա՛յ, արդար ու կտրուկ դատաստան անողը. մեր ձեռքին թվանք (հրացան) չկա, թող լաշելի տղեքը հասնեն անորենի յետեկից...—ձալն տվեց զոռքա Սարգիսը.—յես իմ ձեռովը կըտրեմ իմ գլադի գլուխը, թեկուղ ինձ կախ ել տան, մենակ թե ես պառավին տենամ վոչ ըսենց երվելիս, փոթոթվելիս:

Մի քանի ըոպե անց, կոմքջիջի անդամները, մոտ 10—12 հոգի, զինված կանգնած ելին գլուղամիջում:

— Խալիսը թող մոտ գա, —հրամայեց «Հեկա Համբոն»:

Ամենքը խոնզեցին ու հավաքվեցին գլուղամիջի հրապարակը:

— Դե, ընկերներ,—դարձավ «Հեկա Համբոն» կոմքջիջի զինված անդամներին.—շրջապատեցնք ամենքին և վոչ վոքի ողակից բաց չթողնեք դեպի դուրս:

Խալիսը մի ըոպե լուր քարացավ այս անսպասելի կարգադրությունից, չհասկանալով, թե ինչումն ե բանը:

«Հեկա Համբոն» դարձավ կոմքջիջի քարտուղար Կարոյին.

— Կարո, մի ընկեր ել հետդ վերցըու, գնացնք, բերեք. ապա մոտենալով զոռքա Սարգսին ու տեր-Լապատկին, ասաց.—ես ըոպեյիս բարարակ Հելդարին կբերեն. Նրան տալու յեմ ձեր ձեռքը, վոր դատաստանն անեք եսքան խալիսի միջին:

Ու մինչդեռ զոռքա Սարգիսը մերթ կարմրում եր, մերթ դեղնում, Կարոն ու ընկերը Սերգոյին ու Բագրատին առաջ առած՝ բերին խալիսի մեջը:

— Կարո, գնացեք Հելդարին ել բերեք, հրեն մեր տանը պառկած, —ասաց Համբոն:

Կարոն ու մի յերկու տղա գնացին ու Հելդարի թևերն ընկած՝ բերին խալիսի մեջը: Համբոն հանեց Հելդարի արխալուխը, մեջքը բաց արավ, վորի վրա խանչալի մի խոր վերք կար:

Խալիսը շշմած այս տեսարանից, զարմանքով նայում եր և սպասում, թե ինչ և լինելու վերջը: Ամենքը շունչներն իրենց քաշած քար ելին կտրել, յերբ Համբոն դարձավ զոռքա Սարգսին և վրդովված ձայնով ասաց.

— Զոռքին Սարգիս, ես մւմ խանչալն ա ես վերքը բաց ա-  
րել... Տեռոր ես կազմակերպում, հա... Ի՞նչ ես խոստացել Բագ-  
րատին ու Սերդոլին, վոր սպանեն... Ես արծաթե խանչալը վա-  
րի բաժինն ա... Կովերիցդ վարն ես տալու սրանց, թե՛ տեղ-կա-  
պատկի որհնությամբ մատադ ելիր անելու, վոր թուրքիցն ա-  
զատվեցիր... Մեզ քնած գիտելի՞ր, թե մեռած: Դե, հիմի գոռա-  
ձենդ գլուխդ դցած, վոր ես խալին իմանա, թե մւմ դատաս-  
տանը պտի անենք...

1927 թ:

## ՆԱԶԱՆԻ ԴԱՏԸ

— Բա չես ասիլ, Նազանի մարդուն ել իրան տանիցը դուս արին, — շարունակեց իր զրուցը կարապետ բիձեն, վորը գյուղից նորություններ եր պատմում, զոռ տալով իր չիրէին, վոր ժուխը վարարի:

— Ի՞նչ Նազան, — հարց տվի իես:

— Նազանն ելի, մեր Նազին, թոփալ Բաղդովի աղջիկը, վոր մեծ կովիցն ել առաջ պսակեցին քրիստո Սահակի տղա, են վոչ ու փուչ Վառլամի հետ:

Նազանին կարող ա ճնաչես վոչ, համա Վառլամին պետք ա, վոր լավ գիտենաս, նա ես քաղաքներումը շատ ա ապրել, ավարա-սավարա թրե յեկելի

Քրիստո Սահակն ուզում եր իրան տղին անպատճառ չինով-նիկ շինի: Հայոց ուսումնարանին հավան չկացավ ու ես Վառ-լամին տվուց ուսւաց գարացկոյին<sup>1</sup>: Շատ սովորեց ես քու Վառ-լամը, թե քիչ, մի որ ել են իմացանք, թե գարացկոյիցը դուս են արել: Սրա պատմութինը շատ ա յերկար, համա յես կարճ կապեմ:

Ես Վառլամն ես դավթարիստանումը պիսիր<sup>2</sup> դառավ, են պրիս-տավի կանցիլարը մտավ, մի տեղ գողութին արտավ, բռնվեց, մի ուրիշ տեղ կաշառք կերավ, գործից զուս արին, մի խոսքով՝ մարդ չդառավ: Որերի մի որն ել վեր կացավ ու յեկավ գեղը:

Քրիստո Սահակը դես-դեն ընկավ, ես ու են հարուստի դու-ուը թակեց, թե մի ունեռ տանից աղջիկ ուզի իր տղին, պսա-կի, համա Վառլամի խարարը վազուց եր գեղը հասել, ոչով աղ-ջիկ չտվեց: Քրիստո Սահակը ճարը կտրած ման եկավ ման ու կպավ ես խեղճ ու կրակ թոփալ Բաղդովի յախիցը, թե՝ «ազես

<sup>1</sup> Городское училище (ուսուական միապետության որով գոյություն ունե-ցող քաղաքային դպրոց):

<sup>2</sup> Գրագիր:

ուզում եմ տանու անեմ, վոր ել քաղաք չգնա, արի աղջիկո  
տուր»:

Թոփալ Բաղդոն ել մի քիչ չեմ ու չում արավ, թե «աղջիկս  
պուճուր ա, հալա աշխարհից բան չի հասկանում», համա գեսից-  
դենից դոստ ու դուշման վրա դառան, համոզեցին, վոր թոփալ  
Բաղդոն իր «բախսին բացի չտա ու քրիսվա Սահակի պես հարուստ  
ու զոռով խնամուն ձեռից բաց չթողնի: Մի խոսքով՝ մի կողմ  
փողով, մի կողմ փեշքեներով, մի կողմ ել համարլա զոռով, գոր-  
ծը գլուխ բերեց քրիսվա Սահակն ու տղին պսակեց:

Նաղանը են վախտը 13—14 տարեկան թրվոան, սիրուն,  
կարմրաթուշ երեխա լեր, Քրիսվա Սահակը պարծենում եր սրա-  
նրա մոտ ու ասում. «Ճիանդամը գնան թող հարուստների աղ-  
ջկերքը, հարսս թեկուղ աղքատ ա, համա շատ սիրուն ու զո-  
չաղ ա....»:

## II

Տարին տարու վրա անց եր կենում, համա ես նազանն ե-  
րեխա չեր բերում: Խոսք ու զրիցն ընկավ գեղամեջ, թե «Նա-  
զանը չոր ա, չըերք»: Թե քրիսվա Սահակի տանը, թե նրա բա-  
րեկամ-ազգականների մեջ ու թե առհասարակ սաղ գեղում մի  
նախատինքի ծեր բացվեց: Ով աշկարա, ով թաքուն սկսեց նա-  
խատել, թքել ու մրել խեղճ նազանին, վորն ես ցավիցն որ-որի  
վրա սկսեց հալվել ու մաշվել. վերջն ել են տեղը հասավ, վոր  
քրիսվա Սահակն իր տղին բաժանեց, տանիցը գուրս արավ իր  
չըերք ու «անպատու ծառ» հարսի հետ միասին:

Խեղճ նազանը նամուսի գերի դառած՝ սկսեց իրան համար  
նոր տուն ու տեղ սարքեր: Հալրաթ աշխարհիս բանն ենպես ա  
գարսած, վոր աննամու ու անբան մարդու կնիկը նամուսով ու  
զերաթով ըլի, վոնց վոր մեր նազանը:

Վառլամը հոր տանը հու անբան եր անբան, բաժանվելուց  
հետո ել բոլորովին փչացավ: Իրան տվուց գինուն ու արաղին:  
Սաղ որը լոթի-փոթիների հետ ընկած՝ հարբում տրաքվում եր  
ու տուն գալի խեղճ նազանի ջանին կենում, թակում, ջարդում  
անզատիվ անում: Վոչ միանգամից գուրս եր անում կամ սպա-  
նում, վոր խեղճ աղջիկն ազատվի ետ հուր-կրակից, վոչ ել նա-  
զանը կարում եր գանգատ անի նրանից, վորովհետև դիվանն  
ու դատաստանը նրան կծոեր, մեղավոր կհաներ: Նազանը հա-

բեն գցեց տերտերին, բայց սա ել ասեց, թե «հայոց լուսավորչի որենքը թուլլ չի տալիս բաժանվելը. վորովհետև մարդը նրան դուրս չի անում»:

Զրի ու կրակի մեջ մնացած յեսիր (ստրուկ) նազանը գիշեր-ցերեկ արցունքն աչքերին, զլուկը կախ' հա մանում եր ու գզում, հա խալիչեա ու կարպետ եր գործում ու մարդուց ծածուկ ծախում, վոր քար ու կիր անի, մի կերպ տուն շինի ու գոմիցն ազատվի:

Լավ ելավ նազանի համար, վոր մեծ կոիվ ընկավ ու Վառլամին կոիվ տարան: Կովի տարիներին նազանն իր ձեռքի աշխատանքով, պտղունցը մաշելով ու աչքերը քոռացնելով մանեց ու գործեց, մի սիրուն տուն պատել տվեց, գոմիցը դուրս եկավ, տուն ու տեղը զուքեց, զարդարեց ու մի քիչ հանգիստ շունչ առավ: Սաղ գեղը յերանի իր տալիս Վառլամին, վոր եղակս նամուսով կնիկ ունի ու շատ-շատ կեսուր իրան հարսին խրատելիս նազանին եր որինակ բերում, նրա աշխատանքն ու դելրաթն եր գովում:

Հեղափոխությունն եկավ. կոիվը համարլա թե վկրջացավ, ու գլուղից գնացած, վողջ-առողջ մնացած տղերքը վերագառնում ելին: Ամեն մեկն ուրախանում եր, վոր հեռավորը տուն եկավ, կորուստը գտնվեց: Նազանն ել եր սպասում իր մարզուն, վոր կովիցն ազատված հրես կդա, կտեսնա, վոր կնիկը կարգին տուն ու տեղ ա գրել, կուրախանա. հին խասյաթը թողած կըլի, փոխված, մարդ դառած, ու սիրով կապրեն: Կովի իր նազանին, գինին ու արազը կիշողնի, քըքա կանի, հալալ աշխատանքի կկենա ու յերկուսով գոնե մի քանի որ ել և հանգիստ կապրեն:

Բայց խեղճ նազանի ծնված որը հալրաթ արեց խավարել եր, վոր նրա որն ել խավար անց կենա, մինչեւ ես մեր խորհըրդային իշխանության գալը:

Վառլամն եկավ, չեկավ, մի քանի որ անց՝ տանիցը խալիշա ու կարպետ դուրս քաշեց, ծախեց, ծախծինեց ու գինի-արազի տալով սկսեց ելի իր հարբեցողությունը:

— Ո՞վ պետք ա ուտի իմ կարողությունը, — ասում եր նա, — ում համար եմ աշխատել, ում համար եմ պատել ես տունը. կնիկս չոր, անպատուղ ծառ ա, մի որ կսատկի, յես ել մի գլուխ եմ, մի կողմից կծախեմ, կուտեմ, մինչեւ կհատնի, մի գինու կարսի մեջ կմտնեմ, շունչս կփշեմ...

Ել հարցնող չկար, թե «ո՞ւմ աշխատանքն ես լափում ու

ծախծիումն Ո՞վ և դժվել մի բան ասի չաթու քլասան Վառլամին, են ել են տեսակ ժամանակ, վոր մարդու գլուխը սոխի գըլիին հավասար եր:

### III

Յեկավ ես մեր խորհրդալին իշխանությունը: Ամեն բան խաղաղվեց, Թվանքը—խոփ շինեցինք, խանչալը—բան, կպանք մեր հալալ աշխատանքին: Տարին տարու վրա լավանում եր:

Որերի մի որը մին ել են տեսանք մազերը խուզած, մի կաշվի կուռտկա հազած, տղամարդու չեքմեքը հագին, հրես մի աղջիկ եկավ մեր գեղը: Ես աղջիկը հավաքեց մեր կնանոցն ու աղջիկերանցը, ժողով գումարեց, խոսեց ու քարոզեց, վոր բերանը կապած կնանիքը բաց անեն իրանց բերանը, գլուխները քանդեն ու ազատ ասեն, խոսան տղամարդկանց հետ, ընտրությունների ժամանակ մասնակցեն ու տղամարդկանց պես հավասար իրավունք բանացնեն ամեն տեղ: Կանանցից մեկին նախագահ ջոկեց, մեկին ել քարտուղար, կինբաժին ընտրեց ու գնաց:

Թե վոնց եր կազմակերպել մեր կնանոցն ու աղջիկերանցը, ինչ եր ասել նրանց են մազերը խուզած աղջիկը, զիտեմ վոչ, համա նրա գնալուց հետո, ես մեր չխոսկան ու բերանները փակ կնանիքը թամամ վոր հեղափոխվեցին, լեզու պռան ու մարդամեջ ընկան: Իրանց համար ժողովներ ին անում, խոսում, տընետուն ման գալով ամեն կնկա կինբաժին ին գրում: մինչև անգամ խորհրդումն ել (գլուղխուրհուրդ) իրենցից մեկին ջոկեցին:

Եղ որերին եր, վոր Վառլամն ելի հարբած տուն ա գալի ու իմանում, վոր Նազանը կինբաժին ա գրվել Կատաղում ա, փրփրում ու վրա ընկնում խեղճ կնկանը տուր թե կտաս: Թակում ա, թակում ու վրի շորերն ել հանելով՝ տանիցը դուրս անում: Նազանս ել, արլունվա ելած, վազ ա տալի կինբաժնի նախագահի մոտ ու խնդրում, վոր մի հնարով իրան ազատեն իր զազան մարդու ձեռից:

Կինբաժնը գանգատ տվեց գործկոմին, գործկոմն ել կանչեց Վառլամին:

Վառլամը գործկոմում հալտնեց, թե ինքն ել չի ուզում ապրի նազանի հետ, վորովհետեւ նազանը չոր ա, ուզում ա նոր կընիկ առնի, վոր ժառանգ ունենա:

Գործն ընկավ դատարան:

Մեր կինբաժինը թուղթ գրեց գավառի կինբաժնին, պատմեց գործի ամեն մի հանգամանքը, ինչ վոր լես քեզ հիմի պատմեցի, ու խնդրեց, վոր նազանի դատը պաշտպանի, նրա արյունքը տիրտինք աշխատանքը, գոնե իրան ձեռով շինած տունն ու միջի ելած-չելած մնացած փալաս-փուլուսը տա նազանին:

Դատի որը Վառլամը հայտնեց, թե ինքը շատ վաղուց եր ուզում ազատվի իր չբերք կնկանից, բայց կոփին ընկավ ու ետպես ել մնաց. հիմի ել սավետական որենքը թուլլ ա տալիս, վոր յեթե մի կողմը համաձայն չի, կարող ա բաժանվի, ու խնդրեց, վոր դատարանը բաժանի ու չբերք նազանին ազատի իրանից:

— Փառք աստծու, ասեց Վառլամը, նազանի վուն ու ձիռը պինդ ա, ինքն իրան աշխատանքով կարող ա ապրի. եսքան տարի ել ինչ լես պահել-պահպանել եմ, իրան թող հալալ ըլի: Ես սաղ խալիսը գիտի, վոր դա մի տկլոր ու սոված մարդու աղջիկ ա ըլել, իրան հոր տանիցը վոչ փող ա բերել հետը, վոչ ապրանք, վոչ բաժինք...

— Իսկ տունն նվ ե շինել, հարց ավեց դատավորը:

— Տեւնը... մենք ենք շինել, — պատասխանեց Վառլամը. — Ես կոփի եմ գնացել դա լել իմ կնիկն ա ըլել. վոչխար, կով եմ ունեցել իմ հորիցն ստացած, ծախել ա, տուն պատել. դա հո տունը չի շալակել ու իրա հորանց տանից հետը բերել:

Վառլամի սուտ վկաները հաստատեցին, վոր իսկապես Վառլամը իր հորիցը բաժանվելիս երկու կով ու տասը վոչխար. և ստացել:

— Իսկ ինչու մոտ քսան տարի ապրել եք խաղաղ, հիմի ուզում ես բաժանվես, — կրկին հարց ավեց դատավորը. — Ի՞նչ ե պատճառը...

— Ամեն տարի սպասել եմ, թե հրես մի երեխա կբերի, չի բերել, ու հիմի ես ա մեծանում եմ, պառաված վախտս ինձ նվ պտի պահիլ, ուզում եմ ժառանգ ունենամ:

Դործի քննությունից յերկում եր, վոր դատը Վառլամն ա տանելու, բայց մին ել գավառից յեկած կինբաժինը, են մազերը կտրած աղջիկը դատավորից խնդրեց, վոր յերկուսին ել բժշկի քննությանը տան ու պարզեն, թե նվ ա մեղավորը, ով ա չբերքը, մարդը, թե կնիկը:

Դատավորը պահանջը հարգեց. դատը կիսատ թողեց, կանչեց բժշկին ու խնդրեց, վոր տանի երկուսին ել քննի: Ես Վառլամը դալմաղալ արավ, բղբղաց, ճղճղաց, մատը մեկ-

Նեց սրա-նրա վրա, վկա կանչեց, վոր հաստատեն, թե իրանց ցեղը  
մինչեւ ոխտը պորտը վոչ մի հիվանդություն չի ունեցել, թե  
ինքն առողջ ա, կնիկն ա հիվանդը, թե ինքը նազանից վոր  
բաժանվի, նորից կնիկ ա ուզելու, են վախտը կիմացվի: Գոռո-  
գուաց, թե ետ անպատվությունն ինքը հետը գերեզման չի տա-  
նիլ, կնկանն ել կսպանի, բժշկին ել, դատավորին ել, բայց ո-  
գուաց չարավի, Դատավորը միլիցիա կանչեց ու Վառլամին ել,  
նազանին ել ուղարկեց հիվանդանոց:

Դատարանը հո լիքն եր, լիքը, վոր Վառլամին ու նազա-  
նին տարան հիվանդանոց, սազ գեղը հարսանքավորի պես վա-  
ղեց հիվանդանոց:

Ես տեսակ բան իմ որումը վոչ տեսել եմ, վոչ լսել, ինձ  
պես ել մեկելները Հենց ելինք գիտում, թե բժիշկը ձեռաց մեզ  
ասելու յա. բայց հիվանդանոցի ծառալողը հալտնեց, թե բժիշկը  
մի որից հետո կհալտնի դատարանում:

Դու բանն ենտեղ տես, վոր ես խաբարը հասավ մեկ ել գե-  
ղերը, ու եզսի որը մարդիկ բան ու գործը թողած՝ վազել ելին  
դատարան ու քիչ եր մնում դատարանի դռները կոտրատեն:

Դատը դառավի մի թամաշա:

Դատավորը բժշկի բերած վկալականը կարդաց բարձր ձե-  
նով, վորի մեջ գրած եր, թե նազանը միանգամայն տոռողջ ա և  
ընդունակ զավակ բերելու, իսկ Վառլամը միանգամայն զուրկ ա  
տղամարդությունից, վոր նա, Վառլամը, ջանել ժամանակ քաղա-  
քում ինչ վոր հիվանդություն ա ստացել և զրկվել երեխա ունե-  
նալու ընդունակությունից:

Վառլամը բղավեց, ծվաց, ծկլթաց, թե բժիշկը սուտ ա ա-  
սում, թե բժիշկը տգետ ա, կաշառված ա, բայց ել վնրտեղ... բա-  
նը բանից չանց եր կացել: Դատավորը Վառլամին լռացրեց ու  
խոսք տվեց կինբաժնին:

Ես քու կինբաժինն սկսեց, ինչ սկսեց... հու խոսում չեր,  
կրակ եր թափում, կրակ... Ես Վառլամի անառակ կլանքը են-  
քան խալխի միջին պատմեց, խալտառակեց, ել բան չմնաց, վոր  
չասեր, ել թուք ու մուր չմնաց, վոր գլխին չածեր: Վառլամին  
թողեց ու հիմի ել սկսեց նազանի կլանքը պատմել: Հենց եր խո-  
սում, կասես թե նրա ծնված որից մինչեւ դատի որը նազանի  
հետ եր ապրել ու աշխատանք քաշել, չարչարվել, տանջվել են  
գաղան Վառլամի ձեռին: Թե վնրտեղից եր եղքանն իմացել,

հասկացանք վոչ: Խալիսը նստած տեղը հոնգուր-հոնգուր լաց եր-ըլում:

Դատը վերջացավ: Դատարանը վորոշեց տունը և նրա միջի-իրեղենները տալ նազանին: Վառլամին ել իրավունք տվին յե-ղած անպատճերից ու բաղից մաս վերցնել, բայց կնկանը թա-կելու համար մի տարով ձայնադուրկ արին:

Եւ ես տեսակ խալտառակությունից հետո Վառլամը կմնար-դեռում... Գլուխն աքավ ու թե ուր կորավ՝ ոչով չի իմանում:

Անէնք... ծորտալով վերջացրեց իր պատմությունը հարա-պետ բրախչափոր մարդն իր կնկանը տանից դուս ա արել, եղ բանը շատ ենք տեսել ու լսել համա վոր կնիկն իր մարդուն-դուս անի, են ել եղան խալտառակ ձեռվ, ետ իսկի չելինք-իմացել...

1927թ.



## Պ Ա Պ Ը

### I

Դյուլում ամենքից մեծն ե նա:

Նա, Պապը, վորի քանի տարեկան լենելը վոչ ուրիշները դիտեն, վոչ ել ինքը:

Անունը վազուց մոռացվել ե: Ամբողջ գյուղը նրան այնպես ել հիշում ե, ինչպես վոր նա կա ալժմ: Դյուլի մեծերից սկսած մինչև փոքրը նրա տղաների, թոռների ու ծոռների չափ են:

Նա—գյուղի Պապն ե: Պապը նրա համար դարձել ե հատուկ անուն, գերդաստանը—պապոնց գերդաստան:

Փոել ե իր ճյուղները Պապը, փոել հաստարմատ կաղնի ծառի պես ու բռնել գրեթե գյուղի կեսը:

Ապրում ե Պապը միայնակ, ապրում ե իր իսկ ձեռքով շինած հին, կիսազետնափոք տան մեջ, վորի սլուները թեքվել են արգեն, իսկ ծխից սեացած գերաններից փոշի յե թափփում. մզմուղը փորում ե, ուտում, և նրանք հետզհետե նմանում են յերկար տարիներ գետնի տակ թաղված փառը վուկորի, մանր ծակոտիներով:

Յերբ Պապի թոռները կամեցան քանդել հին առւնը և տեղը նորը պատրաստել, քարով ու կրով, լուսավոր պատուհաններով ու դռներով, Պապը չհամաձայնվեց.

—Բալեքս,—ասաց նա,—դուք ձեզ համար նոր տուն շինեցեք ինչպես դուք կուզեք, թողեք իմ առւնը մնա. Եհ, բալեք ջան, շատ դժվար բան ա, վոր մարդ իր ձեռով շինած տունը ինքը քանդի:

Թոռները չկամեցան Պապի խաթրին կպչեն, իրենք հենց հին տան կից նորը շինեցին և առաջարկեցին Պապին. անցնել

նոր տունը, ապրել իրենց հետ միասին ու դուրս գալ խոնավ ու պուճախները բորբունած տանից:

—Զե՞, բայեցս,—կրկին մերժեց Պապը,—ես տանից Պապը վոր դուրս գտ, մենակ գերեզման կմտնի, ուրիշ հետ չի ապրի, կզնաձեր տատի մոտ. Սա ի՞նչ անբախտ ոջախ ա, վոր յես սրան թողնեմ. գեղի կեսն ես տանիցն ա դուրս եկել Ապրեցեք ձեր նոր տանը, ձեր նոր կյանքով, ինձ ել պահցեք, քանի սաղ եմ: Յետ վոր տանիցն ուզեմ դուրս գամ, տան ամեն մի քարը, ամեն մի փետը լեզու կառնեն, գանգատ կզնան, փեշիցս կքաշեն, չեն թողնի հեռանամ:

Զիջեցին թոռները Պապը մնաց իր տանը մեն-մենակ, բայց ավելի լավ խնամքի տակ:

Գրագետ և Պապը, բայց միայն կարդալ գիտե, իսկ գրել, հազիվ իր անունն եր կարողանում նկարել թղթի վրա, մի քանի տարի առաջ իսկ ալժմ ձեռքը դողում ե, չի կարողանում գրիչ բռնել:

Ամառը դեռ լուսը չբացված, նա նստում ե դուրսը, սրահի տակին, կորացած մեջքը հենում սլանը և կողը դեմ անում, վոր նոր ծագող արեց տաքացնի: Զեռքին բռնած ունի մի փոքրիկ գիրք, վորի թերթերը ժանգի գույն են ստացել, իսկ լաթից կարած շապիկը տեղ-տեղ մտշվել ե. շապիկից խոնավության ու քրտինքի հոտ ե փչում: Ցեղ վորքան գիրքը ժանգագույն ե, շապիկը սև, նույնքան սպիտակ և Պապի մորուքը, իսկ գեմքը բաց վարդագույն, մաքուր, վորի վրա յերկու չալ հուլունք բարի փալլով պրատում են ու կարդում սև գրքի մեջ գրած խըրթին բառերը, վորոնց բերանացի գիտե Պապը, բայց և այսպիս կարդում ե շարունակ, խորասուզված, յերգեմն դեմքի կնճիռներն ու խորչուներն իրար հավաքելով, վոր բացատրի, մեկնարանի լավ չհասկացած բառերն ու նրանց իմաստը:

Սևանա վանքի վարդապետներից մեկն և նվիրել Պապին ալր գիրքը, դեռ ևս յերիտասարդ հասակում:

Պապը յեկեղեցի չի գնացել յերեք, ալժմ ել չի գնում: Զիսիրում «մեռնի յերգերը», ինչպես ինքն և ասում, իսկ իր գրքի մեջ ել զրված ե, թե յեկեղեցին մարդուս իր տանն ե, իր մեջը:

Կարդում և Պապն իր գիրքը, կարդում, ապա վեր և կենում տեղից, մոտենում սրահի մի անկցունում դրված գերեզմանաքարին, ձեռքով սրբում վրայի փոշին: Դա—Պապի գերեզմանա-

քարն ե, վոր իր կենդանութիւն որով շինել ե տվել: Վրան գըր-  
ված ե լերկաթագրերով.

Ա.Ս.ՀԱՆԳՁԻ ՀՈՒՍՈՎ, ՓՈ.Ռ.Օ.Ց Վ.ՈՐԴԻ ՀՈՎ.ՍԵՓԻ ՄՈՃ-  
ԿՈԼ.ՑԱՆՑ ՑԱՆՈՒՆ ՍՈՐԸ ՊՈ.ՊԻ ԽՆԴԻՐԸ Ա.ՍԵԼ. ՈՂՈՐՄԻ.

Արձանի մլուս լերեսին վոչինչ չե գրված. ալդտեղ գրվե-  
վելու յև մահվան տարեթիվը և որը:

Հավիտենականութիւնն մասին մտածմունքների ծովն ե  
ընկնում Պապը, մինչև վոր թոչունների լերամի պես ճռվողելով  
վազում են իր ծուռները և կոները, «բարի լուս» մաղթում Պա-  
պին, ապա քաշում, քաշքում նրան, տանում իր տեղը նստեց-  
նում, բերած ուտելիքը դնում առաջը, նստում Պապի գոգին,  
խաղում մորուքի հետ, համբուրում ու համբուրվում, չարաճճի  
վասարուններ անում, գլուխկոնծի տալիս, նորութիւններ պատ-  
մում, լերգում, թոչկոտում, հաճախ ստիպում, վոր Պապն ել ի-  
րենց հետ պարի:

Վեր ե կենում խեղճ ալեորը, զիրքը մի կողմ դնում և սկը-  
սում ե իր կամքին միշտ չհպատակվող վոտները ծռմատել, իբր  
թե պարեր

Հրճանք ու ցնցութիւնն, ծափ ու աղմուկ... Սրահը թըն-  
դում ե, կենդանանում, սյուներն ել կարծես թեքված չեն, սրահն  
ել մոայլ չե թվում Պապին:

Քանի այդպիսի չարաճճինների հետ ե պարել Պապը...

Հոգնում ե Պապը. նստում նորից իր տեղը: Յերեխանները  
թափվում են գլխին:

—Հեքյաթ պատմի, Պապի ջան, հեքյաթ...

Պապն սկսում ե հեքյաթը:

Քանի-քանի անգամ միննույն հեքյաթը պատմած կլինի  
Պապը այդ նույն չարաճճինների հայրերին ու պապերին:

Ուրախ ե ամառը, ջերմ, լուսավոր, խաղով ու պարով, լեր-  
դով ու ճռվողունով. ուրախ են անցնում և Պապի որերը: Խակ  
ձմեռը... Զմեռը դժվար են անցնում Պապի որերը: Յերեկ-  
ները լերեխանները չեն սիրում «Պապի տանը» լերկար մնալ.  
այնտեղ խավար ե, խոնավ, խսկ գիշերն ել շատ ե լերկար, չի  
լուսանում, Պապն ել չի կարող ուրիշ բանով զբաղվել, քունն ել  
չի տանում: Պապը չի սիրում ձմեռը:

Պապը հետաքրքրվում ե քաղաքական-հասարակական հարցերով, մինչև անգամ չափազանց ե հետաքրքրվում։ Սիրում ե ամեն մի նոր բառ, իրեն անծանոթ, սովորել ճիշտ արտասանել։ պահանջում ե, վոր ցույց տան տպածը. կարում ե և շարունականվերջ կրկնում, վոր ուղիղ արտասանի։ Գլուղում կարելի լի միակ տարիքով մարդը համարել, վորը լերբեք չի աղավաղում «կոմունիստ», «բալլեկիկ», «կոմիերիտ», «պիոներ», «սերգատ», «տրակտոր», «սերմաղտիչ», «ելեկորակալան» և այլ նորանոր բառեր։

Պապը ժամանակին լեղել ե հասարակության մեջ աչքի ընկնող, աչքաբաց, հիմիկվա լեզվով ասած—ակտիվ մարդ, բայց լերբեք իր կյանքում վորեւ պաշտոն (ինչպես տանուտեր, դատավոր) չի կատարել։ Նա մի հիմնական սկզբունք ե ունեցել միաւն, աշխատանքի, հալալ աշխատանքի սկզբունքը, վորը ժառանգների մեջ խիստ արմատացել ե։

«Ով վոր գեղումն ապրում ա, ու հողագործությունից գյուման<sup>1</sup> ուրիշ բանով ա պարապում, նրա աշխատանքի մեջ հարամ կա խառը», ասել ե և այժմ ել նույնն ե կրկնում Պապը։ Արհեստավորների նկատմամբ նույն տեսակետը չունի, նրանց ևս համարում ե «իրանց կուան ուժով ապրող մարդիկ», իսկ մնացածներին—տանուտեր, դատավոր, չարչի, մինչև անգամ տերտեր—համարում ե «խալխի արինը քաշող», ժողովրդի հաշվով ապրողներ, վորոնք ընդունակ են և գողության, և խարեբայության, և ստախոսության և այլ նման բաների։ Իր կյանքում չի ծխել։ Թութունը, թամբաքուն, բռնոթին, չիբուխ քաշելը նա համարում ե «պարապ մարդու բան», վորին կցում ե այդ առթիվ լուրահատուկ պապական դարձվածքը, թե «չիբուխ ու պապիրոս քաշող մարդն ենքան անմիտ ե, վոր իր կարողությունն իր աշքի առաջ, իր իսկ ձեռով վառում ե, փչացնում, վորից վոչ մի ոգուտ չունի»։

Սրանով պետք ե բացատրել ահա այն հանգամանքը, վոր Պապի ոջախից լելած մարդկանցից վոչ վոք չի ծխում։

Թեև Պապի մշտական զրուցակիցները լերեխաներն են, բայց շատ հաճախ նա իր մոտ ե կանչում տղաներից կամ թուներից

1 Դյուման—զատ։

մեկին, և հարց ու փորձ անում նոր կյանքից, նոր կառավարությունից, գլուղում կատարվող նոր անց ու դարձերից:

Պապին վոչնչով չի կարելի զարմացնել նա իր կյանքում շատ բան ե տեսել, իր կյանքում, ինչպես ինքն ե ասում, «չորս ուսութագործ ե թաղել», հիշում ե նրանց անունները, հերթով կրկնում, պատմում նրանց անորին արարքներից, պատերազմներից, խեղճ գլուղացոց վրա կատարած ճնշումներից: Յերկաթուղին անց կացնելիս մասնակից ե լեղել աշխատանքներին, վոտով ու ձիով շրջել ե զանազան քաղաքներ, աշխարհ տեսել, ամեն լավ ու վատի հանդիպել:

## II

Յերբ առաջին անգամ Խորհրդային իշխանության որով գլուղը բերին սերգատ, սերմագտիչ և այլ գլուղատնտեսական մեքենաներ ու մանավանդ տրակտոր, և վողջ գլուղը ե՛ ցնծում եր և՛ զարմանում, Պապի վրա դա այնքան ել մեծ տպավորություն չգործեց.

— Իմ տեսած մաշին<sup>1</sup> հնարողը եղ բաներն ել կհնարի, — ասաց նա առանց զարմանք արտահայտելու: — Լավ բաներ են, մեզ ոգուտավոր, թող պայծառ մնա մեր նոր, Խորհրդային իշխանությունը. յերեսում ա, վոր խոկական քրասիր գեղացու կառավարություն ա...»

— Ա՛, Պապ, հենց ինչ նոր բան ենք բերում, իսկի քեզ համար կասես վճչինչ, ինչ բան քեզ կզարմացնի, աստ, անենք, — կես լուրջ, կես կատակով հայտնեց գլուղիսորհրդի նախագահը, վորը սերգատի կոթից բռնած պտուլտ եր տալիս:

— Ա՛, բալա, յերբ վոր ասեցին, թե Խորհրդային իշխանություն ա լինելու, վոր քաղաքի տերը բանվորն ա լինելու, գեղինը՝ քեզ պես տնանկ աղքատը, վոր հարուստներին վերջ են տալու, առուտուրականի գուքանը փակեն, սաղ գեղում ինչքան շատ-քիչ ունեոր մարդ կար, խելքը գլխին, գրագետ ու կառավարող, մի խոսքով մինչև Խորհրդային իշխանության գալը ես խալխի ու գեղի տեր ու տիրական անձինք, են ելին ասում, թե աշխարհն կքանդվի, թե՝ զարի ու կորեկ հաց կերած մարգուխելքով չի կարելի յերկիր կառավարել, ու եսպես բաներ, Պապը իր խավար տանը նստած հակառակ բան եր ասում իր տղանե-

1 Մաշին—գլուղելում գործ ե ածվում յերկաթուղու գնացքի, մանավանդ շոգեշարժի իմաստով:

ըին ու թոռներին, թե՝ զարմանալու բան չկա, գարին ինքը շատ դվաթ<sup>1</sup> տվող բան ա, և ետ դվաթը հենց սադ գեղի գործը շա-լակած տանող մշակի, հիմիկվա ձեր աստծ—բատրակի մեջքումն ա, թե՝ գեղը պահողը հենց դրանք են, վոր կան, են մեծամեծնե-ըը—փթռակ են, փրթռակ... Վոր մեկն ասեմ: Հիմի դու համոզ-վեցիր, վոր լես դրուստ եմ ասել ժամանակին ու չեմ զարմացել...

«Ի՞նչ արմանալու բան կար վոր... Յես մենակ մի բան ելի ուզում փորձեմ: Խլխանութլուն ասած բանդ՝ դըմքուզ ա, ա-մեն մի թագավոր, վոր մեռել ա, նրանից հետո յեկողը մանի-ֆեստ եր գրում, թե ժողովուրդին լավ պետք ապահի, համա սա իր հորից դհա փիսն եր ըլում: Քեզ որինակ Ալեքսանդր վտա-րովին: Սա—ճորտերին միթամ ազատեց: Են վախտը... լես... հա, դե վոնց ասեմ... Խելքս գլխիս տղա ելի... հա. սա մեռավ, թե չե սրա տղեն, Ալեքսանդր տրետին, ինչեր արավ, ինչեր... մանի-ֆեստով մի քանի գող ավազակ ազատեց, համա ինչքան լավ—լավ, ժողովրդի համար ցավող մարդկանց Միքիր քշեց, կոտորեց ու դալում փթացրեց: Եսպես ել գյուրեգյոռ, քու տեսած Նիկալայ վտարովին: Յես ուզում ելի մի բան մենակ փորձեմ, թե քրասի-բի խիղճը դեպի ժողովուրդը վոնց ա. ես խորհուրդային իշխա-նութլունն ել սուտ-սուտ մանիֆեստ—դեկրետ ա գրմւմ, թե գրածը կատարում ա...

— Հը, Պապ, դե ասա, կատարում մ, թե չե. խոզով մ, թե չե... Եսա են աշխարհն ես գնալու, ի՞նչ խաբար ես տանելու Նիկալայ վտարովին, թե վմբն եր լավը, նրանը, թե մերը...—մեջ մտան այս ու այն կողմից սերզատի գլխին հավաքված գյու-ղացիք:

— Մինչև հիմի արածներդ լավ են, խիղճներդ ել կասես մա-քուր ա յերենում, բայց ինձ վոր հարցնեք, դեռ ենպես բան չեք շինել, վոր Պապը զարմանա: Այ, թե վոր հենց բան կանեք, վոր յես համոզվեմ, թե իսկապես աշխարհս շուռ ա յեկել, են վախտը թող հենց զարմանքից մեռնեմ, թե չե մի սերզատ բերելով, մի տրակտոր գոգոացնելով, դրանք ի՞նչ են, ի՞նչ բան են, մաշինի կրնկի փոշին ել չեն... Ասում եք աշխարհը շուռ եք տվել, ես ա ձեր շուռ տամլը...

Միծաղացին ամենքը՝ ծիծաղեցին Պապի վրա, վոր ամեն բան չափում—ձեռում եր մաօինի վրա, և չեր հավանում այնքան զարմանալի նորութլուններին:

1 Դվաթ—ուժ:

— Ա՛ Պապ, աշխարհի շուռ գալն ել վրաց ես ուզում ըլիքեղի տերտերը մեռել ա, մի քանի հոգի ուզում են թազա տերտեր ջոկեն, ոչով չի համաձայնվում տերտեր դառնա, մեծ մարդ ես, վոր եսոր-եգուց մեռնես, պատարագդ հի պտի անիլ, ժամեն ել հրեն կոմսոմոլը թատրոն ա շինել, — հարց տվեց նույն նախագահը:

— Ժամը Պապի ինչի՞ն ա պետք, մի վորդի. լես իմ կլանքում լերկու անգամ եմ ժամ մտել, մին վոր մկրտել են, մին վոր պատակել են. մեռնելուց լետով թեկուզ պատարագ, թեկուղ շան կլանչոց, անշունչ փետին ի՞նչ ոգուտա...

— Պապ, ասա կոմունիստ ես, ելի, լաշելկա մտի...

— Զե, չե, կոմսոմոլ դառ, կոմսոմոլ...

— Արի պիտոներ շինենք, պիտոներ...

Ամեն կողմից ծիծաղելով վրա տվին Պապին, կես լուրջ՝ կես կատակով, կես ծաղրով: Դիտելին, վոր Պապը նման բաներից չի նեղանում:

— Ե՛ն, բալեք ջան, Պապի «հալ-հալը գնացել, վալ-վալն ամսացել», գուք դառեք, դուք. դիմու ել անաստված եք դառել, ձեզ հետ ել խոսալ չի լիլ, համա աստծու ստեղծած բաների մի մսխալն ել չեք կարալ ստեղծեք:

— Որինակ, ի՞նչ ա ստեղծել եղ քու աստված ասածդ, — վրա բերեց նախագահը:

— Հրեն ե... մի վերև մտիկ, հրեն են հրեղեն արեն աստեղծել, վոր սադ աշխարհիս առատ ու պալճառ լիս ա տալիս, կարմք մի են տեսակ բան ստեղծե՞ք:

— Են հո աստված չի՞ ստեղծել, բնության գործ ա:

— Թո՞ղ քու ասածն ըլի, գու բնություն ասա, լես աստված ասեմ, մենակ թե են արեի լիսի պես մի կտոր իմ խավար տունը բեր, աշխարհը քեզ ըլի, մենակ ես գեղին լիս արա, աչ, են վախտը Պապը կհավատա, վոր աշխարհի շուռ գալն ել ա հաստատ, Խորհրդային իշխանության ասածներն ու արածներն ել անշամարիտ, ինքն ել հավիտենական:

— Ուրեմն արեմը վոր տունդ բերենք, են վախտը կղարմանաս, թե ելի կասես, դա մաշինի կշտին մի զադ չի:

— Դուք բերեք, են վախտը Պապն իր ասելիքը կասի: — Ասաց Պապն ու քալլերն ուղղեց դեպի տուն:

Զմեռ եր, բայց խաղաղ ձմեռ. որերը տաք, լեղանակը պարագառ համախ դուրս եր գալիս սրահի տակը, արևկող անում, գիրք կարդում, լերը մի որ նկատեց, թե ինչպես վողջ գլուղը զուռնա-դհոլն առաջ գցած, լերգ ու պարով, խաղ ու խինդով մեծ ճամբովը գնում եղեալի մոտակա գետը:

Ամենից առաջ գնում ելին պիոներները, կարմիր փողկապաները կապած, շարքով, զուգ-զուգ, տղա ու աղջիկ խառը, նրանց յետևից մի կարմիր դրոշ պարզած, նույնպիսի շարքով գնում ելին կոմիերիտականները, հեղափոխական լերգեր լերգելով, այնուհետև՝ գլուղի խուռն բազմությունը, կին, աղջիկ, մեծ ու փոքր տղամարդիկ: Ահակ դիմացից դուրս լեկան դպրոցի աշակերտները և ուսուցիչ-ուսուցչունիների առաջնորդությամբ ճամբար ընկան նույն ուղղությամբ, վոր հասնեն հասարակությանը:

Պապը չեր հասկանում, թե ինչումն ե բանը: Ինչ տոնակատարություն ե: Վեր կացավ տեղից, ուղեց գնալ հանդեսի յետևից, բայց վոտները դավաճանեցին: Նա կանգ առավ տան առջեր թթենի ծառի մոտ, հենվեց նրան, և լերկար ժամանակ դիտեց հեռացողներին: Պապի աշքերը ջրակալեցին, նա ալևս վոշինչ չեր տեսնում:

— ՀԵ! գիդի հա... ինչ ա մնացել կխտարի<sup>1</sup> յետևից վազող տղից...—հոգոց արավ Պապը, հիշելով անցած որերը...

Մին ել Պապը նկատեց, թե ինչպես գործկոմի նախագահը ձին հեծած քշում ե: Պապն ինչ ուժ ուներ հավաքեց ու ձայն տվեց.

— Ակոփ, այ Ակոփ, Ակոփ ջան, մի ձիդ դեսը քշի, բան եմ ասում:

Գործկոմի նախագահը ձիու գլուխը թեքեց դեպի Պապը ու կանգ առավ:

— Ի՞նչ ա, ա Պապ ջան, ի՞նչ ես ասում, առանց են ել ուշացել եմ, վրազ եմ, ասա:

— Ակոփ ջան, եղ ինչ խաբար ա, ուր եք գնում մերով—մանուկով, սադ գեղականով:

— Գնում ենք արեի համար տուն շինենք, արեի համար...—ասաց հակոբն ու ծիծաղելով ձին մտրակեց:

«Արեի համար տուն»—մտմտաց Պապը, ի՞նչ արե, ի՞նչ տուն... մասխարա գցեց եղ ջահել...

<sup>1</sup> Կիսառ—յեղնիկ:

«Ե՞... հիմի լես ո՞ւմ եմ պետք, կամ ինչի՞ լեմ պետք, վոր վոտս բռնում չի, թե մի գնամ, հասկանամ ինչ բան առ...—վըշտաբեկ հառաչեց Պապը և դարձավ լետ, նստեց սրահի տակին, գիրքը բաց արավ թե կարգա, չկարողացավ: Մտքերը գնում ելին հեռու-հեռու... Մեկ ջանելանում եր, վազում, գործում, աշխարհը վոտի տակ տալի, մեկ իջնում սկ հողը, մտնում գերեզման, մտածում գետնի տակի անքննելի, անիմանալի աշխարհը, վորտեղից և վոչ մի գնացող լետ չի վերադարձել...»

Ալդ որը գլուղը հիմք եր զցում ելեքտրոկայանի: Կայանը շինվելու լեր մեծ գետի ափին, սպասավորելու լեր շրջանի հինգ գլուղերին, գրա համար ել վողջ շրջանն եր հավաքվել հիմնարկերին մասնակցելու:

Կենտրոնից մարդ եր լեկել. ժողովուրդը լսում եր նրան լարված ուշադրությամբ:

— Մայիսի 1-ին պետք ե կայանը պատրաստ լինի,—ասաց կենտրոնից լեկողը,—ամենքդ պետք ե գործի լծվեք, ամեն մեկը ձեզնից մի քար պետք ե դնի պատի մեջ...

— Պատրաստ ենք,—զոչեցին պիոներները:

Ողը թնդաց կեցցեների և ուռաների աղմուկից:

Պապը լերկու խուլ վորոտ լսեց միայն:

Դա—ելեքտրոկայանի հիմքի տեղը բաց անելու համար ժարուհը քանդող վորոտն եր:

\*  
\* \*

Պապը շատ եր հետաքրքրվում ելեքտրոկայանով, բայց ինչքան հարց ու փորձ եր անում, վոչ վոք չեր կարողանում ենապես բացատրի, վոր մի լավ հասկանա:

— Կղարունքանա, կտանեմ կտենաս,—ասաց Պապի թոռը, — հիմի հալա դեռ պատերն ենք շարում, քաղաքից մաշինեք ենք բերելու, վոր սարքը դցեն:

— Ի՞նչ բանի համար ա, թնչ, վար ա անելու, տախտակ աքաշելու, տուն ա պատելու, մի հունարն ասա, հունարը:

— Ասում են նոթի ճրագին ու լամփին վերջ ա տալու, ելեկտրական լիս ա տալու, ինքս ել չեմ լավ գլխի. հրես կշինենք, կտենանք:

Ու գլուղը աենդով բռնված աշխատում եր ելեկտրոկայանի վրա:

Գարնանը՝ Պապին սալլի վրա դրած տարան, ցուց տվին  
Ելեկտրոկայանը, Նա շատ դես-դեն նայեց, լսեց ինժեների բա-  
ցատրությունները, իր մտքում վորոշեց, վոր ջաղացի որինակով  
մի բան են շինում, բայց թե ետ նոր տեսակի ջաղացն ինչպես  
եր լուս տալու հինգ գլուղի, չեր կարողանում բացատրի, ըմբռնի:

Պապն անհամբեր սպասում եր:

«Չմեռնեմ, ես ել տենամ», — շարունակ կրկնում եր ինքն  
իրեն:

Մալիսի 1-ին ելեկտրոկայանը համարյա պատրաստ եր,  
բայց ելեկտրականության թելերը դեռ լրիվ չելին անց կացրել  
ըուր գլուղերը, ուստի կայարանի բացումը վորոշվեց հետաձգել  
մինչև Հոկտեմբերյան տոնակատարությունները:

\* \* \*

Վողջ գլուղը թնդում եր:

Ելեկտրոկայանի բացման որն եր:

Ել մվ ասես, վոր ներկա չեր բացման հանդեսին:

Կենտրոնից լեկել ելին պատասխանատու ընկերներ, վորոնք  
ներթով բացատրում ելին իրենց ճառերի մեջ ելեկտրականացման  
նշանակությունը:

Բաց արին ջրարգելակները:

Զուրը հորդաց, անիմերն սկսեցին հռնդալ:

Կայանը լուսավորվեց:

Մարդիկ ցնծությունից չգիտելին ինչ անեն: Վոմանք մեր-  
կացան և նետվեցին զուրը: Ողը լցվել եր ուրախության աղա-  
ղակներով:

Հանդեսը վերջացավ, ամեն մեկն շտապեց իր տուն, վոր  
ստուգի, թե իրմք ելեկտրական լուսը վառվում ե:

Այս, ամեն տեղ: Գյուղացու խրճիթը լուսավորվել և արևի  
լույսի պես Մարդիկ գրկախառնվում են, համբուրվում, իրար  
աշքալուս տալիս:

Մութն եւ:

Պապը նստած ե իր խավար տանը, ուր մրու ճրագն աղոս-  
լույս և արձակում, հաղիվ լուսավորելով իր չորս կողմը: Նրա  
մրի քուլյան ապականում ե առանց այն ել հնամյա տան գաղջ  
ողը: Ներս և վաղում Պապի ծոռը, կոմիերիտ Հրաչիկը:

— Պապի ջան, յեկ գնանք մեր տուն, ենակես լույս ե, են-  
պես լույս, կարծես արև լինի...

— Հմտա, Աչիկ ջան, ելեկտրոկալանը վերջացմավ...  
— Համ, Պապի ջան, հա, իեկ զնանք քո աչքով տես, եսոր  
ենպես մեծ հանդես եր...

Պապը վեր ե կենում տեղից, գավազանը ձեռքն առնում:  
Հրաչիկն ոգնում ե նրան և ճտճտալով պատմում հանդեսի ման-  
րամասնությունները:

Պապը սանդուխքներով վեր ե բարձրանում իր թոռան լերկ-  
հարկանի տունը: Դրսից, պատուհանի միջով լերնում ե արևի  
պես ժպտացող ելեկտրական վառ լուսը: Պապը զարմանքից  
կանգ ե առնում պատշգամքում:

— Արի, Պապի ջան, ներս արի, կմըսես, արի տես ինչ  
բան արեց ես մեր Խորհրդավին իշխանությունը, սաղ գեղը լի-  
սավորեց,—ուրախուրախ թերից բռնած ներս ե տանում Պապին  
իր թոռը:

Պապին առաջարկում ե նստել: Զի նստում Պապը, նա կանգ-  
նել ե սենյակի մեջ տեղը, շմել, շվարել, իրեն կորցրել:

Սենյակի առաստաղից մի թել ե կախված, վորի ծալիքին  
ամրացրած ե սաղի ձվի չափ մի ելեկտրո-լամպ, վորպիսին Պապն  
առաջին անգամն ե տեսնում: Ուժեղ լուսը ցավեցնում ե Պապի  
աչքերը: Նա ձեռքով պաշտպանվում ե: Ամենքը լուռ են, խորհըր-  
դավոր լուռ, սպասում են, թե ինչ ե ասելու Պապը:

— Ես լիսը հանգչում մ, թե հենց գիշեր-ցերեկ վառ ա  
մեալու,—մտահոգած հարցնում ե Պապը:

— Փչի, ա Պապ ջան, փչի, տես հանգչում մ, թե չե, —կա-  
տակում ե թոռը:

Պապը չի փշում, վայ թե ծաղրեն իրեն:

— Թե փչելով հանգչում ե, դու փչի, առաջարկում ե Պապը:

Թոռը մոտենում ե կոճակին, ձեռքը դնում վրան, ապա մի  
կողմից ուժեղ փչում, իսկ մլուս կողմից պտույտ տալիս կոճակը:  
Լամպն որորվում ե խավարի մեջ: Ամենքը ծիծաղում են:

— Դե, վառի նորից:

«Չը ըթ»: Շրխկում ե կոճակը, լամպը նորից վառ ե:

Պապը չի կարողանում հասկանալ, թե ինչպես ե վառվում  
կամ հանգչում: Ամենքը ծիծաղելով շրջապատում են Պապին,  
մոտեցնում կոճակին և առաջարկում պտույտ տալ:

«Չը ըթ»—հանգչում ե:

— Ե՞լի պտույտ տուր, Պապի ջան, ելի:

Պապը շրջում ե:

«ԶԵՐԹ»—Վառվում ե:

Պապը մի քանի անգամ իր ձեռքով փորձում ե: Միշտ միեւնույն հետևանքը:

— Մեղա, մեղա քեզ, տեր...—փնթինթում ե Պապը, ես ինչ զարմացք բան ա...

— Պապի ջան, սրան Խորհրդալին իշխանություն կասեն, աըսկից մի կտոր կտրել առ եսպես մաս.մաս արել, ամեն տան վրա բաժին արել,—ծիծաղում ե թոռը, ապա խանդաղատանքով գրկելով Պապին, նստեցնում և կարգադրում ե, վոր հուրասիրեն Պապին:

— Կուշտ եմ, բալա ջան, առանց են ել կուշտ ելի, ես քուլիսն ել պակասը թամամ արավ, տարեք, տարեք ինձ տուն:

— Ես գիշեր ել մեզ մոտ կաց ելի, ինչ ա, ճրագիդ հոտին կարոտել եմ...

— ԶԵ, չԵ, տարեք ինձ, տարեք, ես ել ինձ հերիք ա, ինչ տեսա, —պնդեց Պապը:

Զկարողացան Պապի համառությունը կոտրեն: Ուղեկցեցին: Պապը բաժանվելիս միայն մի բան հարցրեց.

— Ետ լիսը գիշերն ել ա վառվում, ցերեկն Ե՞լ

— Հա, բաս, Պապի ջան, առավոտը լեկ տես զոնց ա վառվում: Ցերեկը չի կարելի վառել, բայց լեկ, փորձիր, —բացատրեց Հրաշիկն ու բարի գիշեր մաղթեց Պապին:

Ամկողջ գիշեր Պապը չկարողացավ քնել: Նրա ուղեղն զբաղված եր ելեկտրոլամպի հրածնվ:

Մյուս առավոտ Պապը դուրս լեկավ սրահը, մոտեցավ իր գերեզմանաքարին, վրայի փոշին սրբեց ու տիսուր-արտում նըստեց վրան:

Վոչ վոք չգիտեր, թե ինչ ե մտածում Պապը, ինչ ե խռովում նրա ծեր սիրտը, լերը մոտեցավ նրան Հրաշիկը և հայտնեց, վոր զործկոմի նախագահին հրավիրել են իրենց տուն, և հայրիկը խնդրում ե, վոր Պապն ել գնա:

Պապը տեղից չշարժվեց:

— Գալ չեմ: Դնա ասա, թող Ակոփն ինքը գա:

Ցերը Հակոբը, Պապի թոռները, ծոռները, կռները լեկան թե Պապին տանեն, նա նույն դրությամբ, անշարժ նստած երտապանաքարի վրա:

— Բարի լուս, Պապի ջան, —վողջունեց Հակոբը, ինչժամ լեռ եղակես տիսուր, չլինի մեր ելեկտրական լուսից նեղացել ես. հիմի ել զարմանում ես, թե...

— Համ, Ակոսի ջան, հիմի վոր զարմանում եմ, հիմի վոր  
ելած խելքս ել կորցի! Սաղ գիշերս չեմ քնել. հիմի վոր աշխարհն  
շուռ եք տվել. հալալ ըլի ձեղ ետ տեսակ շուռ տալը! Մեր պա-  
պերն ասել են—«ճրագն իր տակին լիս չի տալ», համա հիմի լիս  
տեսա, վոր ձեր շինած ճրագն ու լամպը իր տակին ել ա լիս  
տալիս Ճրագն ու լամպը ներքեից դեպի վերև են վառվում, հա-  
մա դուք շուռ եք տվել, զլիսի վրա կախ արել: Ով վոր ասի, թե  
ես Խորհրդային իշխանությունը հավիտենական չի, ետ ձեր շի-  
նած լամպն աչքը կոխեցեք...

— Դե, գնանք, գնանք, Պապի ջան, գնանք ետ լիսի հա-  
մար մի քիչ ուրախություն անենք,—առաջարկեց Հակոբը:

— Զե, բալա ջան, գալ չեմ, գնացեք դուք ձեր ուրախու-  
թյունն արեք, ինձ սաղիլ չի:

— Դե, լավ, մրի, միտքդ ի՞նչ ա, ետ սառը քարիցը չես  
կպշելու հո, —պնդեց Պապի թոռը:

— Ե... Սարգիս ջան, իմ մտքերը դու ի՞նչ կիմանաս, բա-  
լա ջան... Առավոտից դեսը ես քարին նստած միտք եմ անում,  
թե ինչքան ապրել եմ, հարամ ա, յերանի չեր նոր ծնվելի...  
Դամ ի՞նչ անեմ, բալա ջան, գնացեք, լավ ապրեցեք, ետ լիսը  
բերողի փեշը պինդ բռնեցեք..որ ու կիանք քաշեցեք...

— Պապի ջան, ուզում եմ, քո տունն ել բերենք ելեկտրա-  
կան լուսիցը, —Պապի ծնկները գրկելով ասաց Հրաչիկը:

Պապն այլևս վոչինչ չխոսեց, նա լուռ հեկեկում եր:

1928թ.

## ԱՆԻՇՎԱԾ ՀՈՂԸ

Խոպան եր հողը:

Հեռվից նյան եր շուռ տված շաջի, մոխրի ալրված շաղա-  
խով ծեփված: Կավճակոշին հանգցրած կրի պես փորթ-փորթ յե-  
ղած, փոշու նման սպիտակին եր տալիս տեղ-տեղ: Գետնից կը-  
պած սակավաթիվ ցաքի փշի թփերը չմրուլի պես, խանձված  
կուչ ելին յեկել յեղնաքարի կողքին, վորոնց տակ կրլաների բռնն  
եր միայն, իսկ հարթավալրում դաշտալին մկների, լորտուկների  
և ոձերի ծակերը:

Գարնան սկզբին ինչ վոր կանաչ, լպրծուն, խոտանման  
բան եր բուսնում մամոփ պես, կպչում գետնին, վորից ժամա-  
նակավորապես փոխվում եր ընդարձակ սարալանջի գուշնը. ապա  
կանաչը թխվում եր, չորանում, մճրվում անցվոր մարդու կամ  
անսասունի վոտների տակ, դառնում փոշի:

Բերքառատ տարին, յերբ խոտն որան-որան լկլկում եր և  
բռնում արահետներն ու ժայռերի խութերը, մրկած սարալանջի  
վրա, ճաղատ մարդու գլխին մնացած հատ ու կենա մազերի պես,  
յերբեմն յերեւուն ելին կառան փշակծիկներ ու տատասկի ար-  
մատներ, վորոնք ծոմոված հանգուցներով փուփում ելին գետնի  
յերեսով ու փշի մավթուլների պես արգելում մանրապճեղ կեն-  
դանիների անց ու դարձը:

Հողը նախկին բնգի կալվածքի մի մասն եր:

Ավանդություն կար գյուղում այդ հողի մասին: Ծերունի-  
ները պատմում ելին, թե իրենց յերեխա ժամանակ ջուր են խմել  
սարի մոտ ընկած մեծ քարի տակից բլթացող սառն աղբյուրից,  
թե սարալանջը թեն սեհրակ, բայց զովաշունչ շեռւա և յեղել,  
թե իրենք շատ թոշունների բներ են քանդել, այս կամ այն թփին  
թառած, կաքավի ձվեր հավաքել, մոշ քաղել, մորի կերել, կով  
ու յեղ են արածացըրել այնտեղ, ճիպոտ են կտրել, դալար կար-  
մրաստի ճլուղերից կողովներ գործել...

«Ե՞ն որից, —կոտրվեր նրանց վոտն են որը, եստեղ չերե-  
ջալին, —հենց վոր յեկան չինովանիկները, չափեցին, չափչփեցին  
մեր հողը, ևս ու են սարի ծերին կուրզաններ արին, սահմանա-  
պլիսին ածուխ թաղեցին ու մեզ տնով-տեղով ազի ճորտը շինեցին,  
մեր սարերն ու գաշտերը, այդիներն ու անտառները տվին նրան,  
են որից ել՝ եղ հողը չորացավ, խանձվեց, երվեց, աղբուրը ցա-  
մաքեց ու վոնց վոր հիմի տեսնում եք, ետպես ել մնաց: Յերկնքի  
անեծքը բեզի գլխի տեղակ թափվեց դրա գլխին ու դարձավ  
արգանդը չորացած չոերք կնիկ»:

Անիծված հողն ալդպես ել մնում եր ամալի, խոպան, տա-  
ռառնկոտ...

\* \*

### «ԳՈՐԾԱՐԱՆԸ ԲԱՆՎՈՐԻՆ, ՀՈՂՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ»

Հզոր արեի ճառագալթներից ել ավելի արագությամբ տա-  
րածվեց բայլեկիկան այս լոգունդը յերկրի ամեն ծալրում: Մտավ  
ամեն մի չքափորի բորբունած հյուղ, ջերմություն տվեց, թա-  
փանցեց ու հրահրեց աշխատավոր գյուղացու միտքը:

Գյուղը փոթորկվեց:

Դրավեցին բեզի հողերը, բաժանեցին կալվածքը, նախկին  
տերերի թուները տիրացան իրենց պապական ունեցվածքին,  
բայց անկանոն դեռևս կային զրկվածներ ու դժգոհներ, դեռևս մի  
քանի ուժեղ ձեռներ կարողացան ավելին զավթել ու տիրապե-  
տել: Տարիները խառն ելին, անհանգիստ, խոսողն ավելի շատ  
հրացանն եր, քան մարդու ձախնը, լեզուն:

Գյուղամիջում մի տուն կա յերկնարկանի, քար ու կրա-  
պատ, թիթեղլա տանիքով, կապուտ ներկած մուհաջարներով,  
պատշգամբի կարմիր սյուների գլուխները կամարաձև նախշերով  
իրար միացած: Պատի ճակատին քանդկաված ե մի մարդու պատ-  
կեր, հաստ բնիսերով, խիստ հայացքով, վորից գյուղի յերեխա-  
ներն անցնելիս զարդանդում են: Աղեղնաձև շարված տառերը  
հարտնում են, վոր այդ մարդը գյուղի տերն ե՝ «Մանաս-բեզ Մե-  
լիքով»: Պատկերի աջ ու ձախ կողմում քանդակված են վեց թևա-  
նի հրեշտակներ, դեղին ներկված, կարծես խեցգետիններ լինեն:  
Ասում են, թե բեզը գյուղի տերտերի խորհրդով իր պատկերը  
շրջապատել ե՝ «վեցթևան Սերոբե և Թերորե» պահապան հրեշ-

տակներով։ Կըոնի և բեզի ուլժը դաշն են կնքել իրար հետ, վոր ձնշումն ավելի զորավոր լինի և ահեղ։

Մանաս-բեզը «վատ հոտ» և առել, ժամանակին ծլկել ե գլուղից, տան դռների վրա ծանր կողպեք և կախել, իր անձնական կնիքով կնքել, վոր վոչ-վոք չհամարձակվի իր բացակայության միջոցին կոտրի «զմուռի փեշատը»։ Բայց համարձակների մի խումբ կեռ ու մեռ սանդուխքներով բարձրացել և վեր, շոշափել կնիքը, վորի վրա լերկդլխանի արծիվ կար ու թագ։ Մեկը հեգնորեն ժպտացել և, պոկել կնիքը, ջարդել, վոտնատակ տվել, կոտրել փականքը, ուժեղ բռունցքով հրել, դուռը բացել ներս մտել ու կանչել մլուսներին։

— Ընկերներ, որս դենը սա կոմքիջի սենյակն և լինելու, իսկ կողքինը՝ հեղկոմի։

Ասում են. թե Մանաս-բեզը լսել և այս մասին, զայրացել, կատաղել, փրփրել ու սպառնացել ասելով. «Եղ արարքը ձեզ չի մնալ, կգա մի որ, քթածակներիցդ կհանսեմ»։

Մանաս-բեզը դեռ եսոր ել սպասում ե «են որին», են որը չի գալիս։ Կոմքիջիջը պինդ նստել և իր տեղը, իսկ կողքի սենյակում ալժմ գլուղխորհուրդն և իր նախագահով, վորը Մանաս-բեզի նախկին բատրակներից եւ։

Կատակ են անում հաճախ գլուղխորհուրդի և կոմքիջի անդամները, նայելով Մանաս-բեզի պատկերին։

— Ցեկեք ես իշխ հրեշտակի պատկերը քանդենք, ինչ ամացել ես պատիցը կպած, աշունքվա սատկած ճանճի նման։

— Զե՞ն, թող մնա, թող մնա ու մեր արարքներիցն ել ավելի կատաղի, չե՞ս տեսնում, վոնց ա փրփրել ու աչքերը չոե՞լ…

— Տնաշեն, ես սաղ գեղիցն ու մուլքիցն եղ մարդուն եղաքան տեղ ել չի հասնիլ վոր եղ պատիցը քար դառած, կողած մնամ…

— Հլա բեղերին, բեղերին, կասես բուղի պողեր ըլեն. հարու կտա հմ…

— Ասում են Մանաս-բեզը բեղերը խուզել ա, հալբաթ ինքնել ա տենում, վոր ել կարալ չի հարու տա…

\* \* \*

Գլուղը խոր քնի մեջ եւ. Անթափանց խավարի մեջ լուսատակի նման մի լույս և շողում միախն կոմքիջի սենյակի լուսամուտից և ցոլում փոքրիկ լամպի շողքը, վորի շորս բոլորը նըս-

տած մոտ 10—15 հոդի, լուրջ ու մտախոն գեմքերով լսում են ինչ-վոր թղթերի ընթերցում։ Ուղեղի ծալրահեղ լարումից շատերի ճակատի վրայի մեծ լեռակն ուռել ե, արլունով լցվել, քիչ ե մուռմ պալթի։ Թղթերի մեջ անհասկանալի տեղեր ու բառեր կան։ Այս, ետ տպողները, միս, ետ գրողները, վոր չեն կարողանում պարզ լեզվով, հասարակ ու հասկանալի գրեն...

— Ընկերներ, — ընթերցումը վերջացնելով խոսում ե կոմքիցի քարտուղարը։ — Ո՞ոնց վոր լսեցիք, լերկու բանի մասի կարգացինք, մեկը — հողաշինարարության, մլուսը — կոլեկտիվ տքնատեսության, Հարցը պարզ ա. մեր հողերն անկանոն ենք բաժանել մեզ ու մեզ։ Իիմի կենտրոնից հողաչափի կզա, մարդավարի կչափի, հողը շնչի կանենք ու ամեն մինը զակոնով իր բաժինը կունենա, թե ավելանա, են ել ֆոնդի մեջ կցցենք։ Ես ուրեմք՝ շատ պարզ ա. սրա մասի ել ինչ խոսք։ Մենք պետք ա ամեն միջոց ձեռք առնենք, վոր ես հողաշինարարության գործը լավ գնա. աջակցենք հողաչափին, ցուց տանք մինչև որս դավթար չընկած հողերի տեղը...

— Մի ցուցակ ել կազմենք են տնվորների, վոր հողաբաժին են վերցրել քաղքումն ապրող իրանց տղի, հարսի կամ փեսի համար, — ընդհատեց մեկ ուրիշը։

— Ետ պարզ ա. եստեղ ել շատ պարզ գրած ա ետ մասի, թե ով վոր իրան ձեռով հող չի մշակում, այսինքը՝ ով ինքը չի վարում ու ցանում, նա հող ստանալու իրավունք չունի, թե չե ինքը քաղքումն իրան աշխատանքին, գեղումն ել հող ունենա, ետ ել հո նոր դայդի Մանաս-բեկ կդառնա գլխներիս։

— Պարզ ա, պարզ ա, մեկել բանի մասին խոսա, — ձայնեցին այս ու այն կողմից։

— Մեկել բանն ել զուտ կուսակցական գծով ա. սա նոր բան ա, համա մտքիցը վո՞նց վոր լերնում ա, լավ բան ա ուզում։ Հարցը պարզ ա, կոլեկտիրի մասի լա...

— Կոլեկտիր չե, ընկեր, կոլեկտիվ, — ուղղեց կոմիներիտական Բախշուն։

— Հաշիվը մին ա, լեզուս չի պատում, վոր դուզ ասեմ, համա խելքս լավ ա պատում։ Հարցը պարզ ա, ընդհանուր գործ ա ուզում. միանանք, միասին աշխատենք, միասին ուտենք, հողը — միատեղ, վար ու ցանը — հավասար. թե ուղենք, ապրանքներս ել կխառնենք իրար, մի գոմ, մի մարագ, մի թեջան, մի խոնցի...

— Հո, հո, հո... համաց քշի, ի՞նչ ես կարկտաթակ ա-

նում, կաց մի ասածդ գլխիս բուրջումը տեղավորեմ, և... լանի ետ վճնց թե հողը միատեղ, Շեկ լալիցն իմ հողը հո շալակելու չեմ, բերեմ քու Տանձուտի տակի հողին կպցնեմ:

— Հարցը պարզ ա, ընկեր ջան, Շեկ լալն ու Տանձուտը մտիցդ գցի. հողաշնարարության վախտը ետ ամենը փոխվելու լա, հենց գիդաս քու հողը քեզ վրա լին չափելու, ևկ գիդա վորտեղ գցեն...

— Ետ վժնց կըլի...—տարակուսեցին մի քանի հոգի:

— Պարզ ա, վոր ըսենց կըլի, վոնց վոր հրես ես հրահանգի մեջ գրած ա. ալսինքը՝ կոլեկտիրի անդամները միատեղ հող կստանան հանդի մի մասիցը, համաձայն իրանց ունեցած շնչի...

— Իա, ես ասենք, իմ շունչը շատ, քու շունչը քիչ, յես վեց-ոխտը ջան, դու յերկու հոգի, դրա բանը վոնց կըլի, յես շատ հող ստանամ, շատ ել աշխատեմ, դու ինձ հետ հավասար բաժին առնես քիչ հողով ու քիչ աշխատանքով...

— Ետ ել պարզ ա, ընկեր ջան, շատ շունչը շատ հող կըստանա, շատ ել բաժին. դու վեց-ոխտը ջանի բաժին կստանաս, յես ել՝ յերկու. կոլեկտիրը հո նրա համար չի, վոր քու աշխատանքն ու հողը զավթի, ինքն ուտի, քեզ սոված թողա. ուրեմն քու կարծիքով, յես ել ասեմ, թե մենք յերկու ջան ենք, վոնց ըլի կապրենք, ել ինչու յենք ձեր վեց-ոխտը ջանի համար իշխ մշակություն անում... եղ վժնց կըլի. բա ել վժը որվա կոմունիստն ենք, վժը որվա կոլեկտիրը...

— Ասենք հողի մասի ասածդ լավ ա, համա ապրանքիցը խելքս մի քիչ լավ չի վարում...

— Կվարի, կվարի, խելքիդ խոփը վոր լավ որես, եղ ել կվարի. հարցը շատ պարզ ա:

— Ընկերներ,—ընդհատեց ՓՈԿ-ի նախագահը,—ես գործի մեջ շատ խորը միտք կա, յես առաջարկում եմ հիմի հաստատ վորոշում չկալացնենք, գավառից մարդ ուզենք, թող գա մի լավ բացատրի, ամեն բան տեղին ասի, վոր մենք ել համ ինքներս սրտով կպչենք, համ ել ուրիշներին մեզ հետ տանենք:

— Հարցը պարզ ա, ընկեր ՓՈԿ, ինչ վոր գրած ա, կարդացինք ու հասկացանք, ենա դիմու ել գրվենք կոլեկտիրի մեջ, պրծավ, գնաց...

— Զե, —առարկեց մեկ ուրիշը,—Ընկերը լավ ա ասում, եսոր-եսոր իսկի վոչ յես, վոչ ել դու, ետ զաղի անումը գրուստ չենք կարում ասենք, մեջը վոնց հասկանանք. լամբ են ա մարդ

կանշենք, վոր մեղ բացահալտ ասի կոլեկտիրի նշանակությունը։  
Ժողովականների մեծամասնությունը համաձայնվեց այս ա-  
ռաջարկին և արձանագրության վորուցին մասում գրվեց՝ 1. Աջակ-  
ցել հողաշինարարության գործին։ 2. Գավառից խնդրել մի ըն-  
կեր, վոր գա բացատրի կոլեկտիվի նշանակությունը։

Աքլորի առաջին կանչն եր, իբր ժողովը ցրվեց։ Տաք զի-  
ճարանություն եր սկսվել փողոցում կոլեկտիվի շուրջը, խոսում  
ելին, հարցեր տալիս միմյանց, հակածառում։

Կոլեկտիվի գաղափարը հանգիստ չեր տալիս կոմբիջիջի ան-  
դամներին։ Ամեն մեկը վորոնում եր այդ միտքը, ինքն իրեն հետ  
կովում ու հաշտվում, մերժում կամ համաձայնվում։ մինչեւ ան-  
դամ լերազում տեսնում ելին ապագա կոլեկտիվը իր գրավիչ կամ  
բացասական կողմերով։ Իսկ վոմանք լերազում տեսածը պատ-  
մում ու հրամցնում ելին վորպես իրական փաստ, վոր տեղի լե-  
ռնեցել ալսինչ կամ այնինչ կոլեկտիվ տնտեսության մեջ, հե-  
ռու տեղում, ինչ վոր լերեակալական գլուղում։

Հարցն այնքան այրող եր, վոր կոմբիջիջի սահմաններից  
դուրս լեկավ, ընկավ բերներերան։ — ծամեցին, ծամծմեցին,  
գզեցին ու մանեցին և, բնականորեն, չարակամները հրեշտակոր ա-  
ռասապելներ հորինեցին, հողի կոլեկտիվացմանը կցելով նաև կա-  
նանց կոլեկտիվացումը։

Կոլեկտիվը չվանի դրին։

\* \* \*

Դյուլն իրար և անցել Յերկու բանակ դեմ առ դեմ կանգ-  
նած ազմկում են։ լերկուան ել լավ գիտեն իրենց անելիքը։ Հո-  
ղարաժանման կորիվ եւ Շատ հող ունեցողները չեն ուզում զի-  
ջեն իրենց գիրքերը։ ամենից շատ նրանք են գոռգոռում։ Կան  
մի խումբ մարդիկ ել, վորոնք չեն խառնվում պայքարին։ սպա-  
սում են, տեսնեն նժարի վմբ կողմն ե ծանրանում, վոր կողմն ե  
ուժեղանում, վոր անցնեն այն կողմը։ Ինչ վոր թուղթ ե մեջ տեղ  
լեկել։ հողաչափը շուռ ու մոռ ե տալիս թուղթը, ազգանուններ  
կարդում։ ամեն մի անվան հետ հեղնական բացականչություն ե  
լսվում կոմբիջիջի և նրա կողմակիցների շարքից։

— Քաղքումն առուտուր ա անում։

— Ամառները կնկանը դաշա յա զարկում, վոր կոռպերա-  
տիվի սիպտակ կտորն ու ձուն առնի, զարկի քաղաք։

- Քաղքումը ղասաբութլուն ա անում:
- Նալոգը չի տվել, հրեն իշխ բաղնիսումը նստած:
- Մանաս-բեգի ադվակատն ա:
- Քաղքումը մասնակի պարտնոր ա:
- Դաշնակների ժամանակ ափիցեր եր, հիմի հրեն քաղքումը վարժապետութին ա անում, լայաղ ել չի անում թե գեղը գա:
- Ասս վախենում ա, լայաղ չի անում...
- Հակառակ խումբն ավելի է կատաղում:
- Հրետ ըտենց բաներ եք խոսում, վոր ես որին ենք, և, մի որինավոր մարդ ելա գեղը չի մտնում:
- Են մարդիկը վոր եգուց գան, ի՞նչ ջուղաբ եք տալու, ես գեղումը տուն ու տեղ ունեն, հերն ու մեր, ազգականներ ունեն...
- Խլեցնք, խլեցնք խեղճերի փալը, վոր կոլեկտիվի բաժինը շատ ըլի...
- Յաչելիկն աշկարա խեղդում ա մեզ, ա խալիս, ի՞նչ եք ձեններդ փորներդ գցել, տագ արել...
- Կոլեկտիվը հողի ամենալավ տեղերն ուղղում ա զավթի, մեզ քոլերն ու քոերը գցի, ի՞նչ եք պապանձվել...
- Ես ու են կողմից բորբոքվող կրակի վրա նավթ են լցնում. խոսք ու զրիցը խառնվում ե, չես իմանում ով վորի կողմնակիցն ե, ուղածն ինչ ե. ամեն մեկն ուղղում ե ավելի բարձր ծվա, վոր մլուսների ձախնը չլսվի:
- Յաշելիկի տղերքը թող զրադ քաշվեն, գեղականն իր մաս-լահաթով կվերջացնի:
- Սուտ ովին են սարքել, վոր հողի շահմար տեղը խլեն, մի նոր Մանաս-բեգ դառնան մեր զլխին. առաջ թե մի բեգ եր, հիմի տասնումինն ա ըլելու:
- Հրեն և, հրեն... առաջուց ձայնազուրկ են արել, վոր եսոր ել ունեցած-չունեցածը ձեռիցն առնեն. նա չել շունչ-արա-րած ա, թե չե, ես գեղիցն ա, թե չե, մի կտոր հող ել ա կտմք, վոր երեխանցը պահի...
- Մեղ հետ դավի չունեք, մեր բաժին հողը տված ա: հրեն... գերեզմանատանը, մարդս իրեք արշին հող, գուք ձեր ցավը քաշեցեք, վոր սար ու դաշտը ձեռներիցդ խլելու չեն, մի ծառ ել չեք գտնելու, վոր տակին նստեք, շոգի ձեռիցն ազատ-վեք, — հեռվից ձայնում ե մի ձայնազուրկի:

— Թողլը դադաղա լեն անելու, վոր ճիպոտ ել չկարենաս կտրես լեզգ քշելու համար, —վրա լե բերում մեկ ուրիշ ձախադուրի:

— Զմեռը տես մի կտոր փետ ելա կտան, վոր աչքդ կոխես, ոջախիդ ծուխը չկտրի...

— Ինչ կա չկա կոլեկտիվին, դու սոված զկուտա, ապրանքը ել սատկի առանց խոտ ու դարման:

— Կոլեկտիվի անումը մեջ տեղից հանեցեք, թող դրանք ել մեղ պես հողաբաժին ստանան հավասար, սարիցն ել, դաշտիցն ել:

— Զե... միասին, միատեղ են ուզում: Ուզում են հողի զմակը կարեն, վոսկոռն ու պողերը մեզ թողնեն...

— Թե զոշադ են, թող գնան, հրեն... են անիծած հողն ավադ անեն, շենացնեն, են վախտը կասեմ, աֆֆերիմ յաշելկա, քարիցը կանաչ հանեց...

— Հա, հա... լավ ա ասում, անիծած հողն իրենց փեշքեց, ինչ են կպել ես խալիսի բողադիցը:

— Ով վոր հենց գիդի, թե կոլեկտիվը ուզում ա հողի լավ մասը խլի, թող ինքն ել մտնի կոլեկտիվ...

— Սուտ են ասում, դրանք ուրիշին կոլեկտիվի մեջ չեն ընդունի, իս մտնում եմ, դե ինձ ձեր մեջ տռեք, հրես ամեն բան ել ունեմ, ինքս ել, սազ գեղը կվկալի, վոր ամենալով հողագործն եմ, կընդունեք, գալիս եմ.—գոչեց ձախազուրկ Ղահրամանը, աեղիցը վեր կացավ ու շորերը թափ տալով մտավ ամբոխի մեջ:

— Կոլեկտիվը ձախազուրկների տեղը չի:

— Բա մւմ տեղն ա, գեղի լավ հողը զավթողների...

— Վոր ասում եմ սարքովի բան մ...

— Սարքովին են կըլի, վոր ձեղ նմանները կոլեկտիվ մըտնեն, շինեն կուլակի կոլեկտիվ ու բատրակների հոգին հանեն:

— Դուք ել բան եք գեղի, ելի. կմւլակս վորն ա, ե, վմբը, մի հալա իմ ձեռներին ել մտիկ ե, կասես կուրչի (կրլալի) մեջք ըլի. իս եմ շատ բանմւմ, թե դու...

— Մին բանում ես, տասը բանացնում:

— Ղոչաղ ես, դու լել արա:

— Ա՛յ, հրես անում ենք, ելի, բա աչքդ չի տենմւմ. հրես կոլեկտիվ ենք կազմում, վոր բատրակը քեզ համար աշխատելու տեղ, իրան համար աշխատի, վոչ թե քեզ ու քեզ նմանների համար տնքա...

— Ընկերներ, հարցը պարզ ա. ընկեր Լենինն ասել ա, թե վոր տեսնես դուշմանդ հակառակ գնում քու արարքին, դու տեղող դհա պինդ կաց, կնշանակի լավ բան ես անում: Ուրեմն՝ մենք լավ բան հնք անում, վոր կոլեկտիբ ենք կազմում, ով մեր կողմն ա, թող գեսը կենա, ով հակառակ ա, թող գնա ձախազուրկների ջաղացի ջուրը կապի:

— Դե, խախալվեցեք, հրես խոխալը կջոկի:

Խախալը ջոկեց:

Մի մասը մոռութները կախ, բնից դուրս գցած արջի պես փնթփնթալով քաշվեց, իսկ մնացածը կատակով ու գնացողների հասցելին ծաղրական բացականչություններով ու ծիծաղով մոտեցավ կոմբջիջի խմբին:

Հողաշխարարությունն սկսվեց:

Կոլեկտիվի հիմքը դրվեց: Կոմբջիջի անդամներից զատ, կոլեկտիվ մտան նաև մի քանի չքավոր ընտանիք, վորոնց համար գլուխվարկալին ընկերությունը համապատասխան վարկ բաց թողեց:

Հողաբաժանման ժամանակ կոլեկտիվը վերցրեց նաև անիծված հողը, վորպեսզի հակառակորդների բերանը փակի:

— Ետ հողիցը թե դրանք մի բեռը խոտ ել ա տուն բերեն, թող իս սաղ տնօվ-տեղով խոտ դառնամ, — ասում եր գլուղի «անատամ գելերից» մեկը:

— Մանաս-բեզի մերը չմեռնի, նա վոր ետ հողիցն ոգուտ չքաղեց, ենքան գիտնական մարդը, զրանց ինչ ըստի բանն ա...

— Ետ ել գեղականի աշքին մոխիր փչել ա, լանի թե տեսեք, տեսեք, մենք անպետք հողն ել վեր կալանք:

— Համաշատ անխիղճ բան արին, վոր քաղքումն ապրողների բաժին հողը ֆոնդի մեջ դցեցին, պարապ-սարապ վեր ընկած կմնա զուր տեղը:

— Ասում են կոլեկտիվը վարելու լա ֆոնդի հողերը, ինչ ել ոգուտ ստանա, տալու լա ՓՈԿ-ին:

— Զե... ոգուտը տրակտորի լին տալու:

— Յաչելկեն կուտի:

— Իրանց ձեռին չի, վոր ուտեն նրանց բերանը փակողն մվ ա...

— Թող տորդ անեն, ով շատ տա, նա յել վարի:

— Մեր տղա, միտքդ ենա, վոր թե դմակը ձեռդ չընկալ, մորթուցն ել ա մի քիչ ըստես, հա...

— Դոչաղ տղի տեղ ա. թե կարենամ, ետ կոլեկտիվ ասածդ տես վոնց եմ գլխի վըա ցից անում, վոր մենակ վոտները բալդիքալդի անի...

— Ռւմուդով կաց, ռւմուդն ա կերել աշխարհքը...

\* \* \*

Կոլեկտիվի մասին շատ խեր ու շառ խոսեցին, բամբասեցին, բալց կոլեկտիվի անդամներն ասեակոսեներին չելին լենթարկվում։ Միահամուռ աշխատանքով հողերը վարեցին. գարնանացանն առջող եր, կոլեկտիվի հողերը վարելուց զատ, վարձով վարեցին ուրիշների հողերն ել, կթի անասունները սար տարան, կազմեցին կաթնարտել. Սերդաւը, վոր նորություն եր գլուղի համար, կաթնարտելի շուրջն եր համախմբում նաև մասնավորներին,

Աշնանը բերքն այնքան եր, վոր կոլեկտիվը վորոշեց ավելորդ հացահատիկը հատկացնել տրակտորի ֆոնդին.

Կոլեկտիվի հմատքը հետզհետե բարձրանում եր և գրավում շատերի ուշադրությունը։

Անիծված հողը գեռես մնում եր նույն վիճակում, վորն առիթ եր տալիս խոսակցությունների. Պետք եր նրան ևս գործէ դնել, տեղից շարժել, Խնդրեցին գյուղատեսին, վոր քննի ու խմանա, մի բան գուրս կդան ետ հողից, թե անհուսալի լե. Գյուղատեսն առաջարկեց գոմաղբով պարարտացնել, բալց դժվար եր այնքան տարածությունը ծածկել գոմաղբով։ Կոլեկտիվը քննեց հարցը և վորոշեց անիծված հողի վերի մասում գոմեր շինել, վոր ապրանքը ձմեռն այնտեղ ապրի։

— Հարցը պարզ ա, ընկերներ, գոմը վոր շինենք, ապրանքը կդնա, կդա, համ փելինը կցըվի հողի մեջ, համ ել տեղն արեսու ա, մեր ապրանքը չի մըսիլ։

— Բա ջները...

— Ջուրը հեռու լա, մի քիչ նեղություն կքաշենք, բալց վոչինչ, կմտածենք, մինչև գարունք գուցե կարողանանք մի արխանց կացնենք են վերի առվիցը։

— Վա! թե չարչարանքներս անտեղի կորչի...

— Հարցը պարզ ա, ընկերներ, ջուրը վոր գտ, ապառաժքարն ել կկանաչի, գուշ գոմերի մասի մտածեցեք։

— Ել թնչ գոմեր, ենա մի մեծ գոմ շինենք։

— Համաձայն ենք։

— Եգուցվանից սկսենք. առաջներս ձուն-ձմեռ ա գալիս,  
չույանանք:

— Գեղութն ել պարապ մարդ շատ կա, մշակ կըռնենք, վոր  
շուտ վերջանա:

Արձանագրութիւն մեջ գրվեց.

Վորուսեցինք անիծած հողի վերի մասում կոլեկտիվի նամար մի  
մեծ զոմ օխնենք, աշխատանքներն սկսենք եցուցվանից:

Քլունգն ու յերկաթե նիզը գործի ելին: Սկզբում աշխա-  
տանքը կարծես դանդաղ եր ընթանում, բայց հետզհետե ջլուտ  
բազուկները պրկվեցին, մշակները հանեցին շորերը, մնացին մե-  
տակ շապկով. հողախառն փիրուն քարը չեր դիմանում այլև  
ուժեղ հարվածներին. հիմքը գցելու փոսը յերկար ու մեկ ձգվում  
էր: Մազ տծող ու յերգ կապող Արթինն սկսեց տեղն ու տեղը  
յերգեր հորինել ու յերգել, վորին ձայնակցեցին և մլուսները:

Դե, քանիցեցե, մի զոմ օխնենք մեծ ու լեն,

բող վոր մեռնի Մանաս-բեզի մեծ բալեն.

Մանաս-բեզին ես զամի մեջ կկապենք,

թե վոր սատկի, լենքն ու յերկան կչափենք:

Կոյիկտիվը ես հանդերում վար կանի,

ես մեր գեղի կուլակներին քար կանի,

աղբաս, բատրակ ու խեղներին հալաբած՝

երանց ցալին, երանց դարդին նար կանի.

Յերգն այնուհետև դաւնում ե բամբառակ, հայնոյախառն,  
ուղղված Մանաս-բեզի, գլուղի կուլակների, ձայնագուրկների,  
տերտերի ու սրբերի հասցելին: Տղերքն այլելի յեն աշխատա-  
նում, ծափ ու ծիծաղն ընկնում ե. մեկը մինչեւ անգամ խունջիկ-  
մունջիկ ե անում, կոտրատվում, ինչ վոր հարստի կնկա պարի  
ավել ե անում քրքրվելով, տնազ ե տալիս:

— Դե, ձեզ մատաղ, խաղն ու պարն իրան կարգին, հուպ  
տվնեք, զուս անենք:

— Պահ, հալա ես ցորենի ամբարին... անիծածներն ենքան  
ցորեն ու գարի յեն հավաքել, վոր մի տուն յեթիմ կպահի...  
— Թլունգի ծալըով մեկը բաց ե անում զետնի տակ ամբարած մըր-  
ջունի ձմեռվա պահեստը:

Աշնան արել գուրեկան ջերմություն և փոել, Գյուղամի-  
ջում, պատերի տակ նստած մի քանի նախկին աղաներ, արևել-  
յան ծուլության սիմվոլ համրիչը ձեռներին չըխկացնում են, հո-

ըանջում: Կողերը դեմ արած արևին, զրուցը թեքել են կոլեկտիվի ու քջիջի վրա.

— Ինչ վոր աշխատել են, հրեն, անիծած հողումն են թաղելու. իրենց աշխատանքի համար գերեզման են քանդում:

— Հայտնի բան ա, են հողը պտուղ չի տալ:

— Զորին թե քուռակ կծնի, անիծած հողն ել խոտ ու արտկտա:

— Տեսաս խելքներին ինչ քամի լա փշել. գոմ են շինում, վոր հայվանի թրքիցը հաց հանեն:

— Իրենք շաշ են, ետ քիչ ա, են խեղճ ու կրակ քրասիբներին ել են շաշացրել:

— Եշը դադի, ձին ուտի: Հրես կքամեն, կմզեն, ել լետ աղքատը մեր դուռը կզա:

Հավաքվում են այս ու այն կողմից բոշ-բողազները, հավանություն տալիս նրանց ասածներին:

— Գիտին ալիք են մաղում:

— Լավ խմոր կհունցեն:

— Ասում են վերի առուն աանելու լեն, վոր խլեզներին ու մկներին ջուր տան:

— Զե, չե, ոձերի ու լորտուկների համար բաղնիս են շինելու:

— Բանն են ա, վոր կառավարությունն ել փող ա բաց թողել, վոր գոմ շինեն:

— Կառավարությունը գոմ կշինի, բա հո վանք չի շինիր:

— Վալ, մեր հալին. մեր ջանը դուս գա, անհատական առորդի տակ դնեն մեզ, փողը հավաքեն, տանեն նրանց տան, վոր կեն ածեն:

— Ել ասում ես... փողդ տանեն, քեզ ել ձայնազուրկ տան, վոր չկարենաս, թե ետ դալդի սարսադ բանի առաջն ելա տոնես:

— Ես գեղի չափ մինակ տուրք տամ ու մարդամիջում ել մարդ չըլեմ, բա սա որենք մ...

— Ծախելու լեմ, դիմի ծախելու լեմ, հոտը կտրեմ, լես ել դառնամ մի աղքատ դադո, տենամ կոլեկտիվը ինձ հաց կտա, կպահի...

— Կտա, վժնց չե, լվացած ցորենից թխած հաց կտա, վոր փափուկ-փափուկ ուտես:

— Շաշ խելքիդ ինչ ասեմ, նրանց ուզածն ել հենց եա ա,

վոր որեն հացի կարոտ մնանք, սոված կոտորվենք, գեղն իրանց  
մնա:

— Ես աշխարհը սուլթան Սուլեյմանին ել չի մնացել, դրանց  
ել չի մնալ:

— Սուս կաց, քամին խաբար կտանի:

— Տանում ա, տանի, մի անգսմ մեռնել պրծնելն ես դարձի  
պարելուց լավ ա:

— Կրոնեն են գոմի հիմքում կթաղեն, վրեդ ել մի մեծ քար  
կլնեն. մի դենը մտիկ ե, դենը. հենց են քանդում, կասես կրակ  
ըլի վեր կացած, ալավս աշխարհ ուտելիս:

— Դոչադ են, ախպեր, դոչադ. քանդելումը, խոսք չունեմ,  
շատ դոչադ են, համա վերջն ա գովելի:

— Քանդում ենք, վոր շինենք, բիձա ..

Վորտեղից-վորտեղ լուս ընկավ մի կոմիերիտական, վոր  
բեռը շալակած, մշակներին հաց եր տանում:

— Ախ, ես լակոտնին, ես լակոտնին, վոր վոչ մեծի պա-  
տիվ են պահում, վոչ պուճուրի խաթր...

— Դու սրանցից բեթարիցը վախեցիր, հրեն ե, են վոր  
մըլյունից շատ են, են պիոն են, ինչ են, նրանք իսկի հեր ու  
մեր ել չեն հարցնում. լաշեկեն ինչ ասի, նրա խոսքով են ժամ-  
դալի:

Պալթլուն:

Փոշու նման ծուխ բարձրացավ. քարե անձրև տեղաց:

Գոմի հիմքը փորելու ընթացքը խանգարող սալը փուլ յե-  
կավ վառողի ուժից: Մշակները միահամուռ գոռացին:

Ու... Ու... Ու...ոռա ...

Հեռվում, բարձրաբերձ լեռնաշղթայի սրածալը գագաթնե-  
րից մեկն ուզեց խրվի արկի կողը, բայց հրե գունդը խուսափեց:

— Տղերք, արկը թոլ ելավ, լետ գառեք.

Մշակները լետ գառան գործից, շորերը գցեցին վրաները,  
վոր չմրսեն. Մի քանիսը դեռ կանգնած են փուլ յեկած սալի  
կողքին:

— Տեղը պինդ նստել ա, թե ժամ չեմ գալի. մի, թե ժամ  
չեմ գալի, դե հիմի գնա ու վորտեղ քոնն ասես, ենտեղ ել մերը  
պատմի...

— Սադ յերկը թագավոր ենք շուռ ավել, սա յեկել ա մեզ  
հետ բաս մտել...

— Տղերք, ասում եմ իսկի ել տուն չգնանք, կրակ-ճրագ  
անենք, եստեղ ել քնենք:

— Կմբսենք:  
— Յուրա չի:

Ալդ յերեկո, ո՞վ զիտե, գուցե մի քանի հարլուր տարի անց,  
կամ թերես հենց առաջին անգամ, անիծված հողի վրա վառվեց  
կոլեկտիվի կրակը:

\* \*

Դոմը գլուղի սովորական գոմերից չեր: Յերկար ու մեկ  
ձգվել եր կղմինդրի տանիքով, փոքրիկ աղբածակերով: Ներսը  
կտեղավորվեր մոտ հարլուր գլուխ լեղլուրավոր մեծ անասուն:  
Ձիերի համար հատուկ տեղ եր առանձնացրած, փալտե պատով  
բաժանած: «Դոմ հո չի, պալատ ա, պալատ», — ասում ելին  
գլուղացիք ու թամաշալի գալիս:

Կոլեկտիվը խոտը կրեց գոմի մոտ, դիզեց, իսկ դարմանի  
համար ժամանակավոր, ծղոտով ծածկած մի մարագ շինեց: Գոմի  
վերեի մասում մի փոքրիկ սենյակ իր փալլուն լուսամուտներով  
ժպտում ե անցվորականին: Դա — նախրապանի տնակն ե իր պարզ  
կահավորությամբ: Մարդ ու կին յերկու յերեխալով, գլուղում թո-  
ղել են իրենց գետնափոր ու բորբոսնած խարխուլ հյուղը,  
բատրակության լուծը դեն շարտել ու դարձել կոլեկտիվի հավա-  
սար անգամ: Անասուններին խնամելու գործը մեկ կամ յերկու  
հոգու բան չեր: այդ պատճառով ել ամեն որ գլուղից հերթով  
գալիս ելին կոլեկտիվի անդամներից և ոգնում նախրապանին:  
Զուրը հեռու յեր: Զրի հարցը բավական դժվար եր: Կոլեկտիվը  
իր հերթական, անմիջական հարցը դարձրեց առվի ջուրն անց-  
կացնելը:

Ջմեռն սկսվել եր, բայց կոլեկտիվի բախտից խստաշունչ  
չեր: չոր եր ու արեկոտ:

Կենտրոնից ինչ գոր ընկեր յեկավ կոլեկտիվի պահանջով:  
Դյուղը զլիխին ե թափվել: Ինչ վոր գործիքներ ունի ընկերը, չափ  
ու ձև ե անում, գրում, հաշվում, նայում ե ջրին, մոտե ցցված  
ապառաժներին, վորոնք հեղնական ժպիտը շուրթերին քարացած՝  
գոմի հիմքում ընկած սալի նման, կարծես ասելիս լինեն, թե  
տեղներիցը չեն շարժվելու, ջրին ճամբա չեն տա, վոր անցնի  
դեպի անիծված հողը:

— Հարցը պարզ ա, ընկերներ, — խոսում ե կոմբջիջի քար-  
տուղարը, վոր միաժամանակ նախագահն ե: — Դուք կամաց կա-  
մաց քանդեցիք ես հեշտ տեղերը, իս գնամ քաղաք: Կգնամ ըն-

կերներին կասեմ, վոր մեզ բարութ ու ֆիթիլ ապետքը, վոր մեզ մի մասնագետ ապնտքը. թող տան: կասեմ, հարցը պարզ ա, մինչև դարունք ես առուն պետք ամեր գոմի կողքովը քչքաշով գնա, թե չե հու... են վոնց են ասմւմ, հա, սոցիալիզմի գործը խարաբ ա...

Մի քանի հոգի ծիծաղում են.

— Սոցիալիզմը ես առվի ջուրը փոխելու մեջ ա...

— Հա, բայ, հարցը պարզ ա, ես ջուրը վոր տանենք, հողն ավագ անենք, սոցիալիզմից ինչքան մեր գեղին, մեր կոլեկտիվին բաժին ա ընկնում, ետ բաժնից մի քանի մսխալ կատարած կլենք. բա վժնց գիտաք...

— Ետ ջուրը մեր բաղ ու բոստանին ել պետք ա, թե չե, — մեջ ե ընկնում կուլակներից մեկը: — Ետ վոր տանեք, բա ես խալիսի բաղն ու բոստանը չորանա ելի... Քանց տանում եք մկների ըները ջրեք, թե ինչ ա, ով գիդի, յերբ եք մի դարադի (դուռմ) յերես տեսնալու, հազիր ենա շեն ու լեն բաղչեքը կան, ելի... Սարքին-կարգին ծառն ու վազը չորացնում եք, թե ինչ ա կոլեկտիվը ժեռն ու քարը ծաղկացնելու լա...

Առարկությունն առաջին տպավորությունը գործեց. խալիսի մեջ դորոց ընկապ.

— Մի մատը ջուր ա, ամառն իսկի գորտի մեջքն ել չե ծածկում, ուզում եք ես խալիսի տան լորին ու խիարն ել կտրմք...

— Հարցը պարզ ա, ընկերներ, սրանք ուզում են մեզ խանգարեն. բաղ ու բաղչեն մենակ դրանցը հո չի, մենք ել ունենք. ջրի կեսը կտանենք, կամ հերթով կրանացնենք. մենք հո խալիսի դուշմանը չենք.

— Ետ վժնց կըլի... Ավելի լավ ա մինը կուշտ ըլի, քան թե յերկուսն ել սոված մնան. ջուրը վոր կես անեք, մեր բաղերին հերիք չի անիլ, ձեզ ել պետք չի գալ, կես ճամրին կցամաքից տեղ չի հասնիլ:

— Դրա համար հեշտ միջոց կա, — խոսում ե մասնագետ ընկերը: — Նախ՝ կարծում եմ, վոր ջուրը յերկսիդ ել կրավարարի, յերկրորդ՝ կարելի յե յերկու խոշոր ջրամբար շինել, վոր մինչեանգամ յերաշտի ժամանակ ել ջուրը բավականանա:

— Լավ ա ասում, լավ ա ասում, իելոք զրից ա...

Կուլակները գլուխները պտտացնելով զրադ են քաշվում, նստում քարերի վրա, փնթփնթում, կամ վեզը խլել տված յերեաների նման անզոր սպառնալիքներ կարդում:

Քլունդը, նիդը, զազման ու թին գործի լեն անցնում։ Մաս-  
նագետը ցուցմունքներ ե անում։ Ապակա ջրանցքը դեռ թղթի  
վրա լի Նախագահը մեկնում ե կենտրոն։

Պահեստում ունեցած վառողն ու պատրուլիգն իրենց գորու-  
թյունն են ցուց տալիս։ Համառ ժայռերը խոնարհվում են, փուլ  
են գալիս։ Պալթիուն պալթիունի լեռնից նղրդում են քարարե-  
րը։ Համբերությունը հատած մի քանի հոգի, մաքրած տեղի վրա  
լեն անում ջուրը, վորը հոսում ե ու դեմ առնում քարախութե-  
րին։ Բահի կոթով չափում են դժվար տարածությունը։

— Եսքան տեղը վոր քանդենք, նրանից դենը ջուրն իրան-  
իրան հաղ կանչելով ա վազելու…

— Բանիդ կաց, սոցիալիզմի ճամբեն թամզի, — կատակում  
ե ընկերներից մեկը, հիշելով նախագահի խոսքը։

Ծիծաղում են։

“ \*

Գարնան դեմ աղբակաւտերի չորս բոլորը կանաչ լեռեաց—  
լեղինջ, փիփերթ, հատ ու կենտ գետնասունկեր։

Ջլունը նոր ե վեր կացել. գետնից գոլրշի լե բարձրանում,  
կարծես հողը թափահարում ե իր փոշոտ մուշտակը։ Անիծված  
հողի վրա շարժում կա։ Մարդիկ, անասուններ։ Ծտերը քուջուջ  
են անում փելինում, իսկ ծիծեռնակը մկրատ-պոչը բացած՝ պտուլտո-  
պտուլտ ե անում զոմի չորս բոլորը, բնի տեղ ե վորոնում։ Առ-  
վից բերած արխը կեռ ու մեռ հոսում ե, խոխոջում, հեռվից  
թլում ե, թե արծաթե գոտի լե շարժվում հողի իրանով։

«Հողը պետք ե շուռ տալ», ասում են կոլեկտիվի անդամ-  
ները, բայց հերկելը գեվար ե, մանավանդ, վոր դաշտային աշ-  
խատանքներն սկսվելու վրա լեն։ Կոլեկտիվը հավիլ թե կարո-  
դանա իսկական վարելահողերը հերկի։ Տրակտորն ուշանում ե։  
Կոլեկտիվի անդամներից մեկը մի առաջարկություն ե անում։

— Ընկերներ, լիկեք մի բան ասեմ, վրես ծիծաղեք վոչ։  
Ասում եմ, յեկեք մի հինգ փութ կարտոֆից ձեռ քաշենք, ևս փե-  
լինը շաղ տանք հողի լեռնեսով ու եղ փելինի տակին տեղ-տեղ մի-  
մի հատ կարտոֆ դնենք ու խոզերը մեջն անենք։ Խոզերը հողը  
կքանդեն, եստեղ-ենտեղ կարտոֆ կգտնեն, համին կընկնեն, հենց  
կիմանան, թե սաղ հողը կարտոֆով լիքն ա, կքանդեն ու կքան-  
դեն, հողը մի քիչ տակն ու վրա կանեն, ինչ եք ասում։

Խելքի մոտիկ բան ա։

Քննում են, համաձայնվում:

Մեկ ուրիշն առաջարկում է «քարը ճղող, նլութ քաղող» ծառեր տնկել—ինչպես՝ փոշնի, ակացի:

— Փոշնին բանի պետք չի, համա լավ կլի աքացի ու լորի տնկենք:

— Եեկեք թթնի յել դնենք, բալքի բռնում ա, տերեւ շերամին պետք կգա:

Խոզերը հերկում են հողը: Հերկում են և բան ու քլունգը: Ծառատունկ ե:

Մեծ ու փոքր բերում են ու բերում զանազան ճյուղեր, շարքով տնկում, փոսերի մեջ շալակով բերած սև հող լցնում: Եերեխաները, մըջունների պես, պարարտացնող հող են կըում փոքրիկ կողովներով. ամենից շատ նրանք են փորփրում, տնկում ու խնամքով ծփծփում հողը: Չորս բոլորը ակացի յե շարված, մի մասը թթնի, մի մասն ել լորենի: Տեղ են թողել նաեւ ապագայում մրգատու ծառեր տնկելու համար, յեթե առաջին փորձն աջող անցնի:

Անիծած հողի վրա ճիպուներ են միայն յերեսում: Ծառեր են դառնալու, թե վոչ...

«Կոլեկտիվի քոլը» ծաղրի առարկա յե դարձել: Ծաղրում են հակառակորդները, թուլն են թափում «բաղերի ու բոստանների ջուրը կտրողների» վրա:

— Ասում են, կոլեկտիվի քոլումն արջ ա յերեացել, վժնց աըլելու ես գեղի բանը...

— Դու արջն ես ասում. բա վոր հրեն են ջրի վրա տախտակ քաշելու զավոդ են բաց անում...

— Մեկել որը մի ծառ են կտրել, տասնհինգ արշին հաստ, քաղքիցը վագոն են ուզել, վոր դարկեն զագրանիցա:

— Ասում են, կոլեկտիվը պայման ա կապել Թիֆլիսի հետ, վոր սաղ քաղքի ձմեռվա վառելիքն ետ քոլիցը տա...

\* \* \*

«Կոլեկտիվի քոլումն» իհարկե արջ չերեաց, բայց նրա փոխարեն մեղու յերեաց, շերամի վորթ յերեաց:

Ցերեք տարվա պատմություն ունի մեր կոլեկտիվի անտառը: Դարնանը ծաղկում են լորենիներն ու ակացիաները մատաղաշ, վալրի թթենին բաց և անում իր աչքերը, փռում նուրբ կանաչ տերենները. առվակը ջուր և տալիս նոր բանջարանոցին:

Հեռվից, շարքով շարված ծառերի տակ, լեռնում են գույնըզ-  
դուն փեթակներ. լեռկար նալելուց թվում ե, թե շարժվում են  
նրանք, կարծում ես, թե կոլեկտիվի հորթերն են. բայց... Այժմ  
այնանդ ալլես գոմ չկա: Դոմը կատարեց իր գործը. նա արժմ վե-  
րագրութած ե չոր ու ցամաք լուսավոր մեծ սրահի, լեռկար ու  
մեկ ձգված մաքուր տախտակներով: Նախկին գոմի ճակատին մի  
ցուցանակ կա—վրան իրար գրկած մուրճ մանգաղով ու կարմիր  
տառերով՝ «Շերամապահական արտել—Մուրճ—Մանգաղ»:

Դյուզի բոլոր կանաչը շերամարտելի անդամ են: Տարեցտա-  
րի ավելացնում են թթենիների թիվը, վոր բավարարի պահան-  
ջնու: Կոլեկտիվը ձեռք և բերել հիսունից ավելի փեթակ: Կոլեկ-  
տիվի անդամներից մեկն արդեն մասնագետ և մեղվաբուծության:

Անիծված հողը կանաչել ե, ծաղկել, կրանք առել...

Կյանք և առել նաև կոլեկտիվը: Դյուզում գրեթե ալլես մի-  
ջակ տնտեսության տեր մարդ չկա, վոր կոլեկտիվի անդամ չլի-  
նի: Ել չենք խոսում չքավորի մասին, վոր կոլեկտիվի հիմքն ու  
շունչն ե:

Տրակտորն լեկել և արդեն. նա շուռ և տալիս, խոր ակոսե-  
լով, վոչ միայն հողը, այլև մարդկանց ուղեղը:

Տրակտորը նոր լերգեր և բերել իր հետ: Յերգում են պա-  
տանիներն ես ու են թմբի գլխին, ձորում, անտառում, վարն ա-  
նելիս, կով արածացնելիս:

Կոլեկտիվ առ ենք արել,  
կուլակին դարդ ենք վարել,  
կոլեկտիվ փող հավաքել,  
ֆորձոն տրակտոր ենք առել:

Կուլակի ուսին կտանք,  
տերերի կուզին կտանք,  
վաշխառուն թե մոտենա,  
կբռնենք վզին կտանք:

Դարնանացան մենք կանենք,  
կուլակ, աչքի կհանենք,  
ինչ վոր աղբատ, բատրակ կա,  
մենք կոլեկտիվ կտանենք:

Դյուզամիջում, մամռակալած լեկեղեցու բակում գերեզմա-  
նաքարեր կան շիկավուն, փորագրված լեռկաթագրերի փոսերը

լցվել են քարախեժով, սկացել, դժվար է կարդացվում, բայց հայտնի լե, վոր «ազնվական տոհմի» դամբարանն եւ Տապանագարերն ալժմ նստարանների տեղ են ծառալում պարապ մարդկանց ու ծերերի համար: Ահա ալդ քարերի վրա լե, վոր նստութել են մի քանի հոգի, ջլակալած աչքերը տրորում են, նայում դեպի անիծված հողը, վորի վրա կանաչ ծառերն ու ծաղիկները խաղ ու պար են բռնել արեի, մեղվի, ջրի փալլի ու թռչունների հետ:

— Ախապեր, արին, ելի, իրանց ասածն արին...

— Բա չելիր հավատում...

— Թես ի՞նչ գիտելի, թե դրանք Մանաս-բեղիցն ել ավելի հունարով են:

— Կոլեկտիվ ասածդ վոր կա, հին առակի նման ա—«գեղ կանգնի, գերան կկոտրի»:

— Հը՛. միտքդ հո չի ծովել. չըլի՞ դու յել ես ուզում կոլեկտիվ մտնես:

— Միթամ դու չես ուզո՞ւմ...


— Մեղքս ի՞նչ ծածկեմ, ախապեր, թե ընդունեն, վազ տալով կգնամ. ես բանը տենողը քոռ պետք ա ըլի, վոր չուզենա:

— Բա վախում չես կոլեկտիվի քոլի արջերը քեզ ուտեն...

1930 թ.:

ԱՆՑՎՈՐՆԵՐ

ԱՆՑԱԺ ՈՐԵՐ



## ՍՈԼՈԹԸ

### I

Անունն Ովագիմ եր, բայց թե ինչու Սոլոթ ելին ասում, ետ մասին վոչ լիս կարող եմ բացատրութիւն տալ, վոչ ել իրենք, ասողները:

— Ախր ինչու Սոլոթ եք ասում. ինչու ավելորդ անունը Սոլոթ եք դրել, հարցրել եմ շատ անգամ գյուղացիներին, մինչև անգամ Սոլոթին հասակակից մարդկանց:

— Դե ենա Սոլոթ ա, Սոլոթ ել ասըմ ենք, բա ի՞նչ ասենք. տեսըմ չես սոլոթի պես ա...

— Սոլոթն ի՞նչ բան ա...

— Սոլոթը—սոլոթ ա ելի, ենա հրեն, տեսըմ չես՝ սոլոթի նման ա...

Ցեզ ում ել հարցնելիր, ինչ ձեռվ ել հարցնելիր, միշտ միւնուցն անբացատրելի պատասխանը կստանալիր:

Թե ի՞րը, վոր ժամանակից ելին Ովագիմը Սոլոթ շինել, կամ ինչու անպալման Սոլոթ, և վոչ թե մի նույնպիսի անիմաստ ու անբացատրելի բառ կամ անուն, վոչ վոք չգիտեր. Հայտնի լեր մի բան միայն, վոր նրանց ամբողջ ընտանիքին Սոլոթանք ելին ասում, կնկանն ու լերեխաներին, ինչպես և ապրանքին ու իրերին, նրա անունով կոչում. Կարծես եղ մարդը Սոլոթ ծնված ու Սոլոթ ել մկրտված լիներ.

### II

Միջահասակ, մեջքից կորացած ու փորն ուռած մարդ եր. դլիին—սուր ու ծալրը ծակված, մեծ վոչխարի մորթուց առանց աստառի կարած մի մոթալ փափախ, վորը հանում եր լեկեղեւ-

ցում ու մեռելատանը։ Այդ միջոցին միայն կարելի է եր տեսնել Սոլոթի ճաղատ ու տափակ գլուխը։ Մնացած ժամանակը փափախը միշտ գլխին եր, մինչև ականջակոթերը խրած, վոր քննելիս անգամ չեր հանում։

Փափախի տակից հազիվ նկատելի ելին յերկար ու կոշտ հոնքերի տակ թագնված փոքր ու շարժուն, պլազմով սուր աշքերը, վորոնք դես-դեն նայելիս, պրպտալով կարծես ուտելու բան ելին վորոնում։ Քիթը յերկար ու ծայրը տափակ, այտուկրները դուրսնեցված ու մազապատ. բեխերը բրնձուս, բերանը թափված ու քթի տակի մասը մուգ հինայի գույնով ներկված—չիբուխի ծխից։ Միջուքը ցանցառ ու կեղտոտ, վորը պսակվելուց հետո մկրատի յերես չեր տեսելի Վիզզ բարակ ու սկ ծալքերով, վորի շարժվելու միջոցին յերեռում եր, թե ինչպես սկ կեղտը հավիտենապես քուն եր դրել այնտեղի Շապիկի ոձիքը սկ, վորը քրտինքի սկ յուղից արեսի տակ փալլում եր և, վորը յերբ առաջին որը կարում ու հագցնում ելին, այն ել առանց լվանալու, այդպես ել մնում եր հագին, մինչև վոր քրտինքից ու կեղտից փտում եր արխալուղի տակ ու թելահան լինում։ Սոլոթը բողոքում եր, յերբ լվացք եր տեսնում, «Չուրը ատամ ունի, շորը մաշում ա, քիչ լվացեք», ասում եր նա թե իր տանեցոց և թե հարեաններին։

Ակաջները—յերկար ու թղենու տերեսի նման լայն, կողտ, դեպի առաջ թեքված, կախ ընկած, մեջը բրդոտ, սկացած մազերովու կեխտովի պատած։ Արխալուղն այնքան զանազանագույն լաթերով կարկատած, վոր իսկական գույնը չեր յերեռում։ Արխալուղի վերի մասը առնկից քիչ բացված, վորտեղից յերեռում ելին դուրս ցցված անրակների ծայրերը յեվ կրծքի մազերից մի փունջ։ Չուխան կարճ ու ալյուրի փողով պատած։ Շալվարը հին, կարկատած, նույնպես փոշոտ ու ցեխոտ, անալին գործած շալից, կապուտ ներկած, վոր հագած ուներ մերկ մարմնի վրա, և վորը քնելիս չեր հանում։

Ցեղե պատահմամբ, յերբեմն բացվում եր գուլպայի ծուպը և շալվարի տոտն տրձակվում, պարզ կերպով նկատվում եր շալվարի գույնից լեզակված, կապտագույն կաշին, վոր պատած եր ամբողջ վոտը։ Գուլպաներն սպիտակ բրդից, կեղտից ու ցեխուց սկացած։ Տրեխների տակը մաշված, իսկ յերեսը մազով պատած, վորովհետեւ գործելու ժամանակ մազը չեր մաքրում, մի քանի որ ավելի ուշ մաշելու համար։

Մեջքին կապած բարակ կաշե գոտուց միշտ կտխված եր թամբաքուի քիսան, վորի մեջ կալծնանը, քարն ու արեթը, սա-կայն առանց թամբաքուի Քալլում իր արագ ու որորվելով, վո-րի միջոցին քարն ու կալծնանը շրխկում ելին, նախորոք ազ-դարարելով Սոլոթի էրթի մասին։ Զախ ձեռին միշտ բռնած ուներ չիրուխը, վորի փոքրիկ կավե գլուխը ամուր սեղմած բոխ մեջ, բութ մատը բիրանին, վոր կրակը չնանգչի, կամ թամբա-քուն չթափի Շարունակ փստացնում եր, ու ամեն անգամ ծուխը կուլ տալիս, անճոռնի խոխողով կոկորդը մաքրում։ Բայց ալս մշտանջենական ծխողի քիսալում լերբեք թամբաքուի փոշի անգամ չեր լինում։ միշտ սրան-նրան եր դեմ անում իր չիրուխը և թամ-բաքու խնդրում։ իսկ լեթե պատահում եր, վոր մենակ ե, մոտը մարդ չկա, նա չորս կողմը լավ դիտելուց հետո՝ կամաց չիրուխը ջերն եր կոխում և իր ունցածից «գողանում» իսկ աջ ձեռին բռնած ուներ իր անբաժան ընկեր ծուռ չալիկը (գավազան)։

Լողանում եր տարին մի անգամ միայն, Ձրորհնեքի գիշերը, և այդ անում եր, կամ ավելի ճիշտ՝ անել ելին տալիս—հարգած լինելու համար հնավանդ ծիսակատարությունը,

### III

Սոլոթը, վորպես հասակն առած մարդ, ազատ եր տնալին ու դաշտալին աշխատանքներից։ Նրա գործն եր ջաղաց գնալը միայն։ Մնացած ժամանակը ժամ-պատարագի, մեռելատանն ու ժատաղի վրա լեր անցկացնում իր որերը։ Նա «իր հոգու վարձքի» համար, տերտերի հետ տնորհնեք, կալորհնեք ու գերեզմանորե-նեք ել եր ման գալի, թեև վոչ միայն լեկեղեցական արարո-դությունից բան չեր հասկանում, այլ և լերեսը խաչակնքելն ու «հանուն հորն» ել չգիտեր։

Վոչ մի ննջեցյալ առանց Սոլոթի չեր թաղվում։ միշտ ներ-կա լեր ու միշտ ել քերեխի գլխիցն անպակաս։ Նստում եր սուփրի ծերին ու անհամբեր սպասում տերտերի հացն որհնելուն։ Հենց վոր տաք-տաք լավաշները լերկնալին մանանալի պես թափվում ելին, Սոլոթն իր փոքր, արագաշարժ ու ագահ աշքերը կողոցելով՝ կատվի ագահությամբ վրա լեր ընկնում, և իր առաջինը թողած՝ հարեանի լավաշները թոցնում, սոխն ու պանիրը փաթաթում ու խոշոր թիքաներ անելով կլանում։

Ատամեներն առողջ ելին, իրենց տեղերում ամուր, թեև Սո-լոթն այնքան ել չեր անհանգստանալ, լեթե նրանք չլինելին ել.

քանի վոր նա շատ անգամ առանց ծամելու, թիգեն մի քիչ լըմ-լամում եր, բերանում շուռ ու մուռալիս ու լայն վորկորով, սի-մինդ կուլ տվող հավի հուտի նման, վիզը լերկարացնելով-ձգելով, ճանապարհում դեպի անլեցանելի պարկը, կերակրի ամանը մի 4—5 անգամ դատարկելուց ու նորից լցնելուց հետո, մսաջուրը առանց հաց բրդելու, կսկսեր հոգնած ձիու նման ծծել: Քահա-նան միշտ ստիպված եր լինում վերջին աղոթքն ընդհատելու, վորովհետև «Սոլոթ ապերը դեռ շարունակում եր անուշ անել»:

Սոլոփրի վրալից վեր կենալիս, իր առջեկի լավաշները պան-րով ու սոխով փաթաթում եր, դնում գրանը ու փորն ուռած, աջ ու ձախ հակվելով՝ ուզում եր տեղից վեր կենալ, բայց անի-ծած փորը դավաճանում եր նրան, զանազան բխկրխկոցներ ար-ձակելով, մինչև վոր կմոտենալին լերկու հոգի ու ալերի թեե-րից բռնած կըարձացնելին: Սովորական «Աստոծ ողորի հոգուն» ասելուց հետո, չիբուխը լցնել կտար ու փստացնելով, հակնատար բռուան նման աջ ու ձախ հակու-հակու անելով, վոտները հազիվ քաշ տալով կգնար գլուղամեջ՝ իմանալու, թե ինչ լուր կա հա-րևան գլուղերից. նոր մարդ հո չի մեռել...

Սոլոթը զարմանում եր, լերը կշտանալու մասին խոսում ելին. նրա համար դա արտառոց հասկացողություն եր, քանի վոր ինքը դադարում եր ուտելուց միայն այն ժամանակ, լերը կող-քերի ու թոքերի վերին մասերում ծակոցներ եր զգում ու շնչա-ռությունն արգելվում եր:

Պատահում եր, վոր Սոլոթն որերով կորչում եր, Պարզ եր, վոր հարեան գլուղերից մեկն ու մեկում նոր մարդ ե մեռել իսկ լերը վերադառնում եր, և գլուղացիք հարց ու փորձ ելին անում իմանալու, թե հարեան գլուղերում ինչ նորություններ կան, Սոլոթի պատասխանը միշտ դառնում եր մեռածների ու նամա-նավանդ նրանց քելեխների շուրջը, թե վորքան առատ ու փա-ռավոր, կամ աղքատիկ ու անշուք ե լեղել:

Ցեթե Սոլոթը գլուղումն ե, դա նշան ե, վոր նոր մեռնող ե լեղել, իսկ լեթե վոչ՝ կամ հարեան գլուղերումն ե, կամ ջրաղաց-ներում: Դեպքեր են լեղել, վոր Սոլոթը լերեացել ե հարեան գլուղի ծալրին: Հարեաններն իսկուն հետաքրքրվել են, թե ով ե մեռել, ու հարց ու փորձ են սկսել.—

— Արա, Ալեք, ով ե մեռել:

— Ոչով:

— Բա Սոլոթն ետ մւը ա լեկել:

— Խի՛, լեկե՞լ ա, վրա...

— Հա՛, մի քիչ առաջ ըստիով անց կացավ:

— Պա՛, դրա Դարբել-հրեշտակ տունն աստված քանդի, դեռանա մի ոքմին նաղդ մեռած կըլի, վոր դա ըստիեք ըրեացել ա-Ելի:

Յեկ գյուղացիք, իհարկե, չելին սխալվում...

#### IV

Բանի՛-քանի անգամ Սոլոթին Ջրաղացից սալլի վրա դրած, մահվան վերջին շնչումը—տուն են բերել կիսամեռ, կիսակենդան: Ես բանն առաջանում եր նրանից, վոր Սոլոթը Ջրաղացում շատ հում կրկենի<sup>1</sup> յեր կերած լինում:

— Սոլոթն ել յետ կոլինջ ա ըլել, — ասում ելին գյուղացիք, — տենաս ես անգամ ելա, կմեռնի, կպրծնենք...

— Շատ պինդ վեսկուռ ունի, մեռնիլ չի, չվել ես գեղի գըլուխն ուտի վոչ:

Յեկ իրոք, Սոլոթը միշտ հաղթում եր մահվան ու շատերի գլուխն ուտում:

Մի կիրակի որ գյուղում պատարագ կար, և զարմանալին այն եր, վոր պատարագն առանց ննջեցյալ եր: Սոլոթը, վոր Ջրաղացում պատարագի անուն եր լսել, յենթադրելով, թե անպատճառ մեռնող ե յեղել, արջից փախածի նման, շնչակտուր, հերին գյուղ եր հասել, ու զարմացած ու մտահոգ կանդնած յեկեղեցում, միտք եր անում, թե քելեխի բանը վժնց ե լինելու:

Պատարագի վերջում քահանան մի յերկար քարոզ կարդաց, վորը շատ քիչ եր պատահում, ու շատ մեծ ափսոսանքով հայտնեց, թե Հայոց Հայրիկը մեռել ե: Նա քարոզի վերջում ավելացրեց, թե հայ ազգը պետք ե մեծ սուդ պահի, վորովհետեւ նրա «պահապան հրեշտակն այլևս չկա»:

Ժողովուրդն զգացվեց, պառավներն առանց հասկանալու, թե ինչումն ե բանը, լաց յեղան, և դուրս գալով յեկեղեցուց, իրենց տպավորությունները բաժանելով, ցըլեցին տները: Ծենակ Սոլոթն եր, վոր դռան մոտ սպասեց մինչեւ քահանայի դուրս գալը, վորին մոտենալով աջը համբուրեց ու խորը հոգոց անելով ասաց:

<sup>1</sup> Կրկենին—բաղարջ հացն ե, վոր գյուղացիք Ջրաղացում թխում են առանց աղի ու թթվամորի—ոջախի կրակի մեջ.

— Տերտեր ջան, կարգիդ մատաղ, փառոց կենաս, բա ըտհենց մեծ մարդը, ասըմ ես Հալոց Հալրիկը, վոր մեռել ա, բա ես հասարակը (հասարակություն) մի հոգեհաց ելա տալ չի պտի, նրա հոգու լիս արքալութենի հմար ...

Քահանան թեև շատ տեղին գտավ Սոլոթի դիտողությունը, բայց ափսես, արդեն ուշ եր, ինքը գլխի չեր ընկել Սոլոթն իր դիտողությունից վոգերված, տերտերի հետ այդ մասին զրուց անելով գնաց նրա տուն, ու «Հալրիկի քելեխն» ենտեղ կերավ:

## V

Անցավ բավական ժամանակ: Սոլոթը շատերի քելեխը կերավ, շատ մատաղներ անուշ արեց, շատերից գերեզմանորհնեքի, կալ ու տնօրինեքի բաժին ստացավ, շատ կիսաթուխ կրկենիներ վոչնչացրեց զանազան ջրաղացներում, շատերից թամբաքու խընդրեց, շատ ու շատ անգամներ մեռավ ու յտե յեկավ, ու մի որ ել լուր տարածվեց, թե Սոլոթը շատ ծանր հիվանդ է, հոգեարքի մեջ:

Սոլոթին սալլի՛ վրա զրած հազիվ ելին տուն հասցըել հարևան գլուղից, ուր հայտնի հարուստ Զորանանց Թիքինի քելեխին եր գնացել ու ենքան կերել, վոր կողքերի ու թոքերի ծառ կոցներից ուշաթափվել եր:

Տանեցիք այս անգամ կասկածելով, թե կարող ե՝ մեռնել, քահանանալին կանչել ելին, վոր Սոլոթին հազորդի: Որը կիրակի յեր, գլուղամեղը մարդկանցով լիքը, վորոնք իմանալով այս շատ անգամ կրկնված նորությունը, մի աշխուց վեճ ելին սկսել, թե Սոլոթն ես անգամ կմեռնի, թե վոչ:

— Կմեռնի—ասում եր մեկը:

— Մեռնիլ չի,—պնդում եր մյուսը.—վեսկուռը քելեխով աղնդած:

— Արա, ասըմ են դավթարը կռերել ա, կռերել, անըմը կարըմ չեն զթնեն, վոր գան հոգին տանեն.—ծաղրում եր քոսակ Սեփոն:

— Ասըմ են քաղքիցը դոխտուր պտեն բերիլ, վոր սաղացնեն ու տանեն քաղքի քելեխների ուստաբաշի շինեն:

— Ասըմ են են դունյը մեծ կոիվ կա զրախտի ու դժոխքի մեջ, իրար ձեռից խլըմ են նրա հոգին ու կարըմ չեն բարիշեն, թե վերի բաժին պտի դառնալ:

— Զե, չե, գործը շատ դժար ա, չունքի են զունյեն գնա-

ցողը ել մեռնում չի, քելեխ ել կա վոչ, գիդըմ չեն, թե վժնց դեն  
պահիր:

— Վոնց դեն պահիլը վժըն ա... ենա ջաղաց կղարգեն,  
ընդի կրկենի կանի կուտի, կապրի:

— Ա՛ շաշ, բա են դունլըմը ջաղաց կմ...

— Կա վոչ, նրա հըմար կշինեն,

— Լճվ, ասենք թե ջաղացը շինեցին, բա վոր ընդի չիբուխ  
քաշող չի կա, Սոլոթն ումնից պաի թըմբաքու ուզիլ...

— Ե հել, ա ջահելնի, ըտհենց խոսալ չեն մեռնողի վրա,  
ամոթ ա, ինչքան չըլի մեծ, պառավ մարդ ա, շատ ել թե Սոլոթ  
ա, չե՞ վոր նա յել աստծու ստեղծած ջանլու ա. համ ել հլա մի  
կացեք, տեսանք մեռնըմ ա, թե չե. — ընդհատեց նրանց ուս-  
տա Արթինը, վոր հեռու նստած լսում եր այս ամենը:

Մի քանի ըոպե ընդհատվեց խոսակցությունը: Ջահելներն  
ուստա Արթինից ամաչելով լուցին, բայց քիչ հետո մի անկյուն  
քաշված՝ շարունակեցին, այս անդամ ավելի տաքացած. —

— Արի մարջ (գրակ) գանք, վոր մեռնիլ չի, — ասում եր Մե-  
րանի աղա Սուքին:

— Կմեռնի, — պնդում եր բիդտիկ Մուսին:

— Իե մարջ արի ելի, մարջ արի, թե վախըմ չես:

— Արա, շաշկես վեչ մարջ գաս, հինգ հետի մարջ եմ յեկել,  
թե կմեռնի, ու տանիլ տվել Սոլոթի նանը մեռնի վոչ, նա պըն-  
դել ա, պնդել, նա հլա մեր քելեխն ել կուտի. նա հու իսան չի,  
մի ուրիշ ջանավար ա, — զգուշացնում եր Քաշալանց Ղասին:

Մինչդեռ սրանք վիճում ելին, քահանան արդեն հասել եր  
Սոլոթենց տուն:

## VI

Սոլոթը համարյա մեռած, խոնավ գետնին մի չոր կարպետի  
վրա պառկած եր իր հագի շորերով, վրան ծածկած մի հին վեր-  
մակի մթել նա հոգեարքի մեջ դտնվող հիվանդի պես խոխո-  
լով, տնքում եր, Տաքությունից աչքերը կարմրել ելին ու կիսա-  
բաց հասել մի կետի. փորը սովորականից ավելի յեր ուռած:

— Ովագիմ ապեր, ընե Ովագիմ ապեր. — ձայնեց տերտերը, —  
մի վրա նստի, հաղորդություն առ, վոր Հիսուս-Քրիստոսի ոգնու-  
թյամբ ցավից ազատվես, լավանաս:

Հարսները Սոլոթին մի կերպ վրա նստացրին. մեջքի տակ  
մի բարձ դրին, վոր նստած մնա:

— Տերտեր ջան, վոտիդ մատաղ, — հազիվ ՀՀնջաց Սոլոթը  
տընքմնքալով, — ես ա մեռնըմ եմ, համա սրտումս մեծ դարդ կա,  
ուզըմ եմ քեզ ասեմ:

Քանանան նշան արավ, վոր տանեցիք հեռանան:

— Ասա, Ովագիմ ապեր, ասա, քաշվիլ մի, մենսակ լես ու  
դու լենք:

— Ել բնչ ասեմ, տերտեր ջան, ես աշխաքըմը մի մարդու ելա  
մի վագութին չեմ արել, թե արել ել եմ, թողութին տուր, համա  
ես իմ վերջի որվա մի խնդիրքս ել կադարի, վոր նրանից լեդով  
սիտս դինջ մեռնեմ:

Սոլոթը մի քիչ առաջ թեքվելով, մոտացավ տերտերի ա-  
կանջին ու փսփսաց. — Ես մեր տանըցոնց ասա, վոր իմ քելեխը  
վրազ հազիր անեն, պաղրաստեն, իմ քելեխիցն ել ուտեմ ու հո-  
գես դյուզ աստծուն տամ: Դու ել ըստի կաց, վոր քու ձեռովը  
խաչակնքես, որհնես, վոր հալալ ըլի: Վայ թե մեռնեմ, ես դար-  
դըս հետս գերեզմանըմս դինջանալ չեմ:

Քահանան իսկուն իր մոտ կանչելով Սոլոթի մեծ տղին,  
հայտնեց նրան իր հոր վերջին կամքը:

Հարսները Սոլոթին պառկացրին ու անմիջապես սկսեցին  
ցեփել ու թխել:

Տաք-տաք լավաշները, մսի կտորները, սոխն ու պանիրը  
մի խոնչի (փալտե մատուցարան) վրա դրած բերին: Տերտերն որհ-  
նեց, հարսներին կանչեց, վոր Սոլոթին պառկած տեղից վրա  
նստացնեն, վոր իր քելեխն ուտի, բայց ավաղ ... արդեն ուշ եր:  
Սոլոթը «մուրազը փորումը» մեռավ, վոնց վոր ասում եր նրա  
կնիկն ու գլխին վայ տալիս:

1918 թ.:

## Դ Ր Ա Ս Ի

Կոլլեժսկի ռեզիստրատոր Գերասիմ Նիկիտիչ Մարմարովը  
Մաղկուտ գլուղի բնեն եր:

Նրա հայրը—տեր-Ղամբեոսը իր մինուճար տղին քաղաք  
տարավ, տվեց քաղաքալին դպրոցը, վոր չինովնիկ դառնա:

Բթամիտ ու ծուլլ Կարապետը—հազիվ հասավ մինչև 2-րդ  
դասարանը, վորտեղից նրան գուրս արին, ու նա մի տարի պա-  
րապ-սարապ թրե գալուց հետո, գրադիր դառավ, առաջ նոտարիու-  
սի մոտ, հետո դատարանում, ուր «ստատիաներ» անգիր անելով՝  
դարձավ ադվակատ, կամ ինչպես ասում են—բալկոնի աբլակատ:  
Ահա ալդ ժամանակ եր, վոր Կարապետ Ղամբեոսովիշը շինեց  
Դերասիմ Նիկիտիչ ու մտածեց իրենց գլուղի բեզը դառնա: Նա  
գեսից-դենից կեղծ թղթեր ու վկայականներ հավաքեց, շատն  
ինը մոգոնեց, հաստատեց, վոր խողարած Ղամբեոսը, վորը կա-  
շառքով աեր-Ղամբեոս եր դարձել, պատումսվեննի դուխովնի (ժա-  
ռանդական հոգենորական) լե, ու խնդիր տվեց, վոր գլուղն իրենց  
տան, հետն ել բեզություն:

Ամառվա բանուգործի են զըլլան վախտը Գերասիմ Նիկի-  
տիչը մի քանի մարկանց հետ գլուղն լեկավ: Սա առաջին ան-  
գամն եր, վոր 12 տարուց հետո նա իրենց գլուղն եր դալի:

Սուղի ծառայողի սե տուժուրկեն հագին գեղին կոճակնե-  
րով, գլխին—մախմուր պատ տված ու ջուխտակ կոկարդ կպցը-  
րած կարտուզ, պլազան կազիրոկով, վզին մի լերկար, մինչև ա-  
կանջների տակը հասնող կրախմալած վորոտնիկ, ենակես կպած,  
վոր նեղ խամուտ կապած ձիու նման չեր կարում վիզը թեքի,  
կապույտ գիագանալից նեղ շալվար հագած, պըլպըլան, զութիսու-  
քթի չափ լերկար վոտնամանները հագին, պրպտան աչքերով  
մի լերիտասարգ եր նա:

Նրա լեզուն շատ կարդալուց «զիրը տարել եր»,ու ես դատարանի կորրիդորում վեր ընկած, սրա-նրա ձեռին մտիկ անող տադվակատը, վոր ոսերենը հավանգ-դաստով ջարդում եր, Ծաղկուտում մոռացել եր հայերենը և գյուղացիների հետ ոսերեն եր խոսում: Նա չեր ճանաշում իր մոտիկներին անգամ ու թեև շատ լավ ել հասկանում եր նրանց ասածները, բայց չհասկանալն եր դնում իրեն և ուսերը վեր քաշելով ասում.—

—Գլուխ փոխվթց, ոռւս դառավ. զդրաստի, պաժալուստա, պարուսկի գավարիտ... Դերասիմ նիկիտիչ...»

Իսկ գյուղացիներին պատահելիս միմիայն «զդրաստի» յեր ասում ու անցնում:

Մյուս որն ամբողջ գյուղը նրան ՚նրասի յեր կանչում:

Իսկ պառավ կնանիքը փառք ելին տալիս աստծուն, վոր չմեռան, իրենց գյուղումն ել մի ուսումնական մարդ տեսան:

Դրաստու հետ յեկած մարդիկ հետներն ինչ վոր դեղին աըրուքա ելին բերել վորն եսու են թմբի ծերին ելին դնում, գեղի հանդին թամաշա անում ու տեղ-տեղ ել ածուխ թաղում, կուրգան անում ու գրում:

Ովքեր ելին նրանք, ինչ մարդիկ ելին, վոչ վոք չեր հասկանում. իսկ տեր-Ղամբեռուը գյուղացիներին աչքալիս եր տալի, թե տղեն եղ մարդկերանցը բերել ե, վոր գյուղի պլանը քաշեն, ուղարկեն թագավորին, վոր նա յել իրենց մարդատեղ դնի, լիս աշխարհ գցի, ուսումնարան բաց անի, վագզալիցը շուելի ճամբա բաց անի, վոր քոլի միջին կորած ետ 50 տուն ունեցող գեղն ել գեղ դառնա:

—Որչնվի դրանց եկած ճամբեն, որհնվի տղիու ծնունդը,—ուրախացած ասում ելին գյուղացիք, վորոնց մեջ վոչ մի գրագետ մարդ չկար, բացի տեր-Ղամբեռոսից, վոր իր անունը հազիվ եր ստորագրում, թղթի վրա տառերի փոխարեն հավի ճանկեր նկարելով:

Մի տարուց հետո, յերբ թագավորական հարկի փոխարեն, ստրաֆնիկներն եկան ու բերքի տասանորդները հավաքեցին, տվին տեր-Ղամբեռոսին, լցնելով նրա ամբարները, ծաղկուտեցիք նոր հասկացան, վոր իրենք դարձել են խոպարած տեր-Ղամբեռոսի ու իր տղա ՚Նրաստու ճորտը, Բայց ի՞նչ կարող ելին անել... Մի կողմը պըհստավի զամշին եր, մյուս կողմը տեր-Ղամբեռոսի անհծքը:

—Տունդ քանդվի, ՚Նրաստի ... Վոտդ կոտրեր, վոչ քաղաք գնալիր, վոչ ել յետ գալիր...—հառաչում ելին գյուղացիք:

Դրաստի-աղեն շատ անխղճմտանք եր. վոչ սով եր հարցնում, վոչ կարկուտ ու մորեխ. նա իր բաժինը մեկին-լերկու հավաքել եր տալիս. Ինքը քաղաքում նստած, սաղ գեղի արլունն եր ծըծում. Յերկու տուն եր տոել քաղաքում, պասկվել, բայց աստվածն րա աչքը հանել եր, յերեխա չեր ունենում:

—Ե՞սա հա, եսա, ես քավթառը կսատկի, են շունն ել ժառանդ չունի, մի որ ել նա հոգին պահ կտա սատանին, կպըրծնենք ես ջնջվելիք շան ցեղիցը,—ասում ելին գլուղացիք ու սպասում ետ որին, Դյուրդի ջահեներից շատերը տան ապրուստը հոգալու համար, մեկ ել չուզենալով տեր-Ղամբեռսին ու իր տղա Դրաստուն ճորտ մնալ, փախան քաղաքները,

—Մի բան վոր մեր աշխատանքը մերը չի, են շունը իրան համար քաղաքը դինջ ապրում ա, մենք ըստի հոգեհան ենք ըլում նրա համար, լավն են չի գնանք մի զավոդում զուլուդ անենք... Հեր խաղեիննիս Ելա մարդ կըլի—խողարածի տղա չի ըլի, —ասում ելին նրանք.

---

Դարնան վարի համար սարգ ու կարգ ելին անում ծաղկուացիք, յերը մի որ մին ել են տեսան Դրաստին յեկավ:

—Դրաստին եկել ա, Դրաստին եկել ա...—ահարեկված իրար լուր ավին գլուղացիք:

—Խեր բանի համար եկած կըլի մել... դրա տունը քանդվի, ինչ մեր տունը քանդվից դրա ձեռից...

Մյուս որը Դրաստին բոլոր գլուղացիներին հավաքեց, Նա ֆասոնը փոխել եր, ել առաջվանը չեր, ֆասոնը—վոչինչ, նա լեզուն ել եր փոխել. հայերեն եր խօսում ու ոսերեն մի բառ ել չեր խառնում. Դրաստին հայտնեց, թե ինքը վորոշել ե ալսուհետե գլուղում ապրել, նրանց հետ միտսին, թե նա մտադիր ե դպրոց բաց անել իր հաշվին, թե մի տարվա խարջը բաշխում ե, թե գլուղի համար աղբյուր ե բերել տալու... ու եսպես շատ բաներ:

—Տղեք, Դրաստու սիրտը ողորմութին ա ընդել...

—Թե ես բանումը մի «ե» չըլի հա, գլուխս կտրիլ կտամ...

—Ի՞նչ պետք ա ըլի վոր...

—Յես իմ, աշխարհ չի... հալբաթ մի բան կըլի Ելի...

Ամբողջ գլուղի խօսակցութիւնն նյութը Դրաստու բարեգործությանն եր վերաբերում. ու եսպես կասկածելով ու չհաս-

կանալով, ամեն մինը իր գլուխը կախ՝ իր գործին եր: Նրանք հավատալով, վոր Դրաստին մի տարվա խարջը բաշխելու իս, ել ավելի յեռանդով գործի կպան:

Ազունքվա կալ ու կուտը հավաքված, վերջացրած վախտը կորիվ գնացած սալդաթներից մի հինգ հոգի յեկան ու... հենց յեկած իրիկունը Դրաստու տունը շրջապատեցին, թե բռնեն:

Դրաստին փախել եր:

—Ախըը ի՞նչ եք ուզում են մարդիցը. ես տարի մեր խարջը բաշխում ա, մեղ համար շկոլ ա բաց անում...—բողոքեցին մի քանի հոգի:

—Թագավորին թախտիցը վեր են գցել... հմի յել հերթը դրանց պես բեգերինն ա... ի՞նչ խարջ, ի՞նչ զադ... հողն ել յետ մերն ա, մերը...

—Ե՛հետ, բա վոր ասում ի, ըստի մի «և» կա...

—Ել ասեցիր ու պրծմար... «և», են ել ի՞նչ դալդի «և», թագավորի զադար...

Ցնծում ելին ծաղկուտեցիք: Զուռնա-դհոլով պար ելին գալի և ուրախանում—աշունքվա են բոլ վախտը, վայելելով իրենց բարիքները, որհնելով Սովետական իշխանությունը...

Յերկու տարի յեր անցել են որից: Ծաղկուտի քաղաք փախած ջահելներն արդեն մեծ ու հասուն մարդիկ գառած՝ գյուղ ելին յեկել ու գործկոմումն ու յաչելկալում աշխատում ելին: Տերշամբեռուը մեռել եր, վորից հետո գյուղի կոմսոմոլը յեկեղեցին խաճիթ-ընթերցարան եր շինել: Գյուղացիք Դրաստուն տալիք խարջի կեսը ամեն տարի հատկացնում ելին դպրոցին: Աղբլուրը բերել ելին գեղամեջ ու հիմի յել առու ելին անցկացնում այգիների ու արտերի համար...

Բայց ես ընդհանուր աշխատանքի ժամանակ մի հոգի միայն զբաղված եր մի տարրորինակ աշխատանքով:

Ամեն առավոտ գործկոմի գրասենյակն և մտնում մի կուչ յեկած մարդ, վորի գլուխը ծնկներին և հասնում, վրան զցած մի սե, ծակծկված ու ցեցը կերած պլաշ, կեղտից սեացած ակնոցների տակից յերեռում են նրա ճպռոտած ու կարմրած, սառը, նաշխուն հուլունքի պես աշքերը, կարտուզի կիզիրոկի մի կողմը ջարդված, փայլը կորցրած, ճաքճաքոտած, կարահան ելած, մախմուրը քրտինքից սեացած, զլիսի գաղաթին կպած տեղը կեղտից ու ճարպից յուղոտած, փալլելիս, կոկարդի տեղը ծակ ու

կլոր փեշատի պես, շալվարը կարկատորած, վոտնամանները քանդված, քայլերն անհամարձակ ... Նա ներս մտնելուն պես զողողալով հանում և ծոցից քըտինքից դեղնած մի թուղթ ու մոտենում գործկոմի նախազահին:

—Կա... կա... կարելի՞ լե գրել...

—Կարելի լե:

Նա խնամքով բաց և անում թուղթը, առնում մատիտը և բաց անելով լելից ու մտից մատլանը՝ համարներն արտագրում իրեն համար ու գուրս գալիս գործկոմից, նաևելով համարներին<sup>1</sup>:

Դա կոլեժմակի ռեզիստրատոր Գերասիմ Նիկիտիչ Մարմարովն է, վորին պատահող ամեն մի գլուղացի, փափախը հանում և ու հեղնանքով խոր գլուխ տալիս: —

—Դրաստի:

1922 թ.:

---

<sup>1</sup> Սովորությունն եր Առանց համարները գրելու չեր կարողանում ապրի:

## ԿԵՍ ԽԱՆ ԿՈՐԵԿԸ

Քսանութ տարի սրանից առաջ վորբեալրի Թազագուլը  
գլուղամիջում գտնվող, դպրոցին կից իր տնատեղը ծախեց տեր-  
Բաղամին կես խան կորեկի, վորբերին սովից ազատելու համար։  
Դե, աղքատի որը սև ըլի. Թազագուլն ուզեց փոխարինաբար  
վերցնել, բայց տեր-Բաղամը չհամաձայնվեց, ասելով՝ «Քեզ տամ,  
հւմնից առնեմ. արի տնատեղդ ծախի ինձ»։

Ալդպես ել յեղավ։

Հենց ետ տնատեղն եր, վորի չորս կողմը ածուխ եր թաղել  
տվել, կուրգան արել տեր-Բաղամը և որենքի միջոցով շինել իր  
սեփականությունը։

Ո՞վ կհամարձակվեր կուրգաններին ձեռք տալ... Ետ տեսակ  
համարձակի տեղը Սիբիրն եր: Խսկ յերբ գլուղացիք կամեցան  
գնել տեր-Բաղամից, նա իր կես խան կորեկն ուզեց, հաշվելով,  
վոր յեթե ետ կորեկը ցաներ և քսանութ տարի շարունակ ստաց-  
ված բերքը կրկներ, կես խանը կդուրս գար են քիչը-քիչը ամ-  
բողջ գլուղի մի տարվա բերքը։

— Բալքի կարկուտն եր տանում, մուկն եր քաղում, կամ  
սելավն եր սկում. ետքան կորեկ վմրդիան կդառնար, ա, տեր-  
տեր. դե, հենց բան ասա, վոր միքիչ ել հոգուց մոտիկ ըլի յե...։

— Հովի-մոգի չեմ ճանաչում. հրետ, տեղը սաղլամ կենում ե,  
վոչ կարկուտն ե տարել, վոչ մուկն ե քաղել, վոչ ել սելավն ե  
սկել. հալա չորս կողմի կուրգաններին մտիկ արեք... Թազա-  
վորի թախաը հաստատ կենա, նրա ձեռովն ա թաղած ետ կուր-  
գանի ածուխը։

Ցեզ ամեն տարի աղմուկ եր բարձրանում ետ հարցի շուրջը,  
բայց բան չեր դուրս գալի. սեփականությունն անձեռնմխելի յեր։

Ցերը թազավորին գահընկեց արին, ամենքն ել ասում ելին,  
թե սեփականությունը վերտնալու յե, թե հողերը բեգերից, տեր-

տերներից ու լեկեղեցիներից առնելու լեն տան գյուղացիներին։ Հենց են ե,քիչ եր մսում, թե տեր-Բաղամի տեղն առնեն ու դըպ-ըոցը մեծացնեն, ինը լիազորն ասեց, թե նոր կառավարութիւն-նից հրաման կա, վոր հողատերերի քեֆին չդիպչեն, վորովհետև կարող ե խառնակութիւն առաջ դալ, ու թուրքերը կարող են հանդամանքից ոգտվեն ու հարձակվեն հալերի նոր, դաշնակցական կառավարութիւն վրա։

Ելի մսաց են հին ջուրն ու հին ջրաղացը։ Մարդիկ ելին փոխվել, որենքը Ելի հինն եր։

— Կես խան կորեկը տվեք, ու հողը ձեզ փեշքեց, — նորից կրկնեց տեր-Բաղամը։

— Հրես հալբաթ կդան մեր ընկեր բալշեկները, քու ջանի համար, տեր-Բաղամ, — կատաղած գոռաց թագից լեկած տղերանցից մեկը, վորին ետ խոսքի համար իսկույն ձերբակալեցին։

Մի որ ել, լերը խմբապետները գյուղը թափեցին, վոր գյուղացիներին Աղրբեջանի դեմ կոիվ ուղարկեն, զինված տղաների մեջ մի քչիոց ընկավ, թե իրենք չեն գնա Աղրբեջանից լեկող բալշեկների դեմ կովելու, և հենց վոր հասան դիրքերը, փոխանակ «թշնամու» դեմ գնդակ արձակելու, հրացանների ծալրը լետ թեքեցին ու քշեցին խմբապետներին ել, նրանց թե ու թիկունք բեկերին ու տերտերներին ել։

«Ծառի վորդը վոր իր միջիցը չըլի, ծառը չի փտիլ», — ասաց տեր-Բաղամը և տան պուճախը քաշված, սպասում եր, թե ինչ է լինելու վերջը։

Տղերքն իսկույն ունկոմ կազմեցին, նրանցից մեկը տեր-Բաղամի հոգի կուրդանները քանդեց ու ածուխը հանելով՝ տվեց դարբին Կարոյին։

— Տնը, մի հատ քունդ շինի, վոր հիմքի տեղը քանդենք ու տունը շինենք։

— Արա, Սարգիս, տեր-Բաղամը մեղք ա, հի կես խան կորեկի տեղ ետ ածուխն ել ա նրան տու, սամավար զցի։

— Աև ցավ տամ, սև ցավ...

Թար ու կիրը պատրաստ պատ ելին շարում, լերը տեր-Բաղամը թագստոցից դուրս լեկավ, տեսավ, բալց ծպտուն չհանց։ Նա տուն դարձավ, ժանդուտած զալամը ձեռը կալավ ու մի խնդիր դրեց կառավարութիւնը ես աւորինութիւն դեմ։ Վոչ վոք չգիտեր ետ խնդրի մասին, լերը լերեք տարի հետո գյուղգործկոմը մի թուղթ ստացավ հետեւալ բովանդակությամբ։

«ԳԱՆԴԱԾ վասն կես խան կորեկի, ի տեր-Բաղամի Քարհանլան, ի Սխտորաշեն գեղջ, առ հոտս նորին իշխանության, վոր ապորինաբար քանդալ կուրքանսն զավթալ լեղեն զտեղն իմ, գնլալ ի Թաղագլուլի ալրիե—կես խան կորեկիվ, 28 տարի անտի: Ընդսմին գոլով՝ հարուցանեմ զբողոքն իմ, զի լուարուք և դարձուցանեք հետս իմ զկես խան կորեկս—հանդերձ տոկոս լուք վասն հապահովություն ընտանլաց իմոց ի տերն ամեն»:

(Ասորագրություն)

Հստ լերնութին կենտրոնում վոչինչ չելին հասկացել, թե բանն ինչութիւն ե և ուղարկել ելին գլուղգործկոմին ի տնօրինություն:

Մյուս որը գործկոմի նախագահը կանչեց տեր-Բաղամին և ալրի Թաղագլուլին, կես խանի տեղ մի խան ցորեն չափեց ու տվեց Թաղագլուլին, տերտերին ասելով, թե՝

Կառավարությունը լսելով խնդիրը, վորոշել կես խան կորեկի հետ մի խան ել տալ Թաղագլուլին, վորովհետև տեր-Բաղամը շատ եժան ե գնած լեղել հողամասը:

— Ա՛յ քեզ որենք...—մըթմըթաց տեր-Բաղամը ու վեշերը հավաքելով՝ տուն գնաց:

1923 թ.

## ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Զմեռնամուտ եր:

Խավար գիշեր:

Մառախուղն իր սարը ճանկերը պինդ թաղել եր հողի մեջ:  
Ցուրտը մարդու վոսկորներ եր ծակում:

Բաշալ-Դաղի զլսին, են՝ վոր մեծ ճամբան թուրքի ու հայի  
սահմանը բաժանում և իրարից, մի քարի բութա արած, յա-  
փունջու մեջ փաթաթված, հրացանը խտած նստել եր կարոն:  
Նա վոտները ծալել, տակին եր դրել, վոր ցուրտը չտանի, և պահ-  
պանում եր գիրքը, վոր թշնամին գիշերով ներս մտնելիս—հրա-  
ցանի պայթյունով իմաց տա գյուղին:

— Թոռնան իմացել ելինք ու չելինք տեսել,—մտածում ե  
կարոն,—ես ել տեսանք: Ախր ես մեր վալրենի սարերը վորտեղ,  
թոփն ու պուլիմուտը վորտեղ... Ախր մեր հալալ վար ու ցանը,  
մեր խոռն ու մանգաղը վորտեղ, ես դիրքերը, թուր ու թվանքը  
վորտեղ... Կորիմ ել ըլի—հեռու տեղ, մեծ-մեծ թագավորություն-  
ների մեջ: Գիղի միջին, տանդ դռանը, արտղ տրորելով կորիվ  
կըլի... Ո՞վ ա տեսել, վոր հունձ անող մշակի ձեռին մանգաղ  
ըլի, ուսին ել թվանք, կամ մաճկալը մի ձեռով մաճը ըռնի, մե-  
կելով թվանքի լույսն: Ասեցին—Նիկալային թախտից վեր են  
գցել, սպանել. աշխարհս խաղաղվելու յա, հայ ու թուրքը ախ-  
պոր պես ապրելու յեն, ճամբեքը բաց ու աղատ են ըլելու: Ու-  
րախացանք, թե որես դենը մի կտոր հալալ հաց կուտենք, լավ  
որ կտեսնանք: Դե առ. հրես մէ, հալալ ապրուստն ու կյանքը...

Կարոն մտքի տունն ընկած՝ քիչ եր մնում քներ, ու վոր-  
պեսզի քունը իրեն չհաղթի, նա սկսեց ինքն իրեն հետ բարձր  
ձախով խոսել...

— Տունդ քանդվի, դաշնամի, ինչ ճամբեքը կապեցիր, մեզ  
վար ու ցանից հանեցիր, սար ու ձոր գցեցիր, տանս մի կտոր

հաց չկա, լերեխանցս վրա—շոր: Զեմ ել կարում, թե հին իմ  
քերվա Հասանին ելա տեսնամ, նրա տուն գնամ, մի քիչ տորեն  
ելա բերեմ: Մեզ դուշման են շինել, իրար լերես չենք տեսնում:  
Ավոր մի հարցնող ըլի, թե յես ու Հասանն ի՞նչ դուշմանութիւնան  
բան ունենք: Իրարով յոլա լենք գնացել. թե յես հաց չեմ ունե-  
ցել, նրանից եմ բերել, թա նա յեզը չի ունեցել, իմոնքը տարել  
ա, բանացրել: Դե, ձեր տունը քանդվի, մեր տունը խի՞ յեք քան-  
դում, թող արեք ելի, թող արեք մեր ցավին կենանք: Ա՛խ, Հա-  
սան, Հասան, յարաբ դու վորդի յես, դու հմի ի՞նչ բանի յես. եր-  
նակ մի տեղդ գիդենամ, գամ մի դարդս պատմեմ... Հասան, հե  
Հասան, յանի դու ինձ կսպանես. խի՞, մեր աղ ու հացը բա վոտի  
տակ կտամ... Հասան, արի ելի, արի. թե դու վախում ես, լերե-  
խանցդ ելա դարկի, տեսնամ, կարուտել եմ. վժնց ա քու պուճուր  
Մուսան, քու Խալիլը... Հասան, իմ ձեռը կչորանա, յես նրանց  
ձեռ չեմ տար: Մուտ ա, մենք դուշման չենք... Արի, արի ե,  
Հասան, բա քեզ խիղճ չունես... Երեխեքս սոված են. արի մի  
կով տամ, մի քիչ ցորեն տու, ձմեռնահան ըլենք...

Կարոյի աչքերից լերկու խոշոր արցունքի կաթիլ կախ-  
վեցին:

Լուռ եր ամեն ինչ. ցուրտ, խավար...

Բամին եր մենակ սուլում, ու հեռվից լսվում եր մի սոված  
գալի վոռնոց...

— Ասում են—հիմի յես դաշնակ եմ, յանի թե՝ թուրքի  
դուշման. Հասանն ել—մուսավաթ ա, յանի թե՝ հայի դուշման:  
ու մենք վոր իրար պատահենք, պետք ա անպատճառ մեկ-մեկու-  
կոտորենք,—մտածում եր կարոն:

— Ավոր մվ ա հնարել ետ բանն ե, մվ... ինձ հարցը լին, վոր  
դաշնակ են շինել... Յնս եմ ու թուրք չեմ սպանում, ու հալա նրա  
հետ ել մի լավ պուշտի յեմ անըմ, ի՞նչ պատես անիլ... Զե... խմբա-  
պետը գլուխոդ կկտրի—ասում են: Դու հայ չես... Թե սոված ես,  
գնա թուրքին թալանի, նրա հոդն ու տունը խի՞ ձեռիցը... Ավոր  
յես իմ Հասանին վժնց ձեռք տամ, յես նրա տունը վժնց խլեմ,  
վժնց քանդեմ. բա խղճմտանքիս ի՞նչ ասեմ... Նրա տունն ու  
իմը մվ ա ջոկել մինչեւ որս... Բա մարդ ել իրան տունը իր ձե-  
ռովը կքանդի...

— Կարո, Կարո, մի քիրվա կարո...— Հանկարծ մեկը՝ կամաց  
ձալն տվեց նրան:

Կարոն ոձի կծածի նման վեր թուավ ու լերազից սթափիվածի

նման հրացանն ուղղեց դեպի ալն կողմը, վորտեղից նրան թվաց,  
թե ձայն լսեց:

— Քիմ սլան<sup>1</sup>. տեղիցդ չշարժվես, թե չե կսպանեմ,—գոչեց  
Կարոն ու հրացանը պատրաստեց կրակելու:

Զայն չկար:

Կարոն դողում եր:

— Քնով ելա, լերազ տեսա, թե՝ ինքս իմ ձենն իմացա ու  
վեր թռա, թե ելի զորթ, վոր ինձ կանչեցին... հը...—Միտք եր  
անում Կարոն, տեղը կանգնած, փետացած:—Բա վոր մարդ անց-  
կացած ըլի դեսը... Զե, թուրքի դիրքերում ձեն-ձուն չկա,  
մարդ չի լերենում...

— Կարո քիրվա, Կարո, այ քիրվա Կարո...

Նույն ձայնն եր խավարի միջից, բայց շատ մոտիկ:

— Ո՞վ ես, այ թուրք, թնչ ես ուղում:

— Հասանն եմ, Հասանը. ձենդ իմացա, լեկա, թնչ ես կան-  
չում:

— Զե, արի, արի, մոտիկ արի, Հասան ջան, վախիլ մի:

— Դե, դու արի, դու. դու մի վախիլ լես Հասանն եմ:

Կարոն արձանի պես տեղը մեխվել եր: Գնար, թե չե. վա  
թե Հասանը չըլի. կխարեն ետ թուրքերը, կտանեն, կսպանեն  
Ասենք ձենը նման ե, բայց մի դիտե...

— Կարո, քիրվա Կարո...

Զայնը բոլորվին մոտ եր:

— Հասմն...

— Կարոն...

— Հասան, մենակ ես...

— Համ... Բա դժւ...

— Թես ել եմ մենակ:

— Դե մոտիկ արի, մոտիկ:

Կարոն առաջ շարժվեց:

Խավարի մեջ լերկու մարդկալին ստվեր պինդ գրկեցին  
իրար:

Նրանք հրացանները մի կողմ ելին շպրտել ու իրար խըտ-  
տած հեկեկում ելին:

Ցուրտը քանի գնում սաստկանում եր, բայց նրանք կար-  
ծես չելին ել զգում, թե քամի կամ թիփի գոլություն ունի:

Եերկար չխոսեցին նրանք. վախենում ելին մարդ վրա հասնի

<sup>1</sup> Ո՞վ ես.

— Զենդ վոր քամին ինձ հասցրեց, Կարո ջան, ճանաչեցի  
ու սիրտս կտոր-կտոր ելավ: Իմ ղարավուլ վախտը շատ եմ ականջ  
դրել, թե տենամ բալքի դրւ լել ես ղարավուլ, կանչեմ, խոսամ. մի  
լերկու անգամ ել վախենալով, թաքուն լեկել եմ ձեր դիրքի մոտ-  
տեսել եմ ուրիշ մարդ ե...—Վժնց են, վժնց լերեխեքդ. Մարիամ  
բաջին վժնց ա...—հեծկլտում եր Հասանը...

Մառախուղը հետզհետե լետ եր քաշվում. լույսը բացվելու  
մոտ եր:

— Դե, Կարո ջան, ամեն ուրբաթ գիշեր թաքուն կգաս են  
մեծ կաղնի ծառի մոտ, մեծ թփի տակին ցորեն դրած կըլեմ,  
ցորենը կածես ամանիդ մեջն ու իմ տոպլրակը կղնես թփի տա-  
կին. հը... զգուշ... հենց արա, վոր տեսնող չլի, թե չե լերկու-  
սիս ել—վայն ա...

Բաժանվեցին:

Մի լերկու որից կոփմ սկսվեց: Գրգոված ամբոխը խելագա-  
րի նման կոտորում եր իրար ու վոչնչացնում ճամբին ընկած տ-  
մեն բան: Վառում եիին անտեր մնացած ալգիներն ու ավերում  
գոմերն ու ջրաղացները:

Դեմ առ դեմ ընկած դիրքերում արյուն եր հոսում...

Ուրբաթ իրիկուն, մութն ընկնելուն պես, Կարոն թեկի տակ  
դրեց ցորենի պարկը, վորի մեջ նրա կին Մարիամը Հասան քիր-  
վալի ու լերեխաների համար գուլպաներ, չոր միրդ ու մի մոր-  
թած հավ եր դրել, ու ճամբա ընկավ դեպի պալմանավորված տեղը:

Գիշեր եր:

Դիրքերում կոփմ դադարել եր, և տղաները հերթով հանգս-  
տանում եիին ու խոսում վաղվան հարձակման ծրագրի մասին:

Կարոն շատ զգուշ, կատվի քալլերով մոտեցավ թփին: Նրա  
սիրտը վանդակ զցած թոշունի պես թպլրտում եր: Ահա ցորենի  
պարկը, մի տղամարդու լավ շալակ, մոտ լերկու փութի:

Դատարկեց, բերած իրերը փաթաթեց պարկի մեջ ու դրեց  
պալմանավորված տեղը:

— Ա՛խ, Հասան ջան, լարար հիմի վմբդիլես...—զբնեց Կա-  
րոն ու պարկն ուսուծ ճամբա ընկավ դեպի տուն, շարունակ դե-  
պի լետ ու լետ նայելով, վոր մարդ չտեսնի:

Կոփմը քանի գնում, սաստկանում եր և ալն միջոցին, լերբ  
կողմերն իրար կոտորում եիին դաղազած, Կարոն ամեն ուրբաթ  
գնում եր գիշերով ցորեն բերելու...

1923 թ.

---

ԽԱՆՈԹ.—Այս պատմվածքը թարգմանված և վրացերեն լեզվով և տպա-  
ղբառն «Մնաթորի» ամսագրում: (Տես «Մնաթորի» № 7, 1927 թ.)

## ՊՐԱՇԵՆՆԻ

— Բա ես տեսակ ել զակոն կը լի՞... Դալամիս ծերովն ապրող մարդ եմ, ու սովետական իշխանությունը հացս կտրեց... իմ զբած պրաշենչան մինչև պալատ ու սենատ ա հասել ու գործեր շարժել աեղիցը, հիմի ինչ վոր գրում եմ, ժողովրդական դատարանը բրակ ա անում... Զի ընդունում ելի, չի ընդունում... Բայն են հնարել—նացիոնալիզացիա:

Հին գատարանի շինովնիկի կարտուզը մինչև ականջակոթերը խրած, մաշված ու ցեցը կերած մունդիրն ուսերին գցած, միկիթան Սերգովի դուքտանի առաջը «Ն» տառի պես քարին պըպղած, զանգատվում եր իր վիճակից քաշալ Մարկոսը, նրա աշքերը փոս ելին ընկել, ներքելի կոպերի տակերը գատարկ պարկերի նման կախվել ելին, ու ծայրն ուռած ու կապած քիթը, վոր մի ժամանակ կարմիր եր, տխուր ու տրտում, իշի ներքելի պոտշի պես կախվել եր ու կարծես իրեն միմիթարելիս լիներ մի բանով միայն, վոր սպիրտի հոտը կաշում ե իրեն: Սպիրտ, ողի, վորին նա շատ վաղուց եր կարոտելի

Թաշալ Մարկոսը, վոր մի ժամանակ Մարկոս-բեկ եր և գավառապետի գրասենչակի գրագիր, կամ ինչպես ասում ելին՝ «ուշիղդնի նաշանիկի դավթարխանի պիսր, կամ սեկլետար», իր ժամանակին անուն հանած «պրաշեննի» գրող եր: Գավառի ըոլոր դզուզերից, ով ինչ գործ վոր ունենար, հենց վոր իշներ գավառական փոքրիկ քաղաքը, անպատճառ պետք և Մարկոս-բեղին դիմեր, վոր նա մի խելք սովորեցներ, մի ճամբար ցուց տար: Դե, իհարկե, սրա հետ միասին Մարկոս-բեգի համար միշտ հետները բերում ելին հավ, ձու, գաթա, մեղր, ողի. իսկ թե գործը «մեծ» եր—գառն ու թոխլին կար ու կար:

Հիմի Մարկոս-բեգին տեղակ անող չկա: Նրան մոռացել են, դեն են զցել, աղբահորն են շպրտել: Նոր-նոր մտրդիկ են դուրս

եկել, վորոնք հիմարի պես գյուղացոց խնդիրները կատարում են առանց փողի, նրանց բան են սովորեցնում, ամեն գործ հեշտացնում են, փոխանակ դժվարացնելու, վոր միջիցը մի քանի գոռշ դուրս գա, կամ գոնե մի յերկու քեֆ ել և անեն նրանց հաշվին: Ա՛խ, ա՛խ, փուչ աշխարհ...

Ես ամենը—վհջինչ դատարանը, գործկոմն ու մասցած բոլոր հիմնարկները, բոլոր խնդիրներն ու դիմումները հայերեն լեզով են ընդունում: իսկ քաջալ-Մարկոսը հայերենը փալասով եքոնում:

— Նիկոլալի ժամանակը հո յերանելի յեր ու յերանելի, բայց ելի ես բալշեկիների վրա—դաշնակները լտվ ելին.—վիրնթ-փնթում եր քաջալ Մարկոսը:—Մարդիկ կարդին ոռուսերեն խոսում, գրում ելին. հալա պրիստավ Խուրջուդ-բեգն ել ինձ պիսար շինեց: Ազգասեր մարդիկ ելին, բայց սիրտները լին եր... Ափսոս չելին... Մարդիկ Հայաստան ելին ստեղծում ու ես թուրքերին մաքրում ելին, վոր յերկիրը խավարից ազատվի: Թե չե, սրանք Ի՞ն... Թուրքից ու ոռուսից խնդիրները ոռուսերեն են ընդունում, հետներն ել իրենց լեզվով խոսում, ու հենց վոր բանը գալիս և հային, են ել ինձ պես հային, վոր հին մարդ եմ ու հայերեն գրել-կարդալ չգիտեմ, չեն թողնում թե ոռուսերեն գրեմ, կամ խոսեմ:

Զե, չե... Մի մարդ իմանա, թե հայերեն ել խնդիր կզբվի, մի հալա ասա տեսնեմ, թե վոնց ես գրում—«Յեվո վիսոկորլա-դարողիյու գոսպոդինոււ...», հը՞ն...—քմծիծաղ տվեց քաջալ Մարկոսն ու ձեռին բռնած ճիպոտով սկսեց չանգոթորել հողը, աշխատելով տառերը կանոնավոր գուրք բերել:

Նա այնքան եր հափշտակվել իր գրով, վոր չնկատեց, թե ինչպես նրան մոտեցավ Զախմախլուի քրոխվեն, վոր յեկել եր իրենց գլուխի գործկոմի վրա գանգատ անելու, վորը նրա ձին ու սալլը կոռ եր ուղարկել:

— Ետ Ի՞նչ բանի յես, Մարկոս-բեդ. բարով:

— Ա՛յ, աստծու հազար բարին քեզ, քչոխվա ջան: Ի՞նչ բանի պիտի ըլեմ. պրաշենյա յեմ գրում:

— Պրաշեննի՞... Հողի վրա...

— Բա վճնց անեմ. գրում եմ, վոր չմոռանամ, ով գիտե, աշխարհք և, վայ թե փոխվեց... Ո՞ւր ես յեկել:

— Գանգատի յեմ եկել, գանգատի. հենց հորդ հոգին կսիրես, ինձ համար մի պրաշեննի գրի. ես ել քու ջափահախին+ առ:

Այս ասելով՝ քրոխվեն արխալուղի գրպանից հանեց մի գիշեալու շիշ լիքն ողի և տվեց քաջալ-Մարկոսին:

Քաջալ-Մարկոսի հանդած աչքերը մեկեն փալեցին, իսկ քիթը տեղիցը շարժվեց, իր ծակերից մեկի մեջ առնելով շշերանը:

— Ուխանլ... ինչ ել թունդ հոտ ունի ե՛... Ե՛լի, դու, ախպեր, ելի դուք, ետ հին դուլլուղչիներդ վոր չինեք, մենք ջուրը թափելու կդառնանք, ետ դուքանիցը թուղթ ու դալամը բեր, մի պրաշենյա գրեմ, մի պրաշենյա, վոր ձեր իսպալկոմին Սիրիը քշեն:

Մինչի քրոխվի թուղթ ու թանաք բերելը, քաջալ-Մարկոսը գլխին քաշեց ողու շիշը և կիսից ավելին դատարկեց:

Ամեն բան կարգին եր:

Քաջալ-Մարկոսը թուղթը ծնկան ծերին գրեց, քրոխվեն ել կողքին մի վոտի վրա չոքեց ու թանաքամանը դեմ արավ:


«Յեվո վիսոկոպրեվասխաղիտելստվու— սկսեց քաջալ-Մարկոսը— գոսպողինու ուկեղդնոմու նաշալնիկու, իսպալկոմու, կոմսոմոլու, յաչելիկ ի պրոչելե, պրոչելե, պրոչելե... պրոշենիկե»...

Խնդիրը շատ լավ եր գրած, բայց զարմանալին այն եր, վոր յերեկոյան քաջալ-Մարկոսին հրավիրեցին գործկոմ և գոմը զցեցին, վորտեղ քրոխվեն նրան հայութում եր ու յերբ տեսավ՝ հարձակվեց վրեն ու գոռաց.—

— Գլխովդ գիպչի քու գրած պրաշեննին, ես ի՞նչ ոյին բերիր գլուխս, թաղա զակոնը վոր չես գիդում, ի՞նչ ես զուր տեղն արագս խմում, հ՞ը...— ասեց ու առւր թե կաաս:

Առ քեզ պրաշեննի, առ քեզ պրաշեննի...

1924 թ.






## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>b2</i>
Դլաստը	5
Կապիտալը	8
Սպեց Ավագը	11
Դեպի Կարմիր բանակ	21
Ընկեր խողարածը	28
«Ակտիվն» ու Հելդարը	34
Նազանի դատը	62
Պապը	69
Անիծված հողը	82
Սոլոթը	103
Դրաստի	111
Դես խան կորեկը	116
Թշնամիները	119
Գրաշեննի	123







Գիրք Ե 75 կոշտ., 8 մամ. (Մ.)




---

Մ. Դարբինյան  
ПРОБУЖДАЮЩАЯСЯ ДЕРЕВНЯ.  
Сборник повестей

Госиздат ССР Армении  
Эревань, 1930 г.

---





(364)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038168

A ii  
38168

